



**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Պ Ա Շ Տ Ո Ն Ա Կ Ա Ն Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր**

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԱՄՆՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ 04(368) «22» մարտի 2019թ.

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

	ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԻՆ	
	ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԸ	
54	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԱՀ ՀՕ-1-Ն օրենքը	
55	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԱՀ ՀՕ-2-Ն օրենքը	
56	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԱՀ ՀՕ-3-Ն օրենքը	
57	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ԱՀ ՀՕ-4-Ն օրենքը	
58	««Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ԱՀ ՀՕ-5-Ն օրենքը	
59	««Դատախազության մասին» Արցախի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԱՀ ՀՕ-6-Ն օրենքը	
60	««Պետական կենսաթոշակների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ ՀՕ-7-Ն օրենքը	
	ՅՈԹԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ	
	ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ	
61	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 1-ի N 209-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 151-Ն որոշումը	
62	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 21-ի N 504 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 153-Ն որոշումը	
63	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 154-Ն որոշումը	
64	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2004 թվականի մարտի 25-ի N 118 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 155-Ն որոշումը	
65	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 26-ի N 515-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 156-Ն որոշումը	
66	«Արցախի Հանրապետության արդարադատության նախարարության «Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության	

	<p>նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդ», «Քաղաքացիական կացության ակտերի գրանցման վճարովի ծառայություններից արտաբյուջետային հաշվում գոյացած միջոցների հաշվին նյութական խրախուսման և համակարգի զարգացման ծախսեր», «Նոտարի կողմից մատուցվող վճարովի ծառայություններից արտաբյուջետային հաշվում գոյացած միջոցների հաշվին նյութական խրախուսման և համակարգի զարգացման ծախսեր» և «Իրավաբանական անձանց պետական գրանցման վճարովի ծառայություններից արտաբյուջետային հաշվում գոյացած միջոցների հաշվին նյութական խրախուսման և համակարգի զարգացման ծախսեր» ծրագրերի գծով արտաբյուջետային հաշիվների միջոցների ծախսման 2019 թվականի նախահաշիվները և գնումների պլանները հաստատելու մասին» ԱՀ կառավարության N 157-Ն որոշումը</p>	
67	<p>«Արցախի Հանրապետության ոստիկանության «Ճանապարհային ոստիկանության նյութական խրախուսման և տեխնիկական զարգացման ֆոնդ» ծրագրի գծով արտաբյուջետային հաշվի միջոցների ծախսման 2019 թվականի նախահաշիվը և գնումների պլանը հաստատելու մասին» ԱՀ կառավարության N 158-Ն որոշումը</p>	
68	<p>«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի «Քաղաքացիական ծառայության կրտսեր պաշտոն զբաղեցնելու հավաստագիր ստանալու համար թեստավորման անցկացում և համակարգի զարգացում» ծրագրի գծով արտաբյուջետային հաշվի միջոցների ծախսման 2019 թվականի նախահաշիվը և գնումների պլանը հաստատելու մասին» ԱՀ կառավարության N 159-Ն որոշումը</p>	
69	<p>«Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարության «Նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդ» ծրագրի գծով արտաբյուջետային հաշվի միջոցների ծախսման 2019 թվականի նախահաշիվը և գնումների պլանը հաստատելու մասին» ԱՀ կառավարության N 160-Ն որոշումը</p>	
70	<p>«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 177-Ն որոշումը</p>	
71	<p>«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2003 թվականի օգոստոսի 26-ի N 248 որոշման մեջ լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ԱՀ կառավարության N 179-Ն որոշումը</p>	
72	<p>«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունվարի 19-ի N 9-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» ԱՀ կառավարության N 180-Ն որոշումը</p>	
	<p align="center">ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ</p>	
73	<p>ԱՀ Գերագույն դատարանի քաղաքացիական գործ ԸԲԴ/2638/02/17 որոշումը</p>	

Ընդունված է 2019 թվականի
փետրվարի 27-ին

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2008 թվականի դեկտեմբերի 17-ի քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 1-ին հոդվածի 1-ին մասում՝

1) «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրությամբ» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության Սահմանադրությամբ» բառերով.

2) «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատական օրենսգրքով» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության դատական օրենսգրքով» բառերով:

Հոդված 2. Օրենսգրքի 7-րդ հոդվածի 1-ին մասում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրությունը» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության Սահմանադրությունը» բառերով:

Հոդված 3. Օրենսգրքի 11-րդ հոդվածի՝

1) վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 11. Ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիությունը և անձնական ազատությունը».

2) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Յուրաքանչյուր ոք ունի ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության և անձնական ազատության իրավունք»:

3) 3-րդ մասի երկրորդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Եթե անձն անձնական ազատությունից զրկվել է իրավասու մարմին ներկայացվելու նպատակով, երբ առկա է նրա կողմից հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկած, կամ երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է հանցանքի կատարումը կամ դա կատարելուց հետո անձի փախուստը կանխելու նպատակով, և անձին ազատությունից զրկելու պահից ողջամիտ ժամկետում, սակայն ոչ ուշ, քան 72 ժամվա ընթացքում դատարանը որոշում չի կայացնում անազատության մեջ նրան հետագա պահելը թույլատրելու մասին, ապա նա անհապաղ ազատ է արձակվում»:

4) 6-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6. Անձի խուզարկությունը և քննումը, ինչպես նաև ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիությունը կամ անձնական ազատությունը սահմանափակող այլ դատավարական գործողություններ կատարվում են սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում և կարգով»:

Հոդված 4. Օրենսգրքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի՝

1) երկրորդ պարբերության 1-ին կետում «անձնական» բառը փոխարինել «մասնավոր» բառով.

2) երրորդ պարբերությունում.

ա. «ազգային անվտանգության և» բառերը փոխարինել «պետական անվտանգության» բառերով.

բ. «կարգի» բառից հետո լրացնել «կամ բարոյականության, անչափա-
հասաների կամ արդարադատության շահերի» բառերը:

Հոդված 5. Օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ
խմբագրությամբ.

«1. Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր
գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության
իրավունք:»:

Հոդված 6. Օրենսգրքի 20-րդ հոդվածի՝

1) 1-ին մասում «վերաբերյալ» բառից հետո լրացնել «, եթե ողջամտորեն
ենթադրում է, որ այն հետագայում կարող է օգտագործվել իր կամ նրանց դեմ»
բառերը.

2) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Անձը, որին վարույթն իրականացնող մարմինն առաջարկում է
հայտնել տեղեկություններ կամ տրամադրել նյութեր, իրավունք ունի
հրաժարվելու նման տեղեկություններ հայտնելուց կամ նյութեր
տրամադրելուց, եթե ողջամտորեն ենթադրում է, որ դրանք հետագայում
կարող են օգտագործվել իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների դեմ:»:

Հոդված 7. Օրենսգրքի 49-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետում, 54-րդ
հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետում, 56-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետում, 58-
րդ հոդվածի 5-րդ մասի 5-րդ կետում, 60-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետում,
68-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետում, 70-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ
կետում, 72-րդ հոդվածի 6-րդ մասի 4-րդ կետում, 74-րդ հոդվածի 5-րդ մասի 5-
րդ կետում, 76-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետում, 77-րդ հոդվածի 2-րդ
մասի 4-րդ կետում, 78-րդ հոդվածի 4-րդ մասի 6-րդ կետում, 79-րդ հոդվածի 4-
րդ մասի 6-րդ կետում, 80-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետում, 82-րդ
հոդվածի 3-րդ մասի 1-ին կետում և 326-րդ հոդվածի 1-ին ու 6-րդ մասերում
«օրինական» բառը փոխարինել «իրավաչափ» բառով:

Հոդված 8. Օրենսգրքի 58-րդ հոդվածի 2-րդ մասի՝

1) 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) ձեռքակալվելուց հետո իրեն հասկանալի լեզվով հետաքննության
մարմնից, քննիչից կամ դատախազից անհապաղ ստանալու իր
իրավունքների, ինչպես նաև իրեն ազատությունից զրկելու պատճառների և
հիմքերի մասին գրավոր ծանուցում և պարզաբանում.».

2) 3-րդ կետում «անմիջապես» բառը փոխարինել «անհապաղ» բառով.

3) 9-րդ կետի առաջին պարբերությունը շարադրել հետևյալ
խմբագրությամբ.

«9) որ իր ընտրած անձը, իսկ զինձառայող լինելու դեպքում՝ նաև
զինվորական մասի հրամանատարությունը արգելանքի վերցվելուց հետո
անհապաղ, բացառությամբ սույն օրենսգրքի 139-րդ հոդվածի 7-րդ մասով
նախատեսված դեպքերի, հեռախոսակապի կամ հնարավոր այլ միջոցով
տեղեկացվի իրեն արգելանքի տակ պահելու տեղի և հիմքերի մասին:»:

Հոդված 9. Օրենսգրքի 60-րդ հոդվածի 2-րդ մասի՝

1) 1-ին և 2-րդ կետերում «անմիջապես» բառը փոխարինել «անհապաղ»
բառով.

2) 9-րդ կետի առաջին պարբերությունը շարադրել հետևյալ
խմբագրությամբ.

«9) արգելանքի վերցվելուց հետո անհապաղ, բացառությամբ սույն
օրենսգրքի 139-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսված դեպքերի, քրեական
վարույթն իրականացնող մարմնի միջոցով իր ընտրած անձին, իսկ

զինծառայող լինելու դեպքում՝ նաև զինվորական մասի հրամանատարությամբ տեղյակ պահել արգելանքի տակ պահելու իր տեղի և հիմքերի մասին»:

Հոդված 10. Օրենսգրքի 81-րդ հոդվածի՝

1) 3-րդ մասի 6-րդ կետում «կարգադրություններին» բառից առաջ լրացնել «իրավաչափ» բառը.

2) 5-րդ մասի.

ա. 2-րդ կետում «տալուց» բառից հետո լրացնել «, եթե ողջամտորեն ենթադրում է, որ այն հետագայում կարող է օգտագործվել իր կամ նրանց դեմ» բառերը,

բ. 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) հրաժարվել նյութեր և տեղեկություններ ներկայացնելուց, եթե ողջամտորեն ենթադրում է, որ դրանք հետագայում կարող են օգտագործվել ի վնաս իրեն, իր ամուսնու կամ մերձավոր ազգականներին.»:

Հոդված 11. Օրենսգրքի 107-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետում, 181-րդ հոդվածի 1-3-րդ մասերում, 239-րդ հոդվածի 4-րդ մասում «անձնական» բառը փոխարինել «մասնավոր» բառով:

Հոդված 12. Օրենսգրքի 114-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Ապացույցներ ձեռք բերելիս էական են քննչական կամ դատավարական գործողությունների կատարման կարգի այն խախտումները, որոնք դրսևորվել են քրեական դատավարության մասնակիցների հիմնական իրավունքների և ազատությունների կամ քրեական դատավարության սկզբունքների խախտմամբ.»:

Հոդված 13. Օրենսգրքի 138-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետում «որը» բառից հետո լրացնել «հիմնավոր կերպով» բառերը:

Հոդված 14. Օրենսգրքի 139-րդ հոդվածում լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-8-րդ մասեր.

«3. Մինչև ձեռք բերված արձանագրությունը նրան հայտարարելն արգելանքի վերցված անձն իրավունք ունի՝

1) իմանալու իրեն ազատությունից զրկելու պատճառը.

2) պահպանելու լռություն.

3) ստանալու իր իրավունքների մասին բանավոր պարզաբանում.

4) ստանալու իր իրավունքների և պարտականությունների մասին գրավոր ծանուցում և պարզաբանում.

5) իր ընտրած անձին տեղեկացնելու իր գտնվելու վայրի մասին.

6) հրավիրելու փաստաբան.

7) իր պահանջով ենթարկվելու բժշկական հետազոտման:

Անկախ ձեռք բերված արձանագրությունը անձին հայտարարելու հանգամանքից՝ փաստացի արգելանքի վերցվելուց չորս ժամ հետո անձը ձեռք է բերում կասկածյալի վերաբերելի իրավունքները և պարտականությունները:

4. Սույն հոդվածի 3-րդ մասի 4-7-րդ կետերով սահմանված իրավունքները ծագում են հետաքննության մարմին կամ քննիչի մոտ բերելու պահից:

5. Մինչև ձեռք բերված կարգավիճակ ստանալն արգելանքի վերցված անձը պարտավոր է՝

1) ենթարկվել վարույթն իրականացնող մարմնի իրավաչափ կարգադրություններին.

2) չխոչընդոտել անձնական խուզարկությանը.

3) ենթարկվել բժշկական ստուգման և մատնադրոշման, ինչպես նաև լուսանկարվել և փորձաքննության համար հանձնել սույն օրենսգրքով նախատեսված նմուշներ:

6. Սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված իրավունքների իրականացումն ապահովելու նպատակով՝

1) արգելանքի վերցնող անձը պարտավոր է արգելանքի վերցնելուց հետո անհապաղ արգելանքի վերցված անձին բանավոր պարզաբանել նրան ազատությունից զրկելու պատճառները, ինչպես նաև սույն հոդվածի 3-րդ և 5-րդ մասերով նախատեսված նրա իրավունքները և պարտականությունները.

2) վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է արգելանքի վերցված անձին վարույթն իրականացնող մարմին բերելուց հետո անհապաղ նրան տրամադրել նրա ստորագրությամբ իր իրավունքների և պարտականությունների ցանկը, ազատությունից զրկելու պատճառների մասին գրավոր ծանուցում և պարզաբանում, ապահովել արգելանքի վերցված անձի գտնվելու վայրի մասին նրա ընտրած անձին տեղեկացնելը և փաստաբան հրավիրելը, արգելանքի վերցված անձի պահանջի դեպքում ապահովել նրա բժշկական հետազոտումը, չարգելել փաստաբանի տեսակցությունն արգելանքի վերցված անձի հետ, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:

7. Վարույթն իրականացնող մարմինն անմիջական վերադասի գրավոր համաձայնությամբ կարող է հետաձգել սույն հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետով սահմանված նվազագույն իրավունքի իրականացումն անձին արգելանքի վերցնելու պահից առավելագույնը 12 ժամով, եթե առկա է հիմնավոր ենթադրություն, որ այդ իրավունքի անհապաղ իրականացումը կարող է խոչընդոտել հանցագործության կանխմանը կամ խափանմանը կամ հանգեցնել ապացույցների ոչնչացման կամ վնասման:

8. Սույն հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետով սահմանված իրավունքի իրականացման հետաձգման մասին անհապաղ կազմվում է արձանագրություն՝ դրանում շարադրելով այդ իրավունքի իրականացումը հետաձգելու պատճառները: Արձանագրությունն ստորագրվում է վարույթն իրականացնող մարմնի և արգելանքի վերցված անձի կողմից: Վերջինս իրավունք ունի պահանջելու դրա մեջ մտցնելու իր դիտողությունները:»:

Հոդված 15. Օրենսգրքի 140-րդ հոդվածում լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ մաս.

«4. Մինչև կասկածյալի կարգավիճակ ստանալն արգելանքի վերցված անձի նկատմամբ տարածվում են սույն օրենսգրքի 139-րդ հոդվածի 3-8-րդ մասերի դրույթները:»:

Հոդված 16. Օրենսգրքի 142-րդ հոդվածի 1-ին մասի առաջին նախադասությունում «պատճենը» բառից հետո լրացնել «այն կազմելուց հետո անհապաղ, բայց ոչ ուշ, քան մեկ ժամվա ընթացքում» բառերը:

Հոդված 17. Օրենսգրքի 143-րդ հոդվածի 1-ին մասում «ազատման» բառից առաջ լրացնել «անհապաղ» բառը:

Հոդված 18. Օրենսգրքի 146-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Կալանավորումը մեղադրյալի նկատմամբ կարող է կիրառվել միայն այն դեպքում, երբ կա հիմնավոր կասկած, որ նա կատարել է այնպիսի հանցանք, որի համար նախատեսվող ազատազրկման ձևով պատժի առավելագույն ժամկետը մեկ տարուց ավելի է, և կան բավարար հիմքեր ենթադրելու, որ մեղադրյալը կարող է կատարել սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված որևէ գործողություն:»:

Հոդված 19. Օրենսգրքի 181-րդ հոդվածի վերնագրում, 3-րդ ու 4-րդ մասերում «Անձնական» բառը փոխարինել «Մասնավոր» բառով:

Հոդված 20. Օրենսգրքի 205-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի.

ա. 1-ին կետում «քննիչին» բառից առաջ և «գործը» բառից հետո լրացնել «իրեն ենթակա» բառերը,

բ. 2-րդ կետում «հետևում է» բառերից հետո լրացնել «իրեն անմիջականորեն ենթակա» բառերը,

գ. 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) իրեն անմիջականորեն ենթակա քննիչներին ցուցումներ է տալիս իրենց վարույթում գտնվող քրեական գործերով առանձին քննչական գործողություններ կատարելու վերաբերյալ»,

դ. 4-րդ կետում «հանձնարարում է» բառերից հետո լրացնել «իրեն ենթակա» բառերը.

2) 2-րդ մասում «մասնակցել» բառից հետո լրացնել «իրեն անմիջականորեն ենթակա» բառերը:

Հոդված 21. Օրենսգրքում լրացնել հետևյալ բովանդակությամբ 205.1-ին հոդված.

«Հոդված 205.1. Քրեադատավարական վերադասությունը նախաքննության մարմնում

1. Քննչական բաժնի պետն իրեն անմիջականորեն ենթակա քննիչի անմիջական վերադասն է:

2. Նախաքննության մարմնի ղեկավարի տեղակալի անմիջական վերադասը նախաքննության տվյալ մարմնի ղեկավարն է:

3. Նախաքննության մարմնի որևէ ստորաբաժանման կազմում չգտնվող ստորաբաժանման պետի անմիջական վերադասը նախաքննության մարմնի ղեկավարն է կամ նրա այն տեղակալը, որի համակարգման ներքո է տվյալ ստորաբաժանումը:

4. Նախաքննության մարմնի ստորաբաժանման պետի տեղակալի անմիջական վերադասը տվյալ ստորաբաժանման պետն է:

5. Նախաքննության մարմնի ստորաբաժանման պետի որևէ տեղակալի համակարգման ներքո չգտնվող ենթաստորաբաժանման պետի անմիջական վերադասը տվյալ ստորաբաժանման պետն է:

6. Նախաքննության մարմնի ստորաբաժանման պետի տեղակալի համակարգման ներքո գտնվող ենթաստորաբաժանման պետի անմիջական վերադասը ստորաբաժանման պետի տվյալ տեղակալն է:

7. Նախաքննության մարմնի՝ ենթաստորաբաժանում չունեցող ստորաբաժանման պետի տեղակալի համակարգման ներքո գտնվող քննիչների անմիջական վերադասը տվյալ տեղակալն է, իսկ այդ ստորաբաժանման մյուս քննիչների անմիջական վերադասը տվյալ ստորաբաժանման պետն է:

8. Նախաքննության մարմնի ղեկավարին կամ դրա որևէ ստորաբաժանման պետին առընթեր քննիչների անմիջական վերադասը նախաքննության տվյալ մարմնի ղեկավարն է կամ դրա համապատասխան ստորաբաժանման պետը:

9. Քննիչը տվյալ վարույթի շրջանակներում ունի մեկ անմիջական վերադաս:»:

Հոդված 22. Օրենսգրքի 219-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Հարցաքննությունից առաջ քննիչը հավաստիանում է վկայի ինքնության մեջ, տեղեկացնում, թե ինչ փաստի առիթով հարուցված քրեական գործով է նա կանչվել, և նախազգուշացնում է գործով նրան հայտնի ամեն ինչ պատմելու պարտականության, ինչպես նաև ցուցմունք տալուց

հրաժարվելու, սուտ ցուցմունք տալու համար սահմանված քրեական պատասխանատվության մասին, գրավոր տեղեկացնում է իր, ամուսնու և մերձավոր ազգականների վերաբերյալ ցուցմունք չտալու նրա իրավունքի մասին, եթե վկան ողջամտորեն ենթադրում է, որ այն հետագայում կարող է օգտագործվել իր կամ նրանց դեմ, ինչպես նաև այն մասին, որ նրա ցուցմունքը կարող է օգտագործվել որպես ապացույց: Դրանից հետո քննիչը պարզում է կասկածյալի, մեղադրյալի, տուժողի հետ վկայի փոխհարաբերության բնույթը և սկսում է հարցաքննությունը:»:

Հոդված 23. Օրենսգրքի 227-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Առերեսման սկզբում ճշտվում է, թե արդյոք անձինք, որոնց միջև կատարվում է առերեսում, ճանաչում են իրար և ինչպիսի հարաբերությունների մեջ են միմյանց հետ: Առերեսման կանչված անձը գրավոր տեղեկացվում է իր, ամուսնու կամ իր մերձավոր ազգականների վերաբերյալ ցուցմունք չտալու իր իրավունքի մասին, եթե ողջամտորեն ենթադրում է, որ այն հետագայում կարող է օգտագործվել իր կամ նրանց դեմ: Վկան և տուժողը նախազգուշացվում են ցուցմունք տալուց հրաժարվելու, սուտ ցուցմունք տալու համար սահմանված պատասխանատվության մասին:»:

Հոդված 24. Օրենսգրքի 232-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Եթե ճանաչողը վկա կամ տուժող է, ապա նա նախապես նախազգուշացվում է ցուցմունք տալուց հրաժարվելու, սուտ ցուցմունք տալու համար սահմանված պատասխանատվության մասին, ինչպես նաև գրավոր տեղեկացվում է իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների վերաբերյալ ցուցմունք չտալու իր իրավունքի մասին, եթե ողջամտորեն ենթադրում է, որ այն հետագայում կարող է օգտագործվել իր կամ նրանց դեմ:»:

Հոդված 25. Օրենսգրքի 233-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Եթե ճանաչողը վկա կամ տուժող է, ապա նա նախապես նախազգուշացվում է ցուցմունք տալուց հրաժարվելու, սուտ ցուցմունք տալու համար սահմանված պատասխանատվության մասին, ինչպես նաև գրավոր տեղեկացվում է իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների վերաբերյալ ցուցմունք չտալու իր իրավունքի մասին, եթե ողջամտորեն ենթադրում է, որ այն հետագայում կարող է օգտագործվել իր կամ նրանց դեմ:»:

Հոդված 26. Օրենսգրքի 289-րդ հոդվածի 1-ին և 293-րդ հոդվածի 2-րդ մասերում «սահմանադրական» բառը փոխարինել «հիմնական» բառով:

Հոդված 27. Օրենսգրքի 300-րդ հոդվածում «կատարվում» բառից առաջ լրացնել «, բացառությամբ սույն օրենսգրքի 300.1-ին հոդվածով նախատեսված դեպքերի,» բառերը:

Հոդված 28. Օրենսգրքում լրացնել հետևյալ բովանդակությամբ 300.1-300.5-րդ հոդվածներ.

«Հոդված 300.1. Ձերբակալման բողոքարկման ընթացակարգը

1. Ձերբակալումը կարող է բողոքարկվել դատական կարգով: Ձերբակալման բողոքարկումն իրականացվում է սույն գլխով սահմանված կարգով՝ սույն հոդվածով սահմանված առանձնահատկություններով:

2. Ձերբակալման դեմ բողոք կարող են ներկայացնել արգելանքի վերցված անձը, նրա օրինական ներկայացուցիչը և պաշտպանը:

3. Ձերբակալման դեմ բողոք կարող է ներկայացվել անձին փաստացի արգելանքի վերցնելու պահից մեկամսյա ժամկետում:

Հոդված 300.2. Ձերբակալման դեմ բողոքի բովանդակությունը

1. Ձերբակալման դեմ բողոքը պարունակում է՝
 - 1) իրավասու դատարանի անվանումը.
 - 2) բողոքարկողի անունը, հայրանունը, ազգանունը, ունենալու դեպքում՝ կարգավիճակը.
 - 3) բողոքը դատարան ներկայացնելու տարին, ամիսը, օրը, ժամը.
 - 4) առկայության դեպքում՝ գործի վարույթի համարը.
 - 5) առկայության դեպքում՝ ձերբակալման որոշումը կամ արձանագրությունը.
 - 6) բողոքի փաստարկները և պահանջը.
 - 7) սույն օրենսգրքի 300.4-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետը հիմնավորող փաստերը.
 - 8) բողոքին կցվող նյութերի ցանկը:

Հոդված 300.3. Ձերբակալման դեմ բողոքը վերադարձնելը և բողոքն առանց քննության թողնելը

1. Եթե բողոքը չի համապատասխանում սույն օրենսգրքի 300.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-5-րդ և 8-րդ կետերի պահանջներին, ապա դատարանը վերադարձնում է բողոքը այն ներկայացրած անձին՝ նրան հնարավորություն ընձեռելով երեք աշխատանքային օրվա, իսկ սույն օրենսգրքի 300.4-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքում՝ երեք ժամվա ընթացքում շտկելու այդ սխալները և կրկին ներկայացնելու բողոքը: Բողոքում առկա սխալները սահմանված ժամկետում վերացնելու և այն դատարան կրկին ներկայացնելու դեպքում բողոքը դատարանում ընդունված է համարվում սկզբնական ներկայացման օրը:

2. Բողոքը երեք աշխատանքային օրվա, իսկ սույն օրենսգրքի 300.4-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքում՝ երեք ժամվա ընթացքում թողնվում է առանց քննության, եթե պահպանված չէ սույն օրենսգրքի 300.1-ին և 300.2-րդ հոդվածներով սահմանված որևէ պահանջ, բացառությամբ սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքերի:

Հոդված 300.4. Ձերբակալման դեմ բողոքի քննության կարգը

1. Դատարանը ձերբակալման դեմ բողոքը քննում և որոշում է կայացնում այն ստանալու պահից տասնհինգօրյա ժամկետում, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ և 4-րդ մասերով սահմանված դեպքերի: Դատարանի կողմից բողոքը քննվում է միանձնյա, դռնփակ դատական նիստում:

2. Եթե բողոքը ներկայացվել է անձի անազատության մեջ գտնվելու ժամանակ՝ փաստացի արգելանքի վերցնելու պահից 60 ժամվա ընթացքում, ապա դատարանը ձերբակալման դեմ բողոքը քննում և որոշում է կայացնում 24 ժամվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան անձին փաստացի արգելանքի վերցնելու պահից յոթանասուններկուերորդ ժամը, բացառությամբ սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքերի:

3. Եթե մինչև ձերբակալման դեմ բողոքը ներկայացնելը դատարան է ներկայացվել կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ միջնորդություն, ապա ձերբակալման դեմ բողոքը պետք է ներկայացվի դատական նիստի տեղի և ժամանակի մասին պատշաճ ձևով ծանուցվելուց հետո՝ մինչև դատական նիստը կամ դատական նիստի ընթացքում:

4. Դատարանը ձեռքարկված դեմ բողոքը քննում և որոշում է կայացնում՝

1) անհապաղ, եթե բողոքում առերևույթ հիմնավորվել է, որ առկա է անձի կյանքին սպառնացող վտանգ, կամ նա ենթարկվել է խոշտանգման.

2) տվյալ անձի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ միջնորդության առկայության դեպքում՝ դրա քննարկման հետ միաժամանակ:

5. Ձեռքարկված դեմ բողոքի քննությունն իրականացվում է բողոքը ներկայացրած անձի կամ նրա օրինական ներկայացուցչի կամ պաշտպանի պարտադիր մասնակցությամբ:

6. Դատական նիստին մասնակցող անձինք ունեն բացատրություններ տալու իրավունք: Վարույթի հարուցման մասին որոշմամբ դատարանը բողոքարկվող ակտը կայացրած քրեական հետապնդման մարմնից կարող է պահանջել դատարան ներկայացնել բողոքին վերաբերող նյութեր կամ ներկայանալ դատական նիստին:

7. Ձեռքարկված դեմ բողոքի քննության մասնակցության իրավունք ունեն բողոքարկվող ակտը կայացրած կամ անձին արգելանքի վերցրած քրեական հետապնդման մարմինը և հսկող դատախազը: Սույն հոդվածի 6-րդ մասում նշված դեպքում քրեական հետապնդման մարմնի մասնակցությունը դատական նիստին պարտադիր է:

Հոդված 300.5. Ձեռքարկված դեմ բողոքի քննության արդյունքում կայացվող որոշումները

1. Ձեռքարկված դեմ բողոքի քննության արդյունքում դատարանը որոշմամբ բավարարում կամ մերժում է բողոքը:

2. Անձն անհապաղ ազատ է արձակվում, եթե՝

1) առկա է անձի կյանքին սպառնացող վտանգ, և չի հիմնավորվել այդ վտանգը չեզոքացնելու հնարավորությունը.

2) դատարանը հաստատում է ձեռքարկված ոչ իրավաչափ լինելու փաստը, բացառությամբ այն դեպքի, երբ ձեռքարկված դեմ բողոքը քննվել է կալանքի միջնորդության հետ միաժամանակ, և միջնորդությունը բավարարվել է:

3. Բողոքը բավարարելու դեպքում դատարանը հաստատում է ձեռքարկված ոչ իրավաչափ լինելու փաստը և

1) խախտման փաստի կապակցությամբ իրավական ընթացակարգ սկսելու նպատակով դիմում է իրավասու մարմիններ կամ պաշտոնատար անձանց կամ

2) անհրաժեշտության դեպքում իրավասու մարմիններին պարտավորեցնում է միջոցներ ձեռնարկել ձեռքարկված անձի իրավունքների խախտումները վերացնելու ուղղությամբ:

4. Ձեռքարկված դեմ բողոքի քննության արդյունքում կայացված որոշման պատճենն անհապաղ հանձնվում կամ ուղարկվում է բողոքը ներկայացրած անձին, բողոքարկվող ակտը կայացրած (կատարած) մարմնին, քննիչին և հսկող դատախազին:

5. Սույն հոդվածով դատարանի կայացրած որոշումների դեմ բողոքները դատախազի, արգելանքի վերցված անձի, նրա պաշտպանի կամ օրինական ներկայացուցչի կողմից բերվում են վերաքննիչ դատարան անմիջականորեն, որոշում կայացրած դատարանի, ձեռքարկվածներին պահելու վայրի, կալանավորվածներին պահելու վայրի կամ ուղղիչ հիմնարկի վարչակազմի միջոցով:»:

Հոդված 29. Օրենսգրքի 351-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1) իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների վերաբերյալ ցուցմունք տալուց հրաժարվելու նրա իրավունքը, եթե ողջամտորեն ենթադրում է, որ այն հետագայում կարող է օգտագործվել իր կամ նրանց դեմ.»:

Հոդված 30. Օրենսգրքի 369-րդ հոդվածում, 430.1-ին հոդվածի 4-րդ մասում, 439-րդ հոդվածի 2-րդ մասում «Լեռնային Ղարաբաղի» բառերը փոխարինել «Արցախի» բառով:

Հոդված 31. Օրենսգրքի 370-րդ հոդվածի 2-րդ մասում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրության» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության Սահմանադրության» բառերով:

Հոդված 32. Օրենսգրքի 501-րդ հոդվածում «ազգային» բառը փոխարինել «պետական» բառով:

Հոդված 33. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝**

Բ. ՍԱՀԱԿՅԱՆ

2019թ. մարտի 20
Ստեփանակերտ
ՀՕ-1-Ն

Ընդունված է 2019 թվականի
փետրվարի 27-ին

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2008 թվականի դեկտեմբերի 17-ի քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք) 1-ին հոդվածի 1-ին մասում՝

1) «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրությամբ» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության Սահմանադրությամբ» բառերով:

2) «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատական օրենսգրքով» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության դատական օրենսգրքով» բառերով:

Հոդված 2. Օրենսգրքի 2-րդ հոդվածում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրությամբ» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության Սահմանադրությամբ» բառերով:

Հոդված 3. Օրենսգրքի 4-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Դատավորների անկախության երաշխիքները սահմանվում են Արցախի Հանրապետության Սահմանադրությամբ և Արցախի Հանրապետության դատական օրենսգրքով:»:

Հոդված 4. Օրենսգրքի 8-րդ հոդվածի 2-րդ մասում «անձնական» բառը փոխարինել «մասնավոր» բառով:

Հոդված 5. Օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ի մասում, 121.1-ին հոդվածի 1-ին մասում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրության» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության Սահմանադրության» բառերով:

Հոդված 6. Օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատական օրենսգրքի 61-րդ հոդվածով» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության դատական օրենսգրքի 52-րդ հոդվածով» բառերով:

Հոդված 7. Օրենսգրքի 39-րդ հոդվածի 6-րդ մասում «տալը» բառից հետո լրացնել «կամ ցուցմունք տալուց հրաժարվել» բառերը:

Հոդված 8. Օրենսգրքի 40-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասի 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1) անձինք՝ իրենց, իրենց ամուսնու կամ մերձավոր ազգականների՝ ծնողի, զավակի, որդեգրողի, որդեգրվածի, հարազատ կամ ոչ հարազատ (համահայր կամ համամայր) եղբոր կամ քրոջ, պապի, տատի, թոռան, ամուսնու ծնողի կամ զավակի ամուսնու վերաբերյալ, եթե ողջամտորեն ենթադրելի է, որ այն հետազայում կարող է օգտագործվել իրենց կամ նրանց դեմ.»:

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ մաս.

«3. Եթե որպես վկա ցուցնունք տալուց հրաժարվելու իրավունքի շուրջ ծագում է վեճ, ապա առաջին աստիճանի դատարանը որոշում է կայացնում դրա վերաբերյալ, որը պարտադիր է գործին մասնակցող անձանց, օրինական ներկայացուցիչների, վկաների, փորձագետների և թարգմանիչների համար:»:

Հոդված 9. Օրենսգրքի 43-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Հիմնական իրավունքների խախտմամբ ձեռք բերված կամ արդար դատաքննության իրավունքը խաթարող սպացույցի օգտագործումն արգելվում է:»:

Հոդված 10. Օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին մասի չորրորդ պարբերությունում «դեմ» բառից հետո լրացնել «, եթե ողջամտորեն ենթադրելի է, որ այն հետագայում կարող է օգտագործվել իր կամ նրանց դեմ» բառերը:

Հոդված 11. Օրենսգրքի 11-րդ գլուխը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ԳԼՈՒԽ 11 ԴԱՏԱԿԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐԸ

Հոդված 74. Դատական ծանուցումը

1. Գործին մասնակցող անձինք, օրինական ներկայացուցիչները, վկաները, փորձագետները և թարգմանիչները սույն օրենսգրքով սահմանված կարգով ծանուցվում են դատական նիստի ժամանակի և վայրի, ինչպես նաև սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ առանձին դատավարական գործողություններ կատարելու մասին:

2. Գործին մասնակցող անձի կողմից իր ներկայացուցչին ծանուցելու վերաբերյալ դիմում ներկայացվելու կամ լիազորագրում նման լիազորության առկայության դեպքում ծանուցվում է միայն ներկայացուցիչը:

3. Ծանուցումն իրականացվում է այն հաշվով, որ դրա հասցեատերը դատական նիստին ներկայանալուց առնվազն երեք օր առաջ ծանուցվի դատական նիստի ժամանակի և վայրի մասին, բացառությամբ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերի:

Հոդված 75. Դատական ծանուցման կարգը

1. Գործին մասնակցող անձինք, օրինական ներկայացուցիչները, վկաները, փորձագետները և թարգմանիչները դատական նիստի ժամանակի և վայրի մասին ծանուցվում են ծանուցագրի միջոցով, եթե սույն օրենսգրքով ծանուցման այլ կարգ նախատեսված չէ:

2. Ծանուցագիրը պետք է բովանդակի՝

1) դատարանի անվանումը և հասցեն.

2) դատարան հրավիրվող կամ կանչվող անձի անունը (անվանումը).

3) նշում այն գործի և դատավարության փուլի մասին, որի վերաբերյալ անձը ծանուցվում է.

4) նշում՝ ներկայանալու ժամանակի և վայրի մասին.

5) նշում՝ հասցեատիրոջ դատավարական կարգավիճակի մասին.

6) նշում՝ դատարան չներկայանալու կամ չներկայանալու պատճառների մասին դատարանին չհայտնելու հետևանքների մասին.

7) գործը քննող դատարանի հասցեն և էլեկտրոնային փոստի հասցեն կամ տեղեկություններ էլեկտրոնային հաղորդակցության այլ միջոցի վերաբերյալ, որով գործին մասնակցող անձը, օրինական ներկայացուցիչը,

վկան, փորձագետը և թարգմանիչը կարող են դատարանին հաղորդել տեղեկություններ և ուղարկել դատավարական փաստաթղթեր:

3. Գործին մասնակցող անձանց, օրինական ներկայացուցիչներին, վկաներին, փորձագետներին և թարգմանիչներին դատական ծանուցագիրն ուղարկում է դատարանի աշխատակազմը:

4. Դատական ծանուցագիրը՝

1) ուղարկվում է պատվիրված նամակով՝ հանձնման մասին ծանուցմամբ.

2) հանձնվում է առձեռն.

3) ուղարկվում է էլեկտրոնային հաղորդակցության միջոցով՝ սույն օրենսգրքի 76.2-րդ հոդվածով սահմանված կարգով:

5. Դատական նիստին ներկա գտնվող գործին մասնակցող անձինք, օրինական ներկայացուցիչները, վկաները, փորձագետները և թարգմանիչները հաջորդ դատական նիստի ժամանակի և վայրի մասին ծանուցվում են տվյալ դատական նիստում դատավորի կողմից հաղորդելու միջոցով: Եթե դատական նիստի արձանագրությունը վարվում է պարզ թղթային արձանագրման ձևով, ապա հաջորդ դատական նիստի ժամանակի և վայրի մասին տեղեկացված լինելու վերաբերյալ գործին մասնակցող անձը, օրինական ներկայացուցիչը, վկան, փորձագետը և թարգմանիչը արձանագրության մեջ նշում է և ստորագրում:

6. Գործին մասնակցող անձանց, օրինական ներկայացուցիչների, վկաների, փորձագետների և թարգմանիչների կողմից իրենց հեռախոսահամարների տրամադրման դեպքում, դատական ծանուցագիրը սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված կարգով ուղարկվելու և հանձնվելու դեպքում, հերթական դատական նիստի ժամանակի և վայրի, ինչպես նաև առանձին դատավարական գործողությունների մասին ծանուցումը կարող է կատարվել նաև հեռախոսագանգի միջոցով: Այս դեպքում գործին կցվում են ծանուցումը հաղորդելու փաստը հաստատող ապացույցներ (արձանագրություն, հեռախոսագիր, ձայնագրություն և այլն):

Հոդված 76. Դատական ծանուցագիրը պատվիրված նամակով ուղարկելը

1. Դատական ծանուցագիրն ուղարկվում է գործին մասնակցող անձի, օրինական ներկայացուցչի, վկայի, փորձագետի և թարգմանչի նշած հասցեով (ծանուցման հասցե):

2. Ֆիզիկական անձի դեպքում դատական ծանուցագիրը պետք է հանձնվի անձամբ հասցեատիրոջը կամ հասցեատիրոջ ծանուցման (հաշվառման) հասցեում նրա հետ համատեղ բնակվող կամ այդ հասցեում աշխատող չափահաս անձին, բացառությամբ այն դեպքերի, երբ նշված անձը գործի քննությանը մասնակցում է որպես հակադիր շահեր ունեցող կողմ:

3. Եթե գործի նյութերից հետևում է, որ գործին մասնակցող անձը, օրինական ներկայացուցիչը, վկան, փորձագետը և թարգմանիչը կալանավայրում է, ազատագրկման վայրում, գորամասում, կարգապահական գումարտակում կամ բուժական հիմնարկում ստանում է ստացիոնար բուժում, ապա դատական ծանուցագիրը պետք է ուղարկվի այդ հաստատությունների հասցեներով: Այդ հաստատությունների վարչակազմերը դատական ծանուցագիրն ստանալուց անմիջապես հետո պարտավոր են այն հանձնել հասցեատիրոջը՝ վերջինիս կողմից ստացման վերաբերյալ ապացույցն ուղարկելով գործը քննող դատարան:

4. Իրավաբանական անձանց դեպքում դատական ծանուցագիրը պետք է հանձնվի իրավաբանական անձի ծանուցման հասցեում՝ իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարին կամ գրագրության ընդունման համար պատասխանատու անձին կամ այն անձին, որի նամակագրություն ընդունելու լիազորությունն ակնհայտորեն բխում է այն իրավիճակից, որում գործում է

տվյալ անձը (անվտանգության աշխատակից, ընդհանուր բաժնի կամ իրավաբանական ծառայության աշխատակից և այլն):

5. Եթե գործին մասնակցող անձը, օրինական ներկայացուցիչը, վկան, փորձագետը և թարգմանիչը հրաժարվել են ստանալ ծանուցագիրը, կամ նրանց հայտնած հասցեով ուղարկված ծանուցագիրը վերադարձվել է դատարան, կամ ուղարկելու օրվանից երկշաբաթյա ժամկետում դատարանը չի ստացել հետադարձ ծանուցումը (ծանուցման մասին անդորրագիրը), կամ գործին մասնակցող անձի, օրինական ներկայացուցչի, վկայի, փորձագետի և թարգմանչի հասցեն անհայտ է, ապա դատարանը դատական ծանուցագիրը ուղարկում է՝

1) ֆիզիկական անձի դեպքում՝ այդ անձի հաշվառման, աշխատանքի վայրի հայտնի հասցեով և անձի վերջին հայտնի բնակության վայրի համապատասխան համայնքի ղեկավարին, իսկ գործի նյութերում ֆիզիկական անձի այլ հասցեների, այդ թվում՝ էլեկտրոնային փոստի վերաբերյալ տվյալների առկայության դեպքում՝ նաև այդ հասցեներով:

2) իրավաբանական անձի դեպքում՝ այդ անձի մշտապես գործող մարմնի գտնվելու վայրի հասցեով, իսկ գործի նյութերում իրավաբանական անձի այլ հասցեների, այդ թվում՝ էլեկտրոնային փոստի վերաբերյալ տվյալների առկայության դեպքում՝ նաև այդ հասցեներով:

6. Հետադարձ ծանուցումը պետք է տեղեկություններ պարունակի այն անձի վերաբերյալ, որին ծանուցագիրը հանձնվել է:

7. Այլ պետության տարածքում բնակվող անձին ծանուցագիրն ուղարկվում է ուղղակի ծանուցման միջոցով, եթե այլ բան նախատեսված չէ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

Հոդված 76.1. Դատական ծանուցագիրն առձեռն հանձնելը

1. Դատական նիստի ժամանակի և վայրի մասին գործին մասնակցող անձը, օրինական ներկայացուցիչը, վկան, փորձագետը և թարգմանիչը կարող են ծանուցվել դատական ծանուցագիրն առձեռն հանձնելու միջոցով:

2. Դատական ծանուցագիրն առձեռն հանձնվում է գործին մասնակցող անձանց, օրինական ներկայացուցիչներին, վկաներին, փորձագետներին և թարգմանիչներին դատարանի աշխատակազմի միջոցով:

3. Գործին մասնակցող անձի փաստաբան հանդիսացող ներկայացուցչի կամահայտնության դեպքում դատական ծանուցագրի հանձնումը գործին մասնակցող անձանց, օրինական ներկայացուցիչներին, վկաներին, փորձագետներին և թարգմանիչներին դատարանի համաձայնությամբ կարող է իրականացվել իր միջոցով՝ պահպանելով սույն օրենսգրքի 76-րդ հոդվածի պահանջները: Եթե դատարանի կողմից այլ ժամկետ չի սահմանվել, ապա մեկշաբաթյա ժամկետում հետադարձ ծանուցումը դատարանում չստացվելու դեպքում ծանուցագրի հանձնումն իրականացվում է դատարանի աշխատակազմի միջոցով:

4. Դատական ծանուցագիրն առձեռն հանձնելու դեպքում գործին կցվում է այն հանձնելու փաստը հաստատող փաստաթուղթ:

Հոդված 76.2. Դատական ծանուցագիրը էլեկտրոնային հաղորդակցության միջոցով ուղարկելը

1. Պետական և տեղական ինքնակառավարման մարմնին, իրավաբանական անձին, անհատ ձեռնարկատիրոջը, ինչպես նաև գործին մասնակցող անձի՝ փաստաբանի կարգավիճակ ունեցող ներկայացուցչին հասցեագրված դատական ծանուցագիրն ուղարկվում է նրա պաշտոնական էլեկտրոնային փոստին, բացառությամբ այն դեպքերի, երբ նման եղանակով ծանուցում իրականացնելն անհնար է:

2. Գործին մասնակցող անձինք, օրինական ներկայացուցիչները, վկաները, փորձագետները և թարգմանիչները դատարանին կարող են գրավոր ներկայացնել իրենց հաղորդակցության միջոցները՝ միջնորդելով ծանուցումը կատարել այդ միջոցով:

3. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված մարմինները և անձինք կրում են իրենց պաշտոնական էլեկտրոնային փոստին կամ իրենց կողմից տրամադրված էլեկտրոնային հաղորդակցության միջոցներին ուղարկված դատական ծանուցագիրը չկարդալու անբարենպաստ հետևանքները:

4. Դատական ծանուցագիրն էլեկտրոնային փոստին ուղարկելու դեպքում գործին կցվում է այն ստանալու մասին էլեկտրոնային հավաստումը: Դատական ծանուցագիրը կապի այլ միջոցների կիրառմամբ ուղարկելու դեպքում գործին կցվում են այն ուղարկելու (հաղորդելու) փաստը հաստատող ապացույցներ (արձանագրություն, հեռախոսագիր, ձայնագրություն և այլն):

Հոդված 76.3. Գործի քննության ընթացքում հասցեի (էլեկտրոնային հաղորդակցության միջոցի) փոփոխության մասին դատարանին հայտնելու պարտականությունը

1. Գործին մասնակցող անձը, օրինական ներկայացուցիչը, վկան, փորձագետը և թարգմանիչը պարտավոր են դատարանին հայտնել գործի քննության ընթացքում իրենց հասցեի, էլեկտրոնային փոստի կամ էլեկտրոնային հաղորդակցության այլ միջոցի փոփոխության մասին: Նման հաղորդման բացակայության դեպքում ծանուցագիրն ուղարկվում է այն հասցեով կամ էլեկտրոնային հաղորդակցության միջոցով, որով գործին մասնակցող անձը, օրինական ներկայացուցիչը, վկան, փորձագետը և թարգմանիչը վերջին անգամ ծանուցվել է, և համարվում է հանձնված, թեկուզև հասցեատերն այն փաստացի չի ստացել:»:

Հոդված 12. Օրենսգրքի 77-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 77. Հայցադիմումին ներկայացվող պահանջները

Հայցադիմումը ներկայացվում է գրավոր՝ հայերեն կամ այլ լեզվով՝ հայերեն պատշաճ թարգմանությամբ: Հայցադիմումը պետք է լինի ընթեռնելի:

1. Հայցադիմումում պարտադիր նշվում են՝

1) դատարանի անվանումը, որին ներկայացվում է հայցադիմումը.

2) հայցվորի անունը (անվանումը), հաշվառման (գտնվելու) վայրի հասցեն, ծանուցման հասցեն (եթե այն տարբերվում է հաշվառման (գտնվելու) վայրի հասցեից), այդ թվում՝ հայցվոր քաղաքացու անձը հաստատող փաստաթղթի տվյալները (այսուհետ՝ անձնագրային տվյալներ), հայցվոր իրավաբանական անձի պետական գրանցման համարը, նրա ներկայացուցչի անունը, անձնագրային տվյալները, ծանուցման հասցեն, իսկ եթե հայցը ներկայացրել է դրա իրավունքն ունեցող պաշտոնատար անձը՝ նաև այդ անձի անունը, պաշտոնը.

3) պատասխանողի անունը (անվանումը), հաշվառման (գտնվելու) վայրի հասցեն, իսկ հաշվառման վայր չունենալու դեպքում՝ բնակվելու վայրի հասցեն.

4) գործին մասնակցող այլ անձանց անունը (անվանումը), նրանց հաշվառման (գտնվելու) վայրի հասցեն, իսկ հաշվառման վայր չունենալու դեպքում՝ բնակվելու վայրի հասցեն.

5) այն փաստերը, որոնց վրա հիմնվում են հայցապահանջները.

6) դրամական պահանջի դեպքում՝ պահանջվող կամ վիճարկվող գումարի չափը և հաշվարկը.

7) պատասխանողին ուղղված նյութափրավական պահանջը (պահանջները), իսկ մի քանի պատասխանողների դեմ հայցադիմում ներկայացնելիս հայցվորի՝ նրանցից յուրաքանչյուրին ուղղված պահանջը (պահանջները), եթե այն համիրավ չէ.

8) հայցադիմումին կից ներկայացվող փաստաթղթերի և ապացույցների ցանկը:

2. Հայցադիմումում կարող են նշվել՝

1) վիճելի իրավահարաբերության նկատմամբ կիրառման ենթակա իրավական նորմերը.

2) այն ապացույցները, որոնք հաստատում են հայցի հիմքում դրված փաստերից յուրաքանչյուրը՝ համապատասխան նշումով, թե որ ապացույցն ինչ փաստի հաստատմանն է ուղղված.

3) հայցվորի միջնորդությունները.

4) վեճը հաշտությամբ լուծելու ուղղությամբ կատարված գործողությունները.

5) այլ տեղեկություններ, որոնք նշանակություն ունեն գործի քննության և լուծման համար.

6) էլեկտրոնային հաղորդակցության միջոցի վերաբերյալ տեղեկությունը՝ ծանուցումն այդ միջոցով իրականացնելու միջնորդությամբ:

3. Հայցադիմումն ստորագրում է հայցվորը կամ նրա ներկայացուցիչը: Ներկայացուցչի ստորագրած հայցադիմումին կցվում են նրա լիազորությունը հավաստող փաստաթուղթը և անձը հաստատող փաստաթղթի պատճենը:

4. Դիմումի նկատմամբ տարածվում են հայցադիմումի համար սահմանված պահանջները, եթե այլ բան նախատեսված չէ սույն օրենսգրքով, կամ այլ բան չի բխում համապատասխան վարույթի էությունից:»:

Հոդված 13. Օրենսգրքի 106-րդ հոդվածի 1-ին մասում «օրինական» բառը փոխարինել «իրավաչափ» բառով:

Հոդված 14. Օրենսգրքի 121-րդ հոդվածի 2-րդ մասում, 246.2-րդ հոդվածի 4-րդ մասում, 254-րդ հոդվածի 2-րդ մասում «Լեռնային Ղարաբաղի» բառերը փոխարինել «Արցախի» բառով:

Հոդված 15. Օրենսգրքի 230.4-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատական օրենսգրքի 61-րդ հոդվածի» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության դատական օրենսգրքի 52-րդ հոդվածի» բառերով:

Հոդված 16. Օրենսգրքի 266-րդ հոդվածում «ազգային» բառը փոխարինել «պետական» բառով:

Հոդված 17. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝**

Բ. ՍԱՀԱԿՅԱՆ

2019թ. մարտի 20
Ստեփանակերտ
ՀՕ-2-Ն

Ընդունված է 2019 թվականի
փետրվարի 27-ին

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2008 թվականի դեկտեմբերի 17-ի վարչական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք) 2-րդ հոդվածի 1-ին մասում և 7-րդ հոդվածի 5-րդ մասում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատական օրենսգրքով» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության դատական օրենսգրքով» բառերով:

Հոդված 2. Օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի՝

1) 1-ին կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրությամբ» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության Սահմանադրությամբ» բառերով.

2) 1-ին կետի «բ» ենթակետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրության» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության Սահմանադրության» բառերով:

Հոդված 3. Օրենսգրքի 23-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Հիմնական իրավունքների խախտմամբ ձեռք բերված կամ արդար դատաքննության իրավունքը խաթարող ապացույցների օգտագործումն արգելվում է: Դրանք ապացուցողական ուժ չունեն և չեն կարող դրվել դատական ակտի հիմքում:»:

Հոդված 4. Օրենսգրքի 30-րդ հոդվածում՝

1) 3-րդ մասի 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1) անձինք՝ իրենց կամ իրենց ամուսնու կամ իրենց հետ արյունակցական մինչև 2-րդ աստիճանի կապի մեջ գտնվող անձանց կամ որդեգրողների կամ իրենց որդեգրածների կամ որդեգրողների կամ իրենց որդեգրածների հետ արյունակցական կապի 1-ին աստիճանի մեջ գտնվող անձանց վերաբերյալ, եթե ողջամտորեն ենթադրում են, որ այն հետագայում կարող է օգտագործվել իրենց կամ նրանց դեմ.»

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 7-րդ մաս.

«7. Անձինք, որոնք որևէ ֆիզիկական կամ հոգեկան արատի պատճառով ունակ չեն ճիշտ ընկալելու և վերարտադրելու գործով ապացուցման ենթակա հանգամանքները, չեն կարող հարցաքննվել որպես վկա:»:

Հոդված 5. Օրենսգրքի 59-րդ հոդվածի 10-րդ մասում «օրենսգրքի 117.12-րդ հոդվածի» բառերը փոխարինել «օրենսգրքի 117.14-րդ հոդվածի» բառերով:

Հոդված 6. Օրենսգրքի 85-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 85. Հայցի հիմքը և (կամ) առարկան փոփոխելը

1. Հայցվորը հայցի հիմքը և (կամ) առարկան կարող է փոփոխել նախնական դատական նիստի ընթացքում կամ դատաքննություն

նշանակելու մասին վարչական դատարանի որոշումը ստանալուց հետո՝ յոթնօրյա ժամկետում: Հայցի հիմքը և (կամ) առարկան կարող են փոփոխվել գործը քննող վարչական դատարանի ընդդատության սահմաններում:

2. Վարչական դատարանը կարող է թույլ չտալ նման փոփոխություն, եթե այն հանգեցնում է հայցի էության փոփոխության: Այդ դեպքում վարչական դատարանը կայացնում է որոշում:

3. Պատասխանողը հայցադիմումի հիմքի և (կամ) առարկայի փոփոխությունը ստանալուց հետո կարող է ներկայացնել նոր պատասխան դրա վերաբերյալ՝ սույն օրենսգրքի 83-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում:»:

Հոդված 7. Օրենսգրքի 89-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 89. Գործի վարույթը կասեցնելու դատարանի լիազորությունները

1. Դատարանը պարտավոր է կասեցնել գործի վարույթը, եթե՝

1) անհնարին է տվյալ գործի քննությունը մինչև սահմանադրական, քաղաքացիական, քրեական կամ վարչական դատավարության կարգով քննվող այլ գործով որոշում, վճիռ կամ դատավճիռ կայացնելը.

2) առկա է անհաղթահարելի ուժ, որը խոչընդոտում է տվյալ գործով հետագա վարույթի իրականացմանը.

3) դատավարության մասնակից հանդիսացող ֆիզիկական անձի մահից հետո վիճելի իրավահարաբերությունը թույլ է տալիս իրավահաջորդություն.

4) դատավարության մասնակից հանդիսացող ֆիզիկական անձը ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

5) դատարանը «Սահմանադրական դատավարության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով դիմել է Գերագույն դատարան:

2. Դատարանն իրավունք ունի կասեցնելու գործի վարույթը, եթե՝

1) նշանակել է փորձաքննություն.

2) պատասխանող կամ երրորդ անձ հանդիսացող ֆիզիկական անձը հետախուզման մեջ է.

3) դատավարության մասնակից հանդիսացող իրավաբանական անձը վերակազմակերպվում է:

3. Դատարանը գործի վարույթը կասեցնելու մասին կայացնում է որոշում՝ այն եռօրյա ժամկետում ուղարկելով դատավարության մասնակիցներին:»:

Հոդված 8. Օրենսգրքում լրացնել հետևյալ բովանդակությամբ 89.1-ին հոդված.

«Հոդված 89.1. Գործի վարույթը վերսկսելը

1. Գործի վարույթը վերսկսվում է դրա կասեցումն առաջացրած հանգամանքների վերանալուց հետո:

2. Սույն օրենսգրքի 89-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով նախատեսված հիմքով կասեցված գործով վարույթը վերսկսվում է, եթե՝

1) Գերագույն դատարանի աշխատակազմը վերադարձրել է դատարանի դիմումը, և դիմողը «Սահմանադրական դատավարության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված կարգով չի բողոքարկել Գերագույն դատարանին, կամ բողոքարկելուց հետո

Գերագույն դատարանը դատարանի դիմումը վերադարձնելու մասին վերջնական որոշում է կայացրել.

2) Գերագույն դատարանը կարճել է գործի վարույթը.

3) Գերագույն դատարանն ամբողջությամբ մերժել է գործի քննությունը, բացառությամբ այն դեպքի, երբ դիմումի առարկայի վերաբերյալ այլ դիմումի (դիմումների) հիման վրա Գերագույն դատարանում իրականացվում է գործի դատաքննություն.

4) ուժի մեջ է մտել Գերագույն դատարանի որոշումը՝ կիրառման ենթակա նորմատիվ իրավական ակտի դրույթի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

3. Դատարանը գործի վարույթը վերսկսելու մասին կայացնում է որոշում՝ այն եռօրյա ժամկետում ուղարկելով դատավարության մասնակիցներին:

4. Գործի վարույթը կասեցնելու մասին որոշումը վերացվելու դեպքում գործի վարույթը վերսկսվում է:»:

Հոդված 9. Օրենսգրքի 90-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 90. Գործի վարույթը կարճելը

1. Դատարանը գործի քննության ցանկացած փուլում կարճում է գործի վարույթը, եթե՝

1) վեճն ընդդատյա չէ վարչական դատարանին.

2) լրացել է հայց ներկայացնելու համար օրենքով նախատեսված ժամկետը.

3) նույն անձանց միջև նույն առարկայի մասին և միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ առկա է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռ.

4) դատավարության մասնակից հանդիսացող անձի մահից հետո վիճելի իրավահարաբերությունը բացառում է իրավահաջորդությունը.

5) դատավարության մասնակից հանդիսացող իրավաբանական անձը լուծարվել է.

6) հայցվորը հրաժարվել է հայցից, բացառությամբ սույն օրենսգրքի 24-րդ գլխով սահմանված այն գործերի, որոնց քննությունը բխում է հանրության կամ պետության շահերից.

7) վեճն ըստ էության սպառվել է.

8) գործի վարույթը կասեցնելու մասին որոշում ընդունելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, կասեցման հիմք հանդիսացած հանգամանքները չեն վերացել (բացառությամբ սույն օրենսգրքի 89-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի), և գործի վարույթն այդ պայմաններում վերսկսելն անհնարին է.

9) եթե բացահայտվել են սույն օրենսգրքի 79-րդ հոդվածով նախատեսված՝ հայցադիմումի ընդունումը մերժելու հիմքերը.

10) դատարանը հաստատել է կնքված հաշտության համաձայնությունը:

2. Եթե հայցվորը ներկայացնում է դիմում հայցից հրաժարվելու վերաբերյալ, ապա դատարանը երկշաբաթյա ժամկետում հրավիրում է դատական նիստ՝ այն քննելու նպատակով: Եթե հայցվորը նիստի ժամանակ կրկնում է հայցից հրաժարվելու իր դիմումը կամ պատշաճ ծանուցված լինելու պայմաններում չի ներկայանում դատական նիստին, ապա դատարանը եռօրյա ժամկետում որոշում է կայացնում գործի վարույթը կարճելու մասին:»:

Հոդված 10. Օրենսգրքում լրացնել հետևյալ բովանդակությամբ 90.1-ին հոդված.

«Հողված 90.1. Գործի վարույթը կարճելու կարգը և հետևանքները

1. Գործի վարույթը կարճելու մասին դատարանը կայացնում է որոշում, որով լուծվում են նաև դատավարության մասնակիցների միջև դատական ծախսերի բաշխման հարցերը:

2. Գործի վարույթը կարճելու դեպքում նույն անձանց միջև նույն առարկայի մասին և միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ չի թույլատրվում կրկին դիմել վարչական դատարան, բացառությամբ այն դեպքերի, երբ հայցվորը հայցից հրաժարվել է դատաքննության նախապատրաստական փուլում, կամ գործի վարույթը կարճվել է սույն օրենսգրքի 90-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով նախատեսված հիմքով:»:

Հոդված 11. Օրենսգրքի 93.1-ին հոդվածի 1-ին մասում «օրինական» բառը փոխարինել «իրավաչափ» բառով:

Հոդված 12. Օրենսգրքի 98-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 98. Գործի դատաքննությունը հետաձգելը

1. Վարչական դատարանն իրավասու է հետաձգելու գործի դատաքննությունը, եթե՝

1) համարում է, որ այն չի կարող քննվել տվյալ նիստում, մասնավորապես դատավարության մասնակիցներից որևէ մեկի, վկաների, փորձագետների, թարգմանիչների բացակայության պատճառով.

2) այն թելադրված է լրացուցիչ ապացույցներ ներկայացնելու անհրաժեշտությամբ.

3) ավարտվել է աշխատանքային օրը, եթե սույն օրենսգրքով գործի քննության հատուկ ժամկետներ սահմանված չեն.

4) կողմերից մեկը միջնորդում է տրամադրել ողջամիտ ժամկետ՝ վեճն արտադատարանական կարգով լուծելու համար.

5) հայցվորը ներկայացրել է հայցի հիմքը և (կամ) առարկան փոփոխելու վերաբերյալ միջնորդություն.

6) կողմերը փոխադարձ համաձայնությամբ միջնորդում են հետաձգել գործի դատաքննությունը:

2. Գործի դատաքննությունը հետաձգելու մասին կայացվում է որոշում:

3. Դատավարության մասնակիցները պատշաճ ծանուցվում են հաջորդ դատական նիստի ժամանակի և վայրի մասին:

4. Գործի դատաքննությունը հետաձգելուց հետո այն շարունակվում է ընդհատված պահից:»:

Հոդված 13. Օրենսգրքի 116-րդ հոդվածի 1-ին մասում և 136-րդ հոդվածի 1-ին մասում «Լեռնային Դարաբաղի Հանրապետության Սահմանադրության» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության Սահմանադրության» բառերով:

Հոդված 14. Օրենսգրքի 19.1-ին և 20-րդ գլուխները շարադրել հետևյալ խմբագրությամբ.

ՎԱՐՈՒՑԹՂ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

Հոդված 117.1. Վերաքննիչ բողոք բերելու իրավունքը

1. Վարչական դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերի, ինչպես նաև սույն օրենսգրքի 125-րդ հոդվածով նախատեսված միջանկյալ դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեն՝

1) դատավարության մասնակիցները.

2) դատավարության մասնակից չդարձված անձինք, որոնց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ կայացվել է գործն ըստ էության լուծող դատական ակտ:

2. Սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում նշված անձինք վերաքննիչ դատարանում օգտվում են երրորդ անձանց իրավունքներից և կրում են նրանց համար սահմանված պարտականությունները:

Հոդված 117.2. Վերաքննիչ բողոք բերելու ժամկետը

1. Գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք կարող է բերվել մինչև այդ ակտի օրինական ուժի մեջ մտնելու համար սահմանված ժամկետը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված հիմքով դատական ակտը բողոքարկելու դեպքերի:

2. Միջանկյալ դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք կարող է բերվել սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ մինչև այդ ակտի օրինական ուժի մեջ մտնելու համար սահմանված ժամկետը:

3. Դատավարության մասնակից չդարձված այն անձինք, որոնց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ կայացվել է գործն ըստ էության լուծող դատական ակտ, իրավունք ունեն վերաքննիչ բողոք բերելու այն օրվանից սկսած՝ երեք ամսվա ընթացքում, երբ իմացել են կամ կարող էին իմանալ նման դատական ակտի կայացման մասին: Այդպիսի վերաքննիչ բողոք չի կարող բերվել, եթե դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելուց հետո անցել է քսան տարի:

4. Սույն հոդվածի 1-3-րդ մասերով սահմանված ժամկետներից հետո բերված վերաքննիչ բողոքը վերաքննիչ դատարանը կարող է ընդունել վարույթ, եթե ներկայացված է համապատասխան ժամկետի բացթողումը հարգելի համարելու վերաբերյալ միջնորդություն, և դատարանն այն բավարարել է:

Հոդված 117.3. Վերաքննիչ բողոք բերելու կարգը

1. Վերաքննիչ բողոքը և դրան կից փաստաթղթերն ուղարկվում են վերաքննիչ դատարան: Բողոք բերողը վերաքննիչ բողոքը և դրան կից փաստաթղթերի պատճեններն ուղարկում է դատավարության մասնակիցներին, իսկ բողոքի պատճենը՝ դատական ակտը կայացրած վարչական դատարան:

2. Վարչական դատարանը բողոքի պատճենը ստանալու օրվանից ոչ ուշ, քան հաջորդ օրը, իսկ եթե դա հնարավոր չէ՝ հնարավորինս սեղմ ժամկետում, սակայն ոչ ուշ, քան բողոք բերելու ժամկետը լրանալու օրվան հաջորդող եռօրյա ժամկետում, պարտավոր է գործն ուղարկել վերաքննիչ դատարան:

Հոդված 117.4. Վերաքննիչ բողոքի ձևը և բովանդակությունը

1. Վերաքննիչ բողոքը կազմվում է գրավոր, որում նշվում են՝
 - 1) դատարանի անվանումը, որին հասցեագրվում է բողոքը.
 - 2) բողոք բերող անձի և դատավարության մասնակիցների անունները (անվանումները).
 - 3) դատարանի անվանումը, որի կայացրած դատական ակտի դեմ բերվում է բողոքը, գործի համարը և դատական ակտի կայացման տարին, ամիսը, ամսաթիվը.
 - 4) նյութական կամ դատավարական իրավունքի նորմի այն խախտումը, որը կարող էր ազդել գործի ելքի վրա.
 - 5) վերաքննիչ բողոքում նշված նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի խախտման, ինչպես նաև գործի ելքի վրա դրանց ազդեցության վերաբերյալ հիմնավորումները՝ վկայակոչելով Գերագույն դատարանի այն որոշումները, որոնք վերաքննիչ բողոք բերած անձը վերաբերելի է համարում՝ մեջ բերելով դրանց հակասող մասերը և կատարելով համեմատական վերլուծություն.
 - 6) բողոք բերող անձի պահանջը.
 - 7) բողոքին կցվող փաստաթղթերի ցանկը:
2. Եթե վարչական դատարանում բողոք բերած անձը գրկված է եղել բողոքի առարկա հանդիսացող որևէ հարցի վերաբերյալ իր դիրքորոշումը հայտնելու հնարավորությունից, ապա վերաքննիչ բողոքում պետք է նշի նաև իր դիրքորոշումն այդ հարցի վերաբերյալ:
3. Վերաքննիչ բողոքը ստորագրում է բողոք բերող անձը կամ նրա ներկայացուցիչը:
4. Բողոքին կցվում են պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթղթերը, բողոքի պատճենները դատական ակտ կայացրած վարչական դատարանին և դատավարության մասնակիցներին ուղարկելու մասին ապացույցները, լիազորագիրը կամ այլ փաստաթուղթ, որը հավաստում է ներկայացուցչի լիազորությունը (եթե բողոք բերողը հանդես է գալիս ներկայացուցչի միջոցով): Այն դեպքերում, երբ օրենքով նախատեսված է պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետելու կամ դրա չափը նվազեցնելու հնարավորություն, ապա վերաքննիչ բողոքին կցվում է կամ բողոքում ներառվում է դրա վերաբերյալ միջնորդությունը:

Հոդված 117.5. Վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշումը

1. Գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ բերված վերաքննիչ բողոքը վերադարձնելու կամ ընդունումը մերժելու հիմքերի բացակայության դեպքում բողոք բերելու ժամկետը լրանալուց հետո՝ ոչ ուշ, քան մեկ ամսվա ընթացքում, վերաքննիչ դատարանը կայացնում է վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշում:
2. Միջանկյալ դատական ակտի դեմ բերված վերաքննիչ բողոքը վերադարձնելու կամ ընդունումը մերժելու հիմքերի բացակայության դեպքում գործը ստանալուց հետո՝ ոչ ուշ, քան հինգ օրվա ընթացքում, վերաքննիչ դատարանը կայացնում է վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշում:
3. Բողոքը վարույթ ընդունելու մասին որոշումը կայացնելուց հետո՝ եռօրյա ժամկետում, վերաքննիչ դատարանն այն ուղարկում է բողոք բերող անձին և դատավարության մասնակիցներին:
4. Գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ բերված վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշումն ուղարկելու հետ միաժամանակ բողոք բերող անձը և դատավարության մասնակիցները տեղեկացվում են գործի դատաքննության ժամանակի ու վայրի մասին:

Հողված 117.6. Վերաքննիչ բողոքը վերադարձնելը

1. Վերաքննիչ բողոքը վերադարձվում է, եթե՝
 - 1) չեն պահպանվել սույն օրենսգրքի 117.4-րդ հոդվածի պահանջները.
 - 2) բողոքի շրջանակում առերևույթ բացառվում է դատական սխալի՝ նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի խախտման առկայության հնարավորությունը, որը կարող էր ազդել գործի ելքի վրա.
 - 3) վերաքննիչ բողոքը բերվել է սահմանված ժամկետը լրանալուց հետո և միջնորդություն չի պարունակում բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին.
 - 4) մինչև վերաքննիչ դատարանի՝ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշում կայացնելը բողոք բերած անձից դիմում է ստացվել այն հետ վերցնելու մասին, բացառությամբ սույն օրենսգրքի 117.9-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքի:
2. Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշումը կայացնում է գործը ստանալու օրվանից հետո՝
 - 1) յոթնօրյա ժամկետում՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ բերված բողոքով.
 - 2) հնգօրյա ժամկետում՝ միջանկյալ դատական ակտի դեմ բերված բողոքով:
3. Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշման մեջ նշվում են բողոքում առկա բոլոր առերևույթ սխալները:
4. Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշում ընդունելու դեպքում բողոք բերող անձին ուղարկվում են վերաքննիչ դատարանի որոշումը և բողոքին կից ներկայացված փաստաթղթերը: Եթե բողոքը բերել են մեկից ավելի անձինք, ապա բողոքին կից փաստաթղթերը վերադարձվում են նրանց ներկայացուցչին կամ բողոք բերած անձանցից մեկին՝ մյուսներին իրազեկելով այդ մասին, եթե ծանուցման վերաբերյալ այլ կարգ բողոքում նշված չէ:
5. Սույն հոդվածի 1-ին մասի 1-3-րդ կետերով նախատեսված հիմքերով վերաքննիչ բողոքը վերադարձնելուց հետո բողոքում առկա սխալները վերացնելու և բողոքը վերադարձնելու մասին որոշումն ստանալուց հետո՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ բերված բողոքով տասնհինգօրյա ժամկետում, իսկ միջանկյալ դատական ակտի դեմ բերված բողոքով եռօրյա ժամկետում կրկին բերելու դեպքում բողոքը համարվում է վերաքննիչ դատարանում ընդունված սկզբնական ներկայացման օրը: Բողոքը կրկին բերելու դեպքում սխալները վերացնելու համար նոր ժամկետ չի տրվում:
6. Վերաքննիչ դատարանի՝ բողոքը վերադարձնելու մասին որոշումը կարող է բողոքարկվել Գերագույն դատարան:
7. Գերագույն դատարանի կողմից որոշումը վերացվելու դեպքում բողոքը համարվում է վերաքննիչ դատարանում ընդունված՝ սկզբնական ներկայացման օրը:

Հողված 117.7. Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելը

1. Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժվում է, եթե՝
 - 1) սույն օրենսգրքի 117.6-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված ժամկետում անձը չի վերացրել բողոքում առկա սխալները, որոնց չվերացնելն արգելք է բողոքի քննության համար, կամ բողոքը բերել է սույն օրենսգրքի 117.6-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված ժամկետի խախտմամբ կամ սույն օրենսգրքի 117.6-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված ժամկետում ներկայա-

ցրել է պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետելու կամ դրա չափը նվազեցնելու միջնորդություն, որը մերժվել է.

2) վերաքննիչ բողոքը բերվել է սահմանված ժամկետը լրանալուց հետո, և բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը մերժվել է.

3) բողոքը բերել է այն անձը, որը վարչական դատարանի դատական ակտը բողոքարկելու իրավունք չունի.

4) բողոքարկվել է այն դատական ակտը, որը ենթակա չէ բողոքարկման.

5) բողոքարկվել է այն դատական ակտը, որն ընդդատյա չէ վերաքննիչ դատարանին:

2. Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին որոշումը կայացնում է գործը ստանալու օրվանից հետո՝

1) յոթնօրյա ժամկետում՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ բերված բողոքով.

2) հնգօրյա ժամկետում՝ միջանկյալ դատական ակտի դեմ բերված բողոքով:

3. Վերաքննիչ դատարանի՝ բողոքի ընդունումը մերժելու մասին որոշումը կարող է բողոքարկվել Գերագույն դատարան:

4. Որոշումը Գերագույն դատարանի կողմից վերացվելու դեպքում բողոքը համարվում է վերաքննիչ դատարանում ընդունված սկզբնական ներկայացման օրը:

Հոդված 117.8. Վերաքննիչ բողոքի պատասխանը

1. Դատավարության մասնակիցը վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին վերաքննիչ դատարանի որոշումը ստանալուց հետո իրավունք ունի ներկայացնելու վերաքննիչ բողոքի պատասխան՝

1) տասնհինգօրյա ժամկետում՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ բերված բողոքով.

2) հնգօրյա ժամկետում՝ միջանկյալ դատական ակտի դեմ բերված բողոքով:

2. Վերաքննիչ բողոքի պատասխանն ուղարկվում է վերաքննիչ դատարան և դատավարության մասնակիցներին:

3. Վերաքննիչ բողոքի պատասխանը ներկայացվում է գրավոր: Վերաքննիչ բողոքի պատասխանում նշվում են՝

1) դատարանի անվանումը, որին հասցեագրվում է պատասխանը.

2) պատասխանը ներկայացրած անձի և դատավարության մասնակիցների անունները (անվանումները).

3) դատարանի անվանումը, որի կայացրած դատական ակտի դեմ բերվել է վերաքննիչ բողոք, գործի համարը և վճռի կայացման տարին, ամիսը, ամսաթիվը.

4) վերաքննիչ բողոքի վերաբերյալ դիրքորոշումը և դրա հիմնավորումները:

4. Ներկայացված պատասխանին կցվում են պատասխանի պատճենները դատավարության մասնակիցներին ուղարկելու ապացույցները, լիազորագիրը կամ այլ փաստաթուղթ, որը հավաստում է ներկայացուցչի լիազորությունը (եթե պատասխանը ներկայացրած անձը հանդես է գալիս ներկայացուցչի միջոցով):

5. Վերաքննիչ բողոքի պատասխանը ստորագրում է պատասխանը ներկայացրած անձը կամ նրա ներկայացուցիչը:

Հոդված 117.9. Վերաքննիչ բողոքը հետ վերցնելը

1. Վերաքննիչ դատարան բողոք բերելուց հետո մինչև վերաքննիչ դատարանում գործի դատաքննության ավարտը վերաքննիչ բողոք բերած անձն իրավունք ունի ներկայացնելու դիմում բողոքը հետ վերցնելու մասին:

2. Սույն օրենսգրքի 24-րդ գլխով սահմանված այն գործերով, որոնց քննությունը բխում է հանրության կամ պետության շահերից, վերաքննիչ բողոք բերելուց հետո բողոք բերող անձն իրավունք չունի ներկայացնելու դիմում բողոքը հետ վերցնելու մասին:

3. Եթե բողոք բերած անձը բողոքը հետ վերցնելու մասին դիմումը ներկայացրել է վերաքննիչ դատարանի կողմից բողոքը քննության ընդունվելուց հետո, ապա վերաքննիչ դատարանը կայացնում է որոշում վերաքննիչ վարույթը կարճելու մասին, բացառությամբ սույն օրենսգրքի 24-րդ գլխով սահմանված այն գործերի, որոնց քննությունը բխում է հանրության կամ պետության շահերից: Եթե դատական ակտը բողոքարկել են նաև այլ անձինք, ապա վարույթը կարճվում է միայն տվյալ բողոքի մասով:

Հոդված 117.10. Գործի քննության ժամկետը վերաքննիչ դատարանում

1. Վերաքննիչ դատարանը գործը քննում և որոշում է կայացնում ողջամիտ ժամկետում:

2. Վերաքննիչ դատարանը միջանկյալ դատական ակտերի դեմ բերված վերաքննիչ բողոքները քննում և որոշում է կայացնում գործը ստանալուց հետո՝ մեկամսյա ժամկետում:

Հոդված 117.11. Գործի քննության կարգը վերաքննիչ դատարանում

1. Գործն ըստ էության լուծող և միջանկյալ դատական ակտերի դեմ բերված վերաքննիչ բողոքները քննվում և որոշումները կայացվում են կոլեգիալ՝ երեք դատավորի կազմով, իսկ նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով բերված բողոքները՝ հինգ դատավորի կազմով:

2. Վարչական դատարանի միջանկյալ դատական ակտերի դեմ բերված վերաքննիչ բողոքները քննվում և որոշումները կայացվում են առանց դատական նիստ հրավիրելու:

Հոդված 117.12. Վերաքննիչ դատարանում գործի դատաքննության կարգը

1. Վերաքննիչ դատարանում գործի դատաքննությունն իրականացվում է վարչական դատարանում դատաքննության իրականացման կանոններին համապատասխան՝ սույն հոդվածի առանձնահատկությունների հաշվառմամբ:

2. Բողոք բերած անձը, ինչպես նաև դատավարության մասնակիցները պատշաճ ծանուցվում են նիստի ժամանակի և վայրի մասին: Նրանց չներկայանալն արգելք չէ գործի դատաքննության համար:

3. Դատաքննությունը վերաքննիչ դատարանում սկսվում է նախագահող դատավորի ղեկուցումով: Նախագահող դատավորը շարադրում է բողոքի և բողոքի դեմ ներկայացված պատասխանի ամփոփ բովանդակությունը: Կոլեգիալ կազմի դատավորներն իրավունք ունեն հարցեր տալու նախագահող դատավորին, դատավարության մասնակիցներին, որից հետո գործի դատաքննությունը ավարտվում է, և հայտարարվում են դատական ակտը հրապարակելու վայրն ու ժամանակը:

Հոդված 117.13. Վերաքննիչ դատարանում գործի դատաքննությունը հետաձգելը, գործի վարույթը կասեցնելը

1. Վերաքննիչ դատարանում գործի դատաքննությունը հետաձգելը կատարվում է սույն օրենսգրքի 98-րդ հոդվածով սահմանված դեպքերում և կարգով:

2. Վերաքննիչ դատարանում գործի վարույթի կասեցման վրա տարածվում են սույն օրենսգրքի 89-րդ և 89.1-ին հոդվածների կանոնները: Դատավարության մասնակիցները գործի վարույթը կասեցնելու մասին վերաքննիչ դատարանի որոշումը կարող են բողոքարկել Գերագույն դատարան:

Հոդված 117.14. Վերաքննության սահմանները վերաքննիչ դատարանում

1. Վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքում ներկայացված պահանջի սահմաններում՝ ձեռնարկելով անհրաժեշտ միջոցներ բողոքն ըստ էության քննելու համար:

2. Վերաքննիչ դատարանն ընդունում է սույն օրենսգրքով կամ վարչական դատարանի սահմանած ժամկետում դատավարության մասնակցի կողմից վարչական դատարան չներկայացված ապացույցները, բացառությամբ այն դեպքի, երբ համարում է, որ դրանք գործի լուծման համար էական նշանակություն չունեն: Եթե դատավարության մասնակիցը չի հիմնավորում, որ վարչական դատարանում գործի քննության ժամանակ ապացույցը չի ներկայացրել իր կամքից անկախ հանգամանքներով, ապա դատական ծախսերը, անկախ գործի ելքից, սույն օրենսգրքի 59-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված չափով կրում է դատավարության այդ մասնակիցը:

3. Վերաքննիչ դատարանում բողոքի քննության ժամանակ վարչական դատարանում հաստատված փաստն ընդունվում է որպես հիմք, եթե բողոքում այդ փաստը չի վիճարկվում, կամ վերաքննիչ դատարանն անհրաժեշտ չի համարում կրկին հետազոտել այն:

Հոդված 117.15. Վերաքննիչ դատարանի լիազորությունները

1. Գործն ըստ էության լուծող դատական ակտի վերաքննության արդյունքում վերաքննիչ դատարանը՝

1) մերժում է վերաքննիչ բողոքը՝ դատական ակտը թողնելով անփոփոխ, իսկ այն դեպքում, երբ վերաքննիչ դատարանը մերժում է վերաքննիչ բողոքը, սակայն վարչական դատարանի կայացրած՝ գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտը թերի կամ սխալ է պատճառաբանված, ապա պատճառաբանում է անփոփոխ թողնված դատական ակտը:

2) ամբողջությամբ կամ մասնակիորեն բավարարում է վերաքննիչ բողոքը՝ ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանելով վարչական դատարանի դատական ակտը՝ բեկանված մասով գործն ուղարկելով վարչական դատարան՝ նոր քննության և սահմանելով նոր քննության ծավալը, իսկ չբեկանված մասով դատական ակտը թողնելով անփոփոխ:

3) ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանում և փոփոխում է վարչական դատարանի ակտը՝ կայացնելով նոր դատական ակտ, եթե վարչական դատարանի հաստատած փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս կայացնելու նման ակտ, և եթե դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից, իսկ բողոքարկված և չբեկանված մասով դատական ակտը թողնում է անփոփոխ:

4) ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանում է դատական ակտը և կարճում է գործի վարույթն ամբողջովին կամ դրա մի մասը, իսկ բողոքարկված և չբեկանված մասով դատական ակտը թողնում է անփոփոխ:

2. Միջանկյալ դատական ակտերի դեմ բերված վերաքննիչ բողոքների քննության արդյունքում վերաքննիչ դատարանը, բավարարելով բողոքը, վերացնում է վարչական դատարանի միջանկյալ դատական ակտը կամ կայացնում է նոր դատական ակտ կամ մերժում է վերաքննիչ բողոքը՝ դատական ակտը թողնելով անփոփոխ:

Հոդված 117.16. Վերաքննիչ դատարանի որոշումը

1. Վերաքննիչ բողոքի քննության արդյունքում կայացված որոշումը կազմված է ներածական, նկարագրական, պատճառաբանական և եզրափակիչ մասերից:

2. Որոշման ներածական մասը բովանդակում է՝

1) վերաքննիչ դատարանի լրիվ անվանումը, գործի համարը, որոշման կայացման տարին, ամիսը, ամսաթիվը, վայրն ու վերաքննիչ դատարանի կազմը.

2) վարչական դատարանի անվանումը, դատական ակտի կայացման տարին, ամիսը, ամսաթիվը, դատավորի (դատավորների) անունը, ազգանունը.

3) դատավարության մասնակիցների և նրանց ներկայացուցիչների անունները, ազգանունները (անվանումները), վերաքննիչ բողոք բերած անձի անունը, ազգանունը (անվանումը), վերաքննիչ բողոքի դեմ պատասխան ներկայացվելու դեպքում՝ նաև պատասխանը ներկայացրած անձի անունը, ազգանունը (անվանումը):

3. Որոշման նկարագրական մասը բովանդակում է՝

1) գործի դատավարական գործընթացի նկարագրությունը, վճռի հրապարակման օրը, վարչական դատարանի վճռի եզրափակիչ մասի հակիրճ բովանդակությունը.

2) գործը վերադաս դատարանից նոր քննության ուղարկելու դեպքում՝ նաև համապատասխան դատավարական նախապատմությունը՝ նշելով վերադաս դատարանի սահմանած գործի նոր քննության ծավալը.

3) նշում՝ վարչական դատարանի՝ առանձին ակտի ձևով ընդունած որոշումների մասին.

4) նշում՝ վերաքննիչ դատարանի՝ առանձին ակտի ձևով ընդունած որոշումների մասին.

5) վերաքննիչ բողոքի հիմքերը և հիմնավորումները, վերաքննիչ բողոք բերած անձի պահանջը, վերաքննիչ բողոքի պատասխանի առկայության դեպքում՝ պատասխան ներկայացնողի դիրքորոշումը և հիմնավորումները:

4. Որոշման պատճառաբանական մասը բովանդակում է՝

1) գործով պարզված և վերաքննիչ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, ներառյալ՝

ա. այն փաստերը, որոնք հաստատել է դատարանը և վերաքննիչ բողոքում չեն վիճարկվել,

բ. այն փաստերը, որոնք հաստատել է դատարանը և վերաքննիչ բողոքում վիճարկվել են, սակայն վերաքննիչ դատարանը դրանց վերաբերյալ հանգել է այն եզրակացության, որ տվյալ փաստի մասով վարչական դատարանը սխալ թույլ չի տվել՝ պատճառաբանելով նման եզրակացությունը և հղում կատարելով նման եզրակացության հիմքում ընկած ապացույցների վրա,

գ. այն փաստերը, որոնք հաստատել է վարչական դատարանը և վերաքննիչ բողոքում վիճարկվել են, և վերաքննիչ դատարանը հանգել է այն եզրակացության, որ տվյալ փաստի մասով վարչական դատարանը սխալ է թույլ տվել՝ պատճառաբանելով նման եզրակացությունը և հղում կատարելով նման եզրակացության հիմքում ընկած ապացույցներին: Նման դեպքերում վերաքննիչ դատարանը պետք է նշի, թե վարչական դատարանի հաստատած փաստի փոխարեն ինչ նոր փաստ է հաստատված համարում, կամ

վարչական դատարանի հաստատած որ փաստը հաստատված չի համարվում՝ պատճառաբանելով նման եզրահանգումը և հղում կատարելով վարչական դատարանի հետազոտած համապատասխան ապացույցներին,

դ. այն փաստերը, որոնք չի հաստատել վարչական դատարանը, և այդ հանգամանքը վիճարկվել է վերաքննիչ բողոքում, և վերաքննիչ դատարանը վարչական դատարանի հետազոտած ապացույցների հիման վրա դրանք համարել է հաստատված՝ հղում կատարելով վերաքննիչ բողոք բերած անձի համապատասխան դիրքորոշմանը և առաջին ատյանի դատարանի հետազոտած այն ապացույցներին, որոնք ընկած են փաստի հաստատման հիմքում,

ե. այն փաստերը, որոնք հաստատել է վերաքննիչ դատարանը.

2) եզրահանգում՝ բողոքում առաջադրված յուրաքանչյուր պահանջի հիմնավորվածության վերաբերյալ, մասնավորապես պատասխանելով հետևյալ հարցերին.

ա. արդյո՞ք հիմնավոր է տվյալ պահանջը՝ բողոքում դրա վերաբերյալ նշված հիմնավորումների սահմաններում կամ անկախ դրանցից,

բ. եթե վերաքննիչ բողոքի հիմքում դրված պահանջը հիմնավոր չէ, ապա ի՞նչ պատճառաբանմամբ՝ հղում կատարելով միջազգային պայմանագրի, օրենքի և այլ իրավական ակտի նորմերին, Գերագույն դատարանի այն որոշումներին, որոնց հիման վրա վերաքննիչ դատարանը համարում է, որ բողոքի հիմքում դրված պահանջը հիմնավոր չէ,

գ. եթե վերաքննիչ բողոքի հիմքում դրված պահանջը հիմնավոր է, ապա ի՞նչ հիմնավորմամբ՝ հղում կատարելով միջազգային պայմանագրի, օրենքի կամ այլ իրավական ակտի այն նորմերին, Գերագույն դատարանի այն որոշումներին, որոնց հիման վրա վերաքննիչ դատարանը համարում է, որ բողոքի հիմքում դրված պահանջը հիմնավոր է,

դ. վերաքննիչ բողոքի հիմքում դրված պահանջի հիմնավորվածության դեպքում արդյո՞ք վերաքննիչ բողոքում նշված՝ դատարանի թույլ տված նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի խախտումը ազդել է կամ կարող էր ազդել գործի ելքի վրա՝ պատճառաբանելով համապատասխան եզրահանգումը.

3) սույն օրենսգրքի 117.15-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված լիազորությունը կիրառելու դեպքում՝ գործի նոր քննության ծավալը կամ նշում այն մասին, որ գործը պետք է քննվի ամբողջ ծավալով.

4) եզրահանգումներ՝ գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի վերաբերյալ, եթե վերաքննիչ դատարանը համարել է, որ վարչական դատարանը սխալ է որոշել ապացուցման առարկան կամ սխալ է որոշել գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերը.

5) դատավարության մասնակիցների միջև դատական ծախսերի բաշխման վերաբերյալ վերաքննիչ դատարանի դիրքորոշումը՝ վկայակոչելով համապատասխան իրավական նորմերը:

5. Որոշման եզրափակիչ մասը բովանդակում է՝

1) վերաքննիչ բողոքն ամբողջությամբ կամ մասնակիորեն բավարարելու կամ մերժելու կամ վերաքննիչ վարույթը կարճելու մասին դատարանի եզրակացությունը.

2) վերաքննիչ բողոքը բավարարելու դեպքում՝ համապատասխան դատավարական հետևանքը.

3) եզրակացություն՝ հայցի ապահովման միջոցները պահպանելու կամ վերացնելու վերաբերյալ.

4) եզրակացություն՝ դատավարության մասնակիցների միջև դատական ծախսերը բաշխելու վերաբերյալ.

5) կատարում ենթադրող որոշում կայացնելու դեպքում նշում՝ որոշումը կանոնի չկատարվելու դեպքում որոշումը պարտապանի հաշվին դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով կատարելու մասին.

6) որոշման բողոքարկման ժամկետն ու այն վերադաս դատական ատյանը, որտեղ կարող է բերվել բողոքը:

6. Վերաքննիչ դատարանի որոշումը ստորագրում և կնքում են որոշումը կայացրած դատավորները:

Հոդված 117.17. Վերաքննիչ դատարանի լրացուցիչ որոշումը

1. Սույն օրենսգրքի 117.14-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքում, երբ ապացույց չներկայացրած դատավարության մասնակիցը պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինն է կամ դրա պաշտոնատար անձը, վերաքննիչ դատարանը կայացնում է լրացուցիչ որոշում՝ սույն օրենսգրքի 116-րդ հոդվածով սահմանված կարգով:

Հոդված 117.18. Վերաքննիչ դատարանի որոշման օրինական ուժի մեջ մտնելը

1. Վերաքննիչ դատարանի՝ գործն ըստ էության լուծող որոշումներն օրինական ուժի մեջ են մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո:

2. Վերաքննիչ դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերի դեմ սահմանված ժամկետում վճռաբեկ բողոք բերելիս այդ ակտերն օրինական ուժի մեջ չեն մտնում:

3. Եթե գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերանայման արդյունքում Գերագույն դատարանն ամբողջությամբ կամ մասնակիորեն անփոփոխ է թողնում վերաքննիչ դատարանի դատական ակտը, ապա վերաքննիչ դատարանի անփոփոխ թողնված դատական ակտը (ակտի համապատասխան մասը) օրինական ուժի մեջ է մտնում Գերագույն դատարանի որոշման հրապարակման պահից:

4. Վերաքննիչ դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտն օրինական ուժի մեջ է մտնում Գերագույն դատարանի որոշման կայացման պահից, եթե բերված բողոքը Գերագույն դատարանի կողմից թողնվել է առանց քննության կամ վերադարձվել է, և սահմանված ժամկետում բողոքում առկա սխալները չեն վերացվել, կամ սահմանված կարգով բողոքը կրկին չի բերվել:

5. Վերաքննիչ դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերը կարող են հրապարակման պահից դատարանի կողմից հայտարարվել օրինական ուժի մեջ մտած, եթե դա չանելը անխուսափելիորեն կառաջացնի ծանր հետևանքներ կողմի համար: Նման ակտերը ենթակա են բողոքարկման օրինական ուժի մեջ չմտած ակտերի համար սահմանված կարգով:

6. Վերաքննիչ դատարանի՝ բողոքարկման ոչ ենթակա միջանկյալ ակտերն օրինական ուժի մեջ են մտնում կայացման պահից, եթե սույն օրենսգրքով այլ բան նախատեսված չէ:

7. Վերաքննիչ դատարանի՝ բողոքարկման ենթակա միջանկյալ դատական ակտերն օրինական ուժի մեջ են մտնում դրանք ստանալու պահից հինգ օր հետո:

Հոդված 117.19. Վերաքննիչ դատարանի դատական ակտերի հրապարակումը և դրանք դատավարության մասնակիցներին ուղարկելը

1. Վերաքննիչ դատարանի դատական ակտերը կայացվում կամ հրապարակվում և դատավարության մասնակիցներին են ուղարկվում վարչական դատարանի դատական ակտերի համար սույն օրենսգրքով սահմանված կարգով:

Հոդված 117.20. Դատական սխալի հիմքով դատական ակտի բեկանման հիմքերը

1. Դատական սխալի հիմքով դատական ակտի բեկանման հիմքերն են՝

- 1) նյութական իրավունքի նորմերի խախտումը կամ սխալ կիրառումը.
- 2) դատավարական իրավունքի նորմերի խախտումը կամ սխալ կիրառումը:

Հոդված 117.21. Նյութական իրավունքի նորմերի խախտումը կամ սխալ կիրառումը

1. Նյութական իրավունքի նորմերը համարվում են խախտված կամ սխալ կիրառված, եթե դատարանը՝

1) չի կիրառել այն օրենքը կամ Լեոնային Ղարաբաղի Հանրապետության միջազգային պայմանագիրը կամ իրավական այլ ակտ, որը պետք է կիրառեր.

2) կիրառել է այն օրենքը կամ Լեոնային Ղարաբաղի Հանրապետության միջազգային պայմանագիրը կամ իրավական այլ ակտ, որը չպետք է կիրառեր.

3) սխալ է մեկնաբանել օրենքը կամ Լեոնային Ղարաբաղի Հանրապետության միջազգային պայմանագիրը կամ իրավական այլ ակտ:

2. Նյութական իրավունքի նորմի խախտումը կամ սխալ կիրառումը վճռի բեկանման հիմք է, եթե հանգեցրել է գործի սխալ լուծման:

Հոդված 117.22. Դատավարական իրավունքի նորմերի խախտումը կամ սխալ կիրառումը

1. Դատավարական իրավունքի նորմերի խախտումը կամ սխալ կիրառումը դատական ակտի բեկանման հիմք է, եթե հանգեցրել է կամ կարող էր հանգեցնել գործի սխալ լուծման: Դատարանի՝ ըստ էության ճիշտ դատական ակտը չի կարող բեկանվել միայն ձևական նկատառումներով:

2. Դատական ակտը բոլոր դեպքերում ենթակա է բեկանման, եթե՝

1) դատարանը գործը քննել է ոչ օրինական կազմով, ներառյալ՝ այնպիսի դատավորի կողմից, որը, Արցախի Հանրապետության դատական օրենսգրքի 52-րդ հոդվածի համաձայն, պարտավոր էր ինքնաբացարկ հայտնել.

2) դատարանը գործը քննել է դատավարության մասնակիցներից որևէ մեկի բացակայությամբ, որը պատշաճ չի ծանուցվել նիստի ժամանակի և վայրի մասին.

3) դատական ակտը ստորագրված և կնքված չէ.

4) դատական ակտը ստորագրված և կնքված չէ այն կայացրած դատավորի կամ դատավորների կողմից.

5) դատական ակտը կայացրել է ոչ այն դատավորը, որը մտնում է գործը քննող դատարանի կազմի մեջ.

6) գործից բացակայում է դատական նիստի կամ առանձին դատավարական գործողության կատարման արձանագրությունը.

7) գործը քննվել է ընդդատության կանոնների խախտմամբ.

8) դատական ակտը շոշափում է դատավարության մասնակից չդարձված անձանց իրավունքները և պարտականությունները.

9) առկա են սույն օրենսգրքի 90-րդ հոդվածով սահմանված՝ գործի վարույթը կարճելու հիմքերը:

ԳԼՈՒԽ 20
ՎԱՐՈՒՅԹԸ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴՍԱՐԱՆՈՒՄ

Հոդված 118. Դատական ակտերի վերանայումը վճարելության կարգով

1. Գերագույն դատարանը բողոքի հիման վրա սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում և կարգով վերանայում է վերաքննիչ դատարանի կայացրած և օրինական ուժի մեջ չմտած դատական ակտերը, իսկ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ նաև օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը:

2. Գերագույն դատարանը վերանայում է նաև վերաքննիչ դատարանի կողմից վարչական դատարանի միջանկյալ դատական ակտերի վերանայման արդյունքում կայացված որոշումները:

3. Սույն հոդվածի 2-րդ մասում նշված, ինչպես նաև վերաքննիչ դատարանի միջանկյալ դատական ակտերի դեմ բերված վճարելի բողոքները քննվում են առանց դատական նիստ հրավիրելու:

Հոդված 118.1. Վճարելի բողոք բերելու իրավունքը

1. Վերաքննիչ դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտը Գերագույն դատարանում բողոքարկելու իրավունք ունեն՝

1) դատավարության մասնակիցները.

2) գլխավոր դատախազը կամ նրա տեղակալը՝ պետական շահերի պաշտպանության հարցերով.

3) դատավարության մասնակից չդարձված անձինք, որոնց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ կայացվել է գործն ըստ էության լուծող դատական ակտ:

2. Սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում նշված անձինք Գերագույն դատարանում օգտվում են երրորդ անձի իրավունքներից և կրում նրանց համար սահմանված պարտականությունները:

3. Վերաքննիչ դատարանի միջանկյալ դատական ակտերը և վերաքննիչ դատարանում բողոքարկված վարչական դատարանի միջանկյալ դատական ակտերի վերաբերյալ վերաքննիչ դատարանի որոշումները բողոքարկելու իրավունք ունեն դատավարության մասնակիցները կամ այն անձինք, որոնց իրավունքներին առնչվում է վերաքննիչ դատարանի միջանկյալ դատական ակտը:

Հոդված 118.2. Վճարելի բողոք բերելու սահմանափակումները

1. Վերաքննության կարգով բողոքարկման ենթակա դատական ակտը չի կարող բողոքարկվել Գերագույն դատարան, եթե այն նույն հիմքերով չի բողոքարկվել վերաքննիչ դատարանում, բացառությամբ սույն օրենսգրքի 118.3-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի:

2. Անձը կարող է վճարելի բողոք բերել դատական ակտի՝ միայն իր համար անբարենպաստ մասի դեմ:

Հոդված 118.3. Վճարելի բողոք բերելու ժամկետը

1. Գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ վճարելի բողոք կարող է բերվել մինչև այդ ակտի օրինական ուժի մեջ մտնելու համար սահմանված ժամկետը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված հիմքով դատական ակտը բողոքարկելու դեպքերի:

2. Միջանկյալ դատական ակտի դեմ վճռաբեկ բողոք կարող է բերվել սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ մինչև այդ ակտի օրինական ուժի մեջ մտնելու համար սահմանված ժամկետը:

3. Դատավարության մասնակից չդարձված այն անձինք, որոնց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ կայացվել է վերաքննիչ դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտ, իրավունք ունեն վճռաբեկ բողոք բերելու՝ սկսած այն օրվանից՝ երեք ամսվա ընթացքում, երբ իմացել են կամ կարող էին իմանալ նման դատական ակտի կայացման մասին:

4. Սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքում վճռաբեկ բողոք չի կարող բերվել, եթե դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելուց հետո անցել է քսան տարի:

5. Սույն հոդվածի 1-3-րդ մասերով սահմանված ժամկետները լրանալուց հետո բերված վճռաբեկ բողոքը Գերագույն դատարանը կարող է ընդունել վարույթ, եթե ներկայացված է համապատասխան ժամկետի բացթողումը հարգելի համարելու վերաբերյալ միջնորդություն, և դատարանն այն բավարարել է:

Հոդված 118.4. Վճռաբեկ բողոք բերելու կարգը

1. Վճռաբեկ բողոքն ուղարկվում է Գերագույն դատարան, իսկ բողոքի պատճենը՝ վերաքննիչ դատարան ու դատավարության մասնակիցներին:

2. Գերագույն դատարան չի կարող ներկայացվել հայցի ապահովում կիրառելու, այն փոփոխելու կամ վերացնելու մասին միջնորդություն:

3. Վճռաբեկ բողոքը բերելուց հետո բողոքում արծարծվող պահանջը փոփոխվել կամ լրացվել չի կարող:

4. Վերաքննիչ դատարանը բողոքի պատճենը ստանալու օրվանից ոչ ուշ, քան հաջորդ օրը, իսկ դրա անհնարինության դեպքում՝ սեղմ ժամկետում, սակայն ոչ ուշ, քան բողոք բերելու ժամկետը լրանալուց հետո՝ եռօրյա ժամկետում, պարտավոր է գործը ուղարկել Գերագույն դատարան:

Հոդված 118.5. Վճռաբեկ բողոքի բովանդակությունը

1. Վճռաբեկ բողոքում նշվում են՝

1) դատարանի անվանումը, որին հասցեագրվում է բողոքը.

2) բողոք բերող անձի անունը, ազգանունը (անվանումը), դատավարական կարգավիճակը.

3) դատական ակտ կայացրած դատարանի անվանումը, գործի համարը, դատական ակտի կայացման տարին, ամիսը, ամսաթիվը, դատավարության մասնակիցների անունները, ազգանունները (անվանումները), վեճի առարկան.

4) բողոք բերած անձի պահանջը՝ օրենքների, այլ իրավական ակտերի վկայակոչմամբ, և նշում այն մասին, թե նյութական կամ դատավարական իրավունքի որ նորմերն են խախտվել կամ սխալ կիրառվել, կամ որոնք են նոր երևան եկած կամ նոր հանգամանքների հետևանքով գործի վերանայման հիմքերը և դրանց հիմնավորումները.

5) սույն օրենսգրքի 118.8-րդ հոդվածի 1-ին մասի այն կետի առկայության մասին հիմնավորումները, որը, ըստ բողոք բերող անձի, հիմք է վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու համար.

6) բողոքին կցվող փաստաթղթերի ցանկը:

2. Վճռաբեկ բողոքը սույն օրենսգրքի 118.8-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով ներկայացնելու դեպքում բողոքը բերած անձը պետք է հիմնավորի, որ դրա վերաբերյալ Գերագույն դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի

միատեսակ կիրառության համար, մասնավորապես վճարել բողոքում հիմնավորելով, որ՝

1) առնվազն մեկ այլ գործով ստորադաս դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտում միննույն նորմը կիրառվել է կամ չի կիրառվել հակասող մեկնաբանությամբ՝ կցելով այդ գործով դատական ակտը և մեջբերելով դրա հակասող մասերը՝ կատարելով համեմատական վերլուծություն՝ բողոքարկվող դատական ակտի և նույնանման փաստական հանգամանքներով մեկ այլ գործով ստորադաս դատարանի դատական ակտի միննույն նորմի իրար հակասող մեկնաբանության վերաբերյալ.

2) բողոքարկվող դատական ակտում որևէ նորմի մեկնաբանությունը հակասում է Գերագույն դատարանի որոշման մեջ տվյալ նորմին տրված մեկնաբանությանը՝ կցելով Գերագույն դատարանի դատական ակտը և մեջբերելով դրա հակասող մասերը, կատարելով համեմատական վերլուծություն՝ բողոքարկվող դատական ակտի և նույնանման փաստական հանգամանքներ ունեցող գործով Գերագույն դատարանի դատական ակտի միջև առկա հակասության վերաբերյալ.

3) բողոքարկվող դատական ակտում դատարանի կիրառած նյութական կամ դատավարական իրավունքի նորմի կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր:

3. Վճարել բողոքը սույն օրենսգրքի 118.8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով ներկայացնելու դեպքում վճարել բողոքը բերած անձը վճարել բողոքում պետք է նշի այն նյութական կամ դատավարական նորմը, որը խախտվել է՝ հիմնավորելով, որ այդ խախտմամբ խաթարվել են արդարադատության բուն էությունը, ինչպես նաև նոր կամ նոր երևան եկած հանգամանքի առկայությունը:

4. Վճարել բողոքն ստորագրում են բողոք բերողը, գլխավոր դատախազը կամ նրա տեղակալը: Բողոքին կցվում է ներկայացուցչի՝ սույն օրենսգրքով սահմանված կարգով ձևակերպված լիազորագիրը:

5. Վճարել բողոքին կցվում են նաև օրենքով սահմանված կարգով և չափով պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթը և բողոքի պատճենը գործը քննող դատարան և դատավարության մասնակիցներին ուղարկելու մասին ապացույցները, վճարել բողոքի էլեկտրոնային տարբերակը (էլեկտրոնային կրիչը):

Չոդված 118.6. Վճարել բողոքը հետ վերցնելը

1. Գերագույն դատարան բողոք բերելուց հետո՝ մինչև գործի դատաքննության ավարտը, վճարել բողոք բերած անձն իրավունք ունի դիմում ներկայացնելու բողոքը հետ վերցնելու մասին:

2. Սույն օրենսգրքի 24-րդ գլխով սահմանված այն գործերով, որոնց քննությունը բխում է հանրության կամ պետության շահերից, վճարել բողոք բերելուց հետո բողոք բերող անձն իրավունք չունի ներկայացնելու դիմում բողոքը հետ վերցնելու մասին:

3. Եթե բողոք բերած անձը բողոքը հետ վերցնելու դիմումը ներկայացրել է Գերագույն դատարանի կողմից բողոքը վարույթ ընդունելուց հետո, ապա Գերագույն դատարանը կայացնում է որոշում վճարել վարույթը կարճելու մասին, բացառությամբ սույն օրենսգրքի 24-րդ գլխով սահմանված այն գործերի, որոնց քննությունը բխում է հանրության կամ պետության շահերից: Եթե վճարել բողոք բերել են նաև այլ անձինք, ապա վարույթը կարճվում է միայն տվյալ բողոքի մասով:

Չոդված 118.7. Վճարել բողոքն առանց քննության թողնելը և վերադարձնելը

1. Վճարել բողոքը թողնվում է առանց քննության, եթե՝

1) վճռաբեկ բողոքը բերվել է սահմանված ժամկետը լրանալուց հետո, և բաց թողած ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը բացակայում է կամ մերժվել է.

2) վճռաբեկ բողոքը բերել է այն անձը, որը վճռաբեկ բողոք բերելու իրավունք չունի.

3) բողոքարկվել է այն դատական ակտը, որը ենթակա չէ բողոքարկման վճռաբեկության կարգով.

4) վճռաբեկ բողոք բերած անձը մինչև վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշում կայացնելը դիմում է ներկայացրել վճռաբեկ բողոքը հետ վերցնելու մասին.

5) բողոքում նշված հիմքով նույն գործով Գերագույն դատարանն արդեն իսկ որոշում է կայացրել:

2. Վճռաբեկ բողոքը վերադարձվում է, եթե վճռաբեկ բողոքը չի համապատասխանում սույն օրենսգրքի 118.5-րդ հոդվածի պահանջներին:

3. Վճռաբեկ բողոքը վերադարձնելու կամ առանց քննության թողնելու մասին Գերագույն դատարանը կայացնում է որոշում գործը Գերագույն դատարանում ստանալուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում՝ նշելով առկա թերությունները: Վճռաբեկ բողոքը կրկին բերվելու դեպքում ժամկետները հաշվարկվում են վերստին:

4. Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշմամբ Գերագույն դատարանը սահմանում է մինչև մեկամսյա ժամկետ՝ սխալները շտկելու և վճռաբեկ բողոքը կրկին բերելու համար:

Չորված 118.8. Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմքերը

1. Վճռաբեկ բողոքն ընդունվում է քննության, եթե Գերագույն դատարանը գտնում է, որ՝

1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Գերագույն դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար.

2) առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում:

2. Սույն հոդվածի իմաստով՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Գերագույն դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար, եթե՝

1) առնվազն մեկ այլ գործով ստորադաս դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտում միևնույն նորմը կիրառվել է կամ չի կիրառվել հակասող մեկնաբանությամբ.

2) բողոքարկվող դատական ակտում որևէ նորմի մեկնաբանությունը հակասում է Գերագույն դատարանի որոշման մեջ տվյալ նորմին տրված մեկնաբանությանը.

3) դատարանի կիրառած նյութական կամ դատավարական իրավունքի նորմի կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր:

3. Սույն հոդվածի իմաստով՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, եթե՝

1) բողոքարկվող դատական ակտը կայացնելիս դատարանը թույլ է տվել դատական սխալ, որը խաթարել է արդարադատության բուն էությունը.

2) առկա է նոր կամ նոր երևան եկած հանգամանք:

4. Սույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով՝ դատական սխալ են համարվում սույն օրենսգրքի 117.20-րդ հոդվածով նախատեսված դեպքերը:

5. Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու մասին Գերագույն դատարանը կայացնում է որոշում՝ գործը Գերագույն դատարանում ստանալու օրվանից երեք ամսվա ընթացքում:

6. Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու մասին Գերագույն դատարանի որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման: Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշումն ուղարկվում է բողոք բերող անձին և գործին մասնակցող անձանց՝ այն կայացնելու պահից երկշաբաթյա ժամկետում:

7. Օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի դեմ բերված վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու դեպքում Գերագույն դատարանն իր որոշմամբ կարող է ամբողջությամբ կամ մասնակիորեն կասեցնել դատական ակտի կատարումը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Հոդված 118.9. Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելը

1. Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվում է, եթե՝

1) բացակայում են սույն օրենսգրքի 118.7-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված հիմքերը, և

2) բացակայում են սույն օրենսգրքի 118.8-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերը:

2. Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշումը պետք է լինի պատճառաբանված: Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշման մեջ Գերագույն դատարանը պետք է հիմնավորի վճռաբեկ բողոքում վկայակոչված վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու՝ սույն օրենսգրքի 118.8-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված յուրաքանչյուր հիմքի բացակայությունը:

3. Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին Գերագույն դատարանը կայացնում է որոշում՝ գործը Գերագույն դատարանում ստանալուց հետո՝ երեք ամսվա ընթացքում:

4. Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշումը կայացվում է հանուն Արցախի Հանրապետության:

Հոդված 118.10. Նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի խախտումը կամ սխալ կիրառումը

1. Նյութական կամ դատավարական իրավունքի նորմերը համարվում են խախտված կամ սխալ կիրառված սույն օրենսգրքի 117.21-րդ և 117.22-րդ հոդվածներով սահմանված դեպքերում:

Հոդված 118.11. Վճռաբեկ բողոքի պատասխանը

1. Դատավարության մասնակիցը, ստանալով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու մասին Գերագույն դատարանի որոշումը, մինչև գործի դատաքննությունն իրավունք ունի բողոքի վերաբերյալ իր պատասխանն ուղարկելու Գերագույն դատարան և դատավարության մասնակիցներին:

2. Պատասխանին կցվում են պատասխանի պատճենները դատավարության մասնակիցներին ուղարկելու ապացույցները:

3. Պատասխանը ստորագրում է դատավարության մասնակիցը կամ նրա ներկայացուցիչը:

Հոդված 118.12. Գերագույն դատարանում գործի դատաքննության ժամկետը

1. Գերագույն դատարանը գործը քննում և որոշում է կայացնում ողջամիտ ժամկետում:

Հոդված 118.13. Վարույթ ընդունված վճռաբեկ բողոքի նախապատրաստումը գործի քննությանը

1. Գերագույն դատարանի նախագահը Գերագույն դատարանի դատավորին հանձնարարում է ուսումնասիրել վճռաբեկ բողոքը, գործի նյութերը և զեկուցել Գերագույն դատարանի նիստում:

2. Գերագույն դատարանի դատավորները ծանոթանում են վճռաբեկ բողոքին և գործի նյութերին:

Հոդված 118.14. Գերագույն դատարանում գործի քննության կարգը

1. Գործի դատաքննությունը Գերագույն դատարանում սկսվում է Գերագույն դատարանի դատավորի զեկուցումով: Ձեկուցողը շարադրում է վճռաբեկ բողոքի և վճռաբեկ բողոքի դեմ ներկայացված պատասխանի բովանդակությունը: Գերագույն դատարանի դատավորներն իրավունք ունեն հարցեր տալու զեկուցողին, դատավարության մասնակիցներին:

2. Բողոք բերած անձը և դատավարության մասնակիցներն իրավունք ունեն ներկա լինելու Գերագույն դատարանի նիստին:

3. Բացատրություններ տալու անհրաժեշտության դեպքում Գերագույն դատարանի նիստին կարող են կանչվել բողոք բերած անձը, ինչպես նաև դատավարության մասնակիցները, որոնք պատշաճ ծանուցվում են նիստի ժամանակի և վայրի մասին: Նրանց չներկայանալն արգելք չէ գործի դատաքննության համար:

Հոդված 118.15. Գերագույն դատարանում գործի քննության հետաձգումը, գործի վարույթը կասեցնելը

1. Գերագույն դատարանում գործի քննության հետաձգումը կատարվում է սույն օրենսգրքի 98-րդ հոդվածով սահմանված դեպքերում և կարգով:

2. Գերագույն դատարանում գործի վարույթի կասեցման վրա տարածվում են սույն օրենսգրքի 89-րդ և 89.1-ին հոդվածների կանոնները:

Հոդված 118.16. Գերագույն դատարանում գործի քննության սահմանները

1. Գերագույն դատարանը բողոքարկվող դատական ակտը վերանայում է վճռաբեկ բողոքում ներկայացված պահանջների սահմաններում:

Հոդված 118.17. Գերագույն դատարանի լիազորությունները

1. Գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերանայման արդյունքում Գերագույն դատարանը՝

1) մերժում է վճռաբեկ բողոքը՝ դատական ակտը թողնելով անփոփոխ, իսկ այն դեպքում, երբ Գերագույն դատարանը մերժում է վճռաբեկ բողոքը, սակայն դատարանի կայացրած՝ գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտը թերի կամ սխալ է պատճառաբանված, ապա Գերագույն դատարանը պատճառաբանում է անփոփոխ թողնված դատական ակտը:

2) ամբողջությամբ կամ մասնակիորեն բավարարում է վճռաբեկ բողոքը՝ համապատասխանաբար ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանելով դատական ակտը, բեկանված մասով գործն ուղարկում է համապատասխան դատարան՝ նոր քննության և սահմանում նոր քննության ծավալը, իսկ չբեկանված մասով դատական ակտը թողնում է անփոփոխ:

3) մասնակիորեն բեկանում և փոփոխում է դատական ակտը, եթե ստորադաս դատարանի հաստատած փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս կայացնելու նման ակտ, և եթե դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից, իսկ բողոքարկված և չբեկանված մասով դատական ակտը թողնում է անփոփոխ:

4) ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանում է դատական ակտը և կարճում է գործի վարույթն ամբողջովին կամ դրա մի մասը, իսկ բողոքարկված և չբեկանված մասով դատական ակտը թողնում է անփոփոխ:

5) վերաքննիչ դատարանի կողմից դատական ակտը փոփոխվելու դեպքերում ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանում է վերաքննիչ դատարանի դատական ակտը՝ օրինական ուժ տալով վարչական դատարանի դատական ակտին, իսկ եթե այն թերի կամ սխալ է պատճառաբանված, ապա լրացուցիչ պատճառաբանում է վարչական դատարանի դատական ակտը:

2. Միջանկյալ դատական ակտերի վերանայման արդյունքում Գերագույն դատարանը մերժում է վճռաբեկ բողոքը՝ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ, կամ կայացնում է նոր դատական ակտ, որն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից:

Հոդված 118.18. Գերագույն դատարանի՝ որոշում կայացնելու կարգը

1. Գերագույն դատարանը գործի քննության արդյունքներով կայացնում է որոշում:

2. Որոշումը կայացվում է հանուն Արցախի Հանրապետության:

3. Որոշումը կայացվում է առանց բողոք բերած անձի և Գերագույն դատարանի նիստին բացատրություններ տալու համար կանչված անձանց ներկայության:

4. Գերագույն դատարանի որոշումն ընդունվում է դատավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

5. Որոշումը կայացվում է բաց քվեարկությամբ:

6. Գերագույն դատարանի որոշումն ստորագրում են այն կայացրած դատավորները:

7. Գերագույն դատարանի որոշումը հրապարակվում է նիստում:

Հոդված 118.19. Գերագույն դատարանի որոշումը

1. Գերագույն դատարանի որոշման մեջ նշվում են՝

1) գործի համարը և որոշումը կայացնելու տարին, ամիսը, ամսաթիվը, որոշումը կայացրած Գերագույն դատարանի կազմը.

2) վճռաբեկ բողոք բերած անձի անունը, ազգանունը (անվանումը).

3) գործը քննած դատարանի անվանումը, գործի համարը, որոշում կայացնելու տարին, ամիսը, ամսաթիվը, որոշում կայացրած դատավորի (դատավորների) անունը, ազգանունը.

4) բողոքարկվող դատական ակտի էության համառոտ շարադրանքը, դատավարության մասնակիցների անունները, ազգանունները (անվանումները).

5) հիմքերը, որոնցով դրվել է դատական ակտի իրավաչափությունը որոշելու հարցը.

6) վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու՝ սույն օրենսգրքի 118.8-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերից որևէ մեկի առկայության հիմնավորումը.

7) օրենքները, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջազգային պայմանագրերը և այլ իրավական ակտեր, որոնցով ղեկավարվել է Գերագույն դատարանը որոշում կայացնելիս.

8) դատական ակտը բեկանելիս այն շարժառիթները, որոնցով Գերագույն դատարանը չի համաձայնել այդ ակտը կայացրած դատարանի հիմնավորումներին կամ եզրահանգումներին.

9) վճռաբեկ բողոքի քննության արդյունքներով Գերագույն դատարանի եզրահանգումները:

2. Գերագույն դատարանը, պարզելով, որ վերաքննիչ դատարանի թույլ տված իրավունքի նորմերի խախտումները չեն հանգեցնում դատական ակտի բեկանմանը, պետք է այդ մասին նշի իր որոշման մեջ:

3. Գերագույն դատարանի որոշումը պետք է լինի պատճառաբանված, ապահովի օրենքի միատեսակ կիրառումը, ճիշտ մեկնաբանությունը և նպաստի իրավունքի զարգացմանը:

Հոդված 118.20. Գերագույն դատարանի որոշման օրինական ուժի մեջ մտնելը

1. Գերագույն դատարանի՝ գործն ըստ էության լուծող որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

2. Գերագույն դատարանի՝ սույն օրենսգրքի 118.7-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով և 118.9-րդ հոդվածով նախատեսված որոշումներն օրինական ուժի մեջ են մտնում կայացման պահից, վերջնական են և բողոքարկման ենթակա չեն:

Հոդված 118.21. Գերագույն դատարանի որոշումը վճարել բողոք բերած անձին և դատավարության այլ մասնակիցների ուղարկելը

1. Գերագույն դատարանի որոշումը ուղարկվում է բողոք բերած անձին, դատավարության այլ մասնակիցների և վարչական դատարան այն հրապարակելու օրվանից հետո՝ երկշաբաթյա ժամկետում:»:

Հոդված 15. Օրենսգրքի 121-րդ հոդվածի 1-ին մասից հանել «, ինչպես նաև չի կարող իրականացվել հայցից հրաժարում» բառերը:

Հոդված 16. Օրենսգրքի 125-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 125. Վարչական դատարանի բողոքարկման ենթակա միջանկյալ դատական ակտերը

1. Վերաքննության կարգով բողոքարկման ենթակա են վարչական դատարանի հետևյալ միջանկյալ դատական ակտերը.

1) հայցադիմումի ընդունումը մերժելու մասին.

2) հայցադիմումը վերադարձնելու մասին.

3) հայցի ապահովումը (հակընդդեմ ապահովումը) մերժելու, հայցի ապահովման մեկ միջոցը մեկ այլ միջոցով փոխարինելու, հայցի ապահովումը վերացնելու մասին.

4) լրացուցիչ վճիռ կայացնելը մերժելու մասին.

5) վրիպակները, գրասխալները կամ թվաբանական սխալներն ուղղելու կամ ուղղում կատարելը մերժելու, վճռի պարզաբանումը մերժելու մասին.

6) բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու կամ դրա վերականգնումը մերժելու մասին.

7) դատավարական ժամկետները երկարաձգելու կամ դրա երկարաձգումը մերժելու մասին.

8) կողմին իրավահաջորդով փոխարինելու կամ փոխարինումը մերժելու մասին, ինչպես նաև երրորդ անձանց դատավարության մեջ ներգրավելու դիմումը մերժելու կամ դատավարության մասնակիցների կազմից երրորդ անձին հանելու մասին.

9) նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով կամ գործի քննությանը չմասնակցած անձանց դիմումով դատական ակտը վերանայելու դիմումների վերաբերյալ որոշումը.

10) գործի վարույթը կասեցնելու մասին, բացառությամբ սույն օրենսգրքի 89-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով նախատեսված դեպքի.

11) ինքնաբացարկի մասին դատական ակտերը:

2. Եթե վարչական դատարանը բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու հիմքով որոշում է կայացրել հայցադիմումը վարույթ ընդունելու մասին, ապա բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու մասին որոշումը վերացվելու դեպքում հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը համարվում է վերացված, իսկ հայցադիմումի ընդունումը՝ մերժված:»:

Հոդված 17. Օրենսգրքի 135-րդ հոդվածի՝

1) 1-ին կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրությանը» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության Սահմանադրությանը» բառերով.

2) 2-րդ կետում.

ա. «, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչապետի» բառերը հանել,

բ. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրությունից» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության Սահմանադրությունից» բառերով:

Հոդված 18. Օրենսգրքի 149-րդ հոդվածի 5-րդ մասում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրության 4-րդ հոդվածով» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության Սահմանադրության 7-րդ հոդվածով» բառերով:

Հոդված 19. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ԱՐՅԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝**

Բ. ՍԱՀԱԿՅԱՆ

2019թ. մարտի 20
Ստեփանակերտ
ՀՕ-3-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2019 թվականի
փետրվարի 27-ին

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2013 թվականի ապրիլի 25-ի քրեական օրենսգրքի 364-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների վերաբերյալ ցուցմունք տալուց հրաժարված անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե ողջամտորեն ենթադրում է, որ այն հետագայում կարող է օգտագործվել իր կամ նրանց դեմ:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝**

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

2019թ. մարտի 20
Ստեփանակերտ
ՀՕ-4-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2019 թվականի
փետրվարի 27-ին

**«ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ»
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 1998 թվականի նոյեմբերի 23-ի ՀՕ-35 օրենքի 12-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 12. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով ազատությունից զրկված, ինչպես նաև ազատազրկման վայրերում պատիժ կրող անձանց բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքները

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով արգելանքի վերցված, ձերբակալված և կալանավորված, ինչպես նաև ազատազրկման վայրերում պատիժ կրող անձինք իրավունք ունեն ստանալու բժշկական օգնություն և սպասարկում՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝**

Բ. ՄԱՀԱԿՑԱՆ

2019թ. մարտի 20
Ստեփանակերտ
ՀՕ-5-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2019 թվականի
փետրվարի 27-ին

**«ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Դատախազության մասին» Արցախի Հանրապետության 2018 թվականի հունիսի 27-ի ՀՕ-36-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 32-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետից հանել «վերջին հինգ տարում» բառերը:

Հոդված 2. Օրենքի 37-րդ հոդվածի՝

1) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Դատախազների և քննիչների թեկնածությունների ցուցակը համալրվում է բաց և փակ մրցույթի միջոցով: Բաց մրցույթն անցկացնում է դատախազության որակավորման հանձնաժողովը առնվազն երեք տարին մեկ անգամ: Դատախազների և քննիչների թեկնածությունների ցուցակում լրացումներ կատարելու համար գլխավոր դատախազի հանձնարարությամբ կարող է անցկացվել հավակնորդների փակ մրցույթ: Բաց և փակ մրցույթների կազմակերպման կարգը սահմանվում է գլխավոր դատախազի հրամանով:»:

2) 2-րդ մասում «անցկացվող» բառից հետո լրացնել «բաց» բառը:

Հոդված 3. Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետում՝

1) «դատախազների» բառից հետո լրացնել «և քննիչների» բառերը.

2) «դատախազի» բառից հետո լրացնել «կամ քննիչի» բառերը:

Հոդված 4. Օրենքի 40-րդ հոդվածի՝

1) վերնագրում «դատախազներին» բառից հետո լրացնել «և քննիչներին» բառերը.

2) 1-ին մասում 10-րդ կետի վերջակետը փոխարինել միջակետով և լրացնել հետևյալ բովանդակությամբ 11-րդ կետ.

«11) մինչև հերթական ատեստավորման անցկացումն սույն օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված հիմքով ընդգրկված է եղել դատախազների կամ քննիչների ծառայողական առաջխաղացման ցուցակում:»:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝**

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

2019թ. մարտի 20
Ստեփանակերտ
ՀՕ-6-Ն

Ընդունված է 2019 թվականի
փետրվարի 27-ին

**«ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Պետական կենսաթոշակների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2011 թվականի նոյեմբերի 30-ի ՀՕ-60-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 15-րդ հոդվածում լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ մաս.

«6. Սույն հոդվածով սահմանված կարգով հաշվարկված աշխատանքային կենսաթոշակի չափը չի կարող պակաս լինել Արցախի Հանրապետության կառավարության սահմանած նվազագույն կենսաթոշակի չափից»:

Հոդված 2. Օրենքի 19-րդ հոդվածում լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ մաս.

«3. Սույն հոդվածով սահմանված կարգով հաշվարկված զինվորական կենսաթոշակի չափը չի կարող պակաս լինել Արցախի Հանրապետության կառավարության սահմանած նվազագույն կենսաթոշակի չափից»:

Հոդված 3. Օրենքի 21-րդ հոդվածի 3-րդ մասում «պարտադիր ժամկետային զինվորական ծառայության շարքային կազմի զինծառայողի հաշմանդամության զինվորական» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության կառավարության սահմանած նվազագույն» բառերով:

Հոդված 4. Օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ մասում «պարտադիր ժամկետային զինվորական ծառայության շարքային կազմի մահացած (զոհված) զինծառայողի ընտանիքի անդամի՝ կերակրողին կորցնելու դեպքում զինվորական» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության կառավարության սահմանած նվազագույն» բառերով:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2019 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

2019թ. մարտի 20
Ստեփանակերտ
ՀՕ-7-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

14 մարտի 2019թ.

N 151-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2014 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 1-Ի N 209-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 1-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական անտառային ֆոնդում արմատի վրա բնափայտի բացթողման նվազագույն գները սահմանելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2013 թվականի փետրվարի 14-ի N 44-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 209-Ն որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները.

1) որոշման 2-րդ կետում վերջակետը փոխարինել միջակետով և լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ ենթակետով.

«3) Արցախի Հանրապետության պետական անտառային ֆոնդից մթերված գործափայտի և վառելափայտի արտահանումն Արցախի Հանրապետության տարածքից իրականացվում է «Արցախանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից արտահանման համար ձևակերպված փաստաթղթերի և դրանց վերաբերյալ տրված եզրակացության հիման վրա, իսկ կողահան և ոչ կողահան տախտակի, եզրատախտակի, տակառատախտակի, բրիկետի և փայտածուխի, ինչպես նաև Արցախի Հանրապետության ոչ պետական անտառային ֆոնդից ձեռք բերված (մթերված) գործափայտի և վառելափայտի արտահանումն իրականացվում է Արցախի Հանրապետության բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարության կողմից տրված եզրակացության հիման վրա:».

2) որոշմամբ հաստատված հավելվածի աղյուսակը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ կետով.

« 3.	Տեխնոլոգիական փայտ (մինչև 2 մետր երկարության և մինչև 45 սանտիմետր տրամագիծ ունեցող, արտադրությունում օգտագործման ենթակա բնափայտ, որն առաջանում է ծառի վառելափայտային մասից և չի համապատասխանում գործափայտի որակական հատկանիշներին)	տվյալ տեսակի գործափայտի (ծառատեսակի) համար սահմանված գնի 50 տոկոսի չափով, բայց ոչ պակաս քան 7000	»:
------	--	--	----

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

14 մարտի 2019թ.

N 153-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2004 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N 504 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿՍՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ կետը և «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 21-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական գնումների գործակալությունը վերակազմակերպելու մասին» N 504 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 3-րդ կետի՝

ա. «ա» ենթակետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության ֆինանսների» բառերով,

բ. «գ» ենթակետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության» բառերով.

2) որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածի՝

ա. տեքստում «Լեռնային Ղարաբաղի» բառերը փոխարինել «Արցախի» բառով, բացառությամբ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենք» և «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրք» բառերի՝ իրենց համապատասխան հոլովաձևերով,

բ. 33-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչապետը» բառերը փոխարինել «լիազորված պետական մարմնի ղեկավարը» բառերով,

գ. 41-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«41. Կենտրոնի պետը կարող է ունենալ տեղակալ, որին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է լիազորված պետական մարմնի ղեկավարը: Տեղակալը կենտրոնի պետի բացակայության դեպքում փոխարինում է նրան:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

14 մարտի 2019թ.

N 154-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին և Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-103-Ն հրամանագրին համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ա ղ ղ ղ ղ ղ** է:

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի հունիսի 20-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման կարգը հաստատելու մասին» N 450 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման 2-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր արտադրական ենթակառուցվածքների վարչության պետին» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարին» բառերով, իսկ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ոստիկանության պետին» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության ոստիկանության պետին» բառերով.

2) որոշմամբ հաստատված հավելվածի՝

ա. 1-ին, 15-րդ և 17-րդ կետերում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ոստիկանություն» բառերը և դրանց համապատասխան հոլովածները փոխարինել «Արցախի Հանրապետության ոստիկանություն» բառերով և դրանց համապատասխան հոլովածներով,

բ. 3-րդ և 25-րդ կետերում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր արտադրական ենթակառուցվածքների վարչություն» բառերը և դրանց համապատասխան հոլովածները փոխարինել «Արցախի Հանրապետության Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարություն» բառերով և դրանց համապատասխան հոլովածներով,

գ. 15-րդ և 25-րդ կետերում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր արտադրական ենթակառուցվածքների վարչության պետ» բառերը և դրանց համապատասխան հոլովածները փոխարինել «Արցախի Հանրապետության Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարար» բառերով և դրանց համապատասխան հոլովածներով,

դ. 28-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հարկային մարմինների» բառերը փոխարինել «Հարկային մարմինների» բառերով, իսկ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայություն» բառերը փոխարինել «հարկային մարմին» բառերով:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի հունիսի 20-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում տեխնիկական արատորոշման միջոցների օգտագործմամբ տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության աշխատանքներին ներկայացվող պահանջները սահմանելու մասին» N 451 որոշմամբ սահմանված հավելվածի՝

1) 5-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր արտադրական ենթակառուցվածքների վարչության» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարության» բառերով.

2) 12-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի» բառերը փոխարինել «Արցախի» բառով:

3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի հունիսի 20-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության փաստաթղթին (կտրոնին) ներկայացվող պահանջները և շրջանառության կարգը հաստատելու մասին» N 452 որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածի`

1) 2-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր արտադրական ենթակառուցվածքների վարչության (այսուհետ վարչություն)» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարության (այսուհետ նախարարություն)» բառերով.

2) 4-րդ, 15-րդ, 16-րդ, 18-րդ, 20-րդ, 30-րդ և 32-րդ կետերում «վարչություն» բառը իր համապատասխան հոլովաձևերով փոխարինել «նախարարություն» բառով` համապատասխան հոլովաձևերով.

3) 13-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ոստիկանության» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության ոստիկանության» բառերով.

4) 17-րդ, 21-րդ, 24-րդ, 31-րդ կետերում և Ձև N 2-ում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր արտադրական ենթակառուցվածքների վարչության պետ» բառերը և դրանց համապատասխան հոլովաձևերը փոխարինել «Արցախի Հանրապետության Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարար» բառերով և դրանց համապատասխան հոլովաձևերով:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Բ. ՍԱՀԱԿՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

14 մարտի 2019թ.

N 155-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2004 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 25-Ի N 118 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին և Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-103-Ն հրամանագրին համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ա ղ ղ ղ ղ ղ** է:

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2004 թվականի մարտի 25-ի «ԼՂՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության խորհրդանիշի կանոնադրությունը, նկարագրությունն ու խորհրդանիշը հաստատելու մասին» N 118 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման վերնագրում, որոշմամբ հաստատված թիվ 1 և թիվ 2 հավելվածների վերնագրերում «ԼՂՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ» բառերը փոխարինել «ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ» բառերով.

2) որոշման 1-ին կետում և որոշմամբ հաստատված թիվ 1 և թիվ 2 հավելվածների տեքստում «ԼՂՀ կառավարությանն առընթեր» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության» բառերով.

3) որոշմամբ հաստատված թիվ 2 հավելվածի տեքստում «ԼՂՀ» հապավումը փոխարինել «Արցախի Հանրապետության» բառերով, իսկ «պետական» բառը հանել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՍԱՀԱԿՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

14 մարտի 2019թ.

N 156-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՄԻ 26-Ի N 515-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածի համաձայն՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ս ք ո շ ու մ է**.

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 26-ի «Ոստիկանության ծառայողի վերապատրաստում (որակավորում) անցնելու կարգը և պայմանները հաստատելու ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2004 թվականի ապրիլի 27-ի N 175 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 515-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) 1-ին կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր Լեռնային Ղարաբաղի» բառերը փոխարինել «Արցախի» բառով.

2) 2-րդ կետը «մարտական» բառից հետո լրացնել «, ծառայողական, ֆիզիկական» բառերով.

3) 22-րդ կետը «մարտական» բառից հետո լրացնել «, ֆիզիկական» բառով, իսկ «ծառայողական և մարտական» բառերը փոխարինել «ծառայողական, մարտական և ֆիզիկական» բառերով.

4) 23-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«23. Ծառայողական, մարտական և ֆիզիկական պատրաստականության պարապմունքների կազմակերպման կարգն ու պայմանները սահմանվում են ոստիկանության պետի հրամաններով:».

5) 24-րդ կետի առաջին և երկրորդ պարբերություններում, 25-րդ կետում ու 26-րդ կետի երկրորդ պարբերությունում «Ծառայողական և մարտական» բառերը փոխարինել «Ծառայողական, մարտական և ֆիզիկական» բառերով.

6) 27-րդ կետում՝

ա. հանել «և մարտական» բառերը,

բ. «ծառայության կողմից, որը տեղերում ցույց է» բառերը փոխարինել «, իսկ մարտական և ֆիզիկական պատրաստականության պարապմունքների նկատմամբ՝ ոստիկանության անձնակազմի ֆիզիկական և մարտական պատրաստականության ծառայությունների կողմից, որոնք տեղերում ցույց են» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՍԱՀԱԿՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

14 մարտի 2019թ.

N 157-Ն

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿՍՏԱՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԽՐԱԽՈՒՄՄԱՆ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՖՈՆԴ», «ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՎՃԱՐՈՎԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԱՐՏԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՇՎՈՒՄ ԳՈՑԱՑԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԽՐԱԽՈՒՄՄԱՆ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾԱԽՍԵՐ», «ՆՈՏԱՐԻ ԿՈՂՄԻՑ ՄՍՏՈՒՑՎՈՂ ՎՃԱՐՈՎԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԱՐՏԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՇՎՈՒՄ ԳՈՑԱՑԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԽՐԱԽՈՒՄՄԱՆ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾԱԽՍԵՐ» ԵՎ «ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՎՃԱՐՈՎԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԱՐՏԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՇՎՈՒՄ ԳՈՑԱՑԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԽՐԱԽՈՒՄՄԱՆ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾԱԽՍԵՐ» ԾՐԱԳՐԵՐԻ ԳԾՈՎ ԱՐՏԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՇՎՎՆԵՐԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԾԱԽՍՄԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՆԱԽԱՀԱՇՎՎՆԵՐԸ ԵՎ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արցախի Հանրապետության կառավարության 2019 թվականի մարտի 11-ի N 131-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ա ր ք ղ ո շ մ ւ մ է.**

1. Հաստատել.

1) Արցախի Հանրապետության արդարադատության նախարարության «Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդ», «Քաղաքացիական կացության ակտերի գրանցման վճարովի ծառայություններից արտաբյուջետային հաշվում գոյացած միջոցների հաշվին նյութական խրախուսման և համակարգի զարգացման ծախսեր», «Նոտարի կողմից մատուցվող վճարովի ծառայություններից արտաբյուջետային հաշվում գոյացած միջոցների հաշվին նյութական խրախուսման և համակարգի զարգացման ծախսեր» և «Իրավաբանական անձանց պետական գրանցման վճարովի ծառայություններից արտաբյուջետային հաշվում գոյացած միջոցների հաշվին նյութական խրախուսման և համակարգի զարգացման ծախսեր» ծրագրերի գծով արտաբյուջետային հաշիվների միջոցների ծախսման 2019 թվականի նախահաշիվները՝ համաձայն N 1 հավելվածի.

2) Արցախի Հանրապետության արդարադատության նախարարության «Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդ», «Քաղաքացիական կացության ակտերի գրանցման վճարովի ծառայություններից արտաբյուջետային հաշվում գոյացած միջոցների հաշվին նյութական խրախուսման և համակարգի զարգացման ծախսեր», «Նոտարի կողմից մատուցվող վճարովի ծառայություններից արտաբյուջետային հաշվում գոյացած միջոցների հաշվին նյութական խրախուսման և համակարգի զարգացման ծախսեր» և «Իրավաբանական անձանց պետական գրանցման վճարովի ծառայություններից արտաբյուջետային հաշվում գոյացած միջոցների հաշվին նյութական խրախուսման և համակարգի զարգացման ծախսեր» ծրագրերի գծով արտաբյուջետային հաշիվների միջոցների ծախսման 2019 թվականի գնումների պլանները՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2019 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

**ԱՐՑԱՄԻ ԶԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԶԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԱԿԱՆ
ԽՐԱՄՈՒՍՄԱՆ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԿԱՑՄԱՆ ՖՈՆԴ» ԾՐԱԳՐԻ ԳԾՈՎ
ԱՐՏԱԲՅՈՒՋԵՏԱՑԻՆ ՀԱՇՎԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԾԱԽՄՄԱՆ
2019 ԹՎԱԿԱՆԻ ՆԱԽԱՀԱՇՎԸ**

(հազար ՀՀ դրամ)

	Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՄԵՐ	21 418,8	36 418,8	51 418,8	63 418,8
այդ թվում՝				
ԸՆԹԱՑԻՎ ԾԱԽՄԵՐ	20 418,8	35 418,8	50 018,8	60 418,8
այդ թվում՝				
Աշխատանքի վարձատրություն	10 950,0	19 400,0	27 850,0	33 153,9
այդ թվում՝				
Դրամով վճարվող աշխատավարձեր և հավելավճարներ	10 950,0	19 400,0	27 850,0	33 153,9
Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	950,0	1 900,0	2 850,0	3 798,0
Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ	10 000,0	17 500,0	25 000,0	29 355,9
Ծառայությունների և ապրանքների ձեռք բերում	8 482,5	14 395,0	20 407,5	24 870,0
այդ թվում՝				
Շարունակական ծախսեր	1 545,0	2 570,0	3 595,0	4 760,0
Գործառնական և բանկային ծառայությունների ծախսեր	20,0	20,0	20,0	20,0
Կոմունալ ծառայություններ	25,0	50,0	75,0	100,0
Կապի ծառայություններ	1 500,0	2 500,0	3 500,0	4 500,0
Ապահովագրական ծախսեր				140,0
Գործուղումների և շրջագայությունների ծախսեր	250,0	500,0	750,0	1 000,0
Ներքին գործուղումներ	250,0	500,0	750,0	1 000,0
Պայմանագրային այլ ծառայությունների ձեռք բերում	950,0	1 450,0	2 050,0	2 400,0
Վարչական ծառայություններ	200,0	200,0	200,0	200,0
Համակարգչային ծառայություններ	500,0	900,0	900,0	900,0
Կենցաղային և հանրային սննդի ծառայություններ			500,0	800,0
Ներկայացուցչական ծախսեր	250,0	350,0	450,0	500,0
Այլ մասնագիտական ծառայությունների ձեռք բերում	2 000,0	3 000,0	4 000,0	4 000,0
Մասնագիտական ծառայություններ	2 000,0	3 000,0	4 000,0	4 000,0
Ընթացիկ նորոգում և պահպանում (ծառայություններ և նյութեր)	950,0	1 900,0	2 850,0	3 510,0
Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	250,0	500,0	750,0	900,0
Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	700,0	1 400,0	2 100,0	2 610,0
Նյութեր (ապրանքներ)	2 787,5	4 975,0	7 162,5	9 200,0
Գրասենյակային նյութեր և հագուստ	1 500,0	2 500,0	3 500,0	4 800,0
Տրանսպորտային նյութեր	1 125,0	2 250,0	3 375,0	4 100,0
Կենցաղային և հանրային սննդի նյութեր	62,5	125,0	187,5	200,0
Հատուկ նպատակային այլ նյութեր	100,0	100,0	100,0	100,0
Այլ ծախսեր	986,3	1 623,8	1 761,3	2 394,9
այդ թվում՝				
Հարկեր, պարտադիր վճարներ և տույժեր, որոնք կառավարման տարբեր մակարդակների կողմից կիրառվում են միայնակ նկատմամբ				50,0

Պարտադիր վճարներ				50,0
Այլ ծախսեր	986,3	1 623,8	1 761,3	2 344,9
Այլ ծախսեր	986,3	1 623,8	1 761,3	2 344,9
ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՀԵՏ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ	1 000,0	1 000,0	1 400,0	3 000,0
այդ թվում՝				
ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ	1 000,0	1 000,0	1 400,0	3 000,0
այդ թվում՝				
ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ	1 000,0	1 000,0	1 400,0	3 000,0
այդ թվում՝				
ՄԵՔԵՆԱՆԵՐ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ	1 000,0	1 000,0	1 400,0	3 000,0
այդ թվում՝				
Վարչական սարքավորումներ	1 000,0	1 000,0	1 400,0	3 000,0

Աղյուսակ N 2

**ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ՔԱՂԱՔԱՅԻՄԱԿԱՆ ԿԱՅՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՎՃԱՐՈՎԻ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԱՐՏԱՔՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՇՎՈՒՄ ԳՈՑԱՑԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ
ՀԱՇՎԻՆ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԽՐԱՆՈՒՄՄԱՆ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾԱԽՍԵՐ»
ԾՐԱԳՐԻ ԳԾՈՎ ԱՐՏԱՔՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՇՎԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ
ԾԱԽՍՄԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՆԱԽԱՀԱՇՎԸ**

(հազար ՀՀ դրամ)

	Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	2 496,3	3 696,3	4 396,3	5 996,3
այդ թվում՝				
ԸՆԹԱՅԻՎ ԾԱԽՍԵՐ	2 098,3	3 188,3	3 718,3	5 316,3
այդ թվում՝				
Աշխատանքի վարձատրություն	980,0	2 060,0	2 590,0	4 170,0
այդ թվում՝				
Դրամով վճարվող աշխատավարձեր և հավելավճարներ	980,0	2 060,0	2 590,0	4 170,0
Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	480,0	960,0	1 140,0	1 920,0
Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ	500,0	1 100,0	1 450,0	2 250,0
Ծառայությունների և ապրանքների ձեռք բերում	618,3	628,3	628,3	646,3
այդ թվում՝				
Պայմանագրային այլ ծառայությունների ձեռք բերում	500,0	500,0	500,0	500,0
Համակարգչային ծառայություններ	500,0	500,0	500,0	500,0
Նյութեր (ապրանքներ)	118,3	128,3	128,3	146,3
Գրասենյակային նյութեր և հագուստ	62,3	62,3	62,3	62,3
Կենցաղային և հանրային սննդի նյութեր	20,0	30,0	30,0	30,0
Հատուկ նպատակային այլ նյութեր	36,0	36,0	36,0	54,0
Այլ ծախսեր	500,0	500,0	500,0	500,0
այդ թվում՝				
Այլ ծախսեր	500,0	500,0	500,0	500,0
Այլ ծախսեր	500,0	500,0	500,0	500,0
ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՀԵՏ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ	398,0	508,0	678,0	680,0
այդ թվում՝				
ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ	398,0	508,0	678,0	680,0
այդ թվում՝				
ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ	398,0	508,0	678,0	680,0
այդ թվում՝				
ՄԵՔԵՆԱՆԵՐ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ	398,0	508,0	678,0	680,0
այդ թվում՝				
Վարչական սարքավորումներ	398,0	508,0	678,0	680,0

**ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ՆՈՏԱՐԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ՎՃԱՐՈՎԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ
ԱՐՏԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՇՎՈՒՄ ԳՈՅԱՑԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ՆՅՈՒԹԱՎԿԱՆ
ԽՐԱՆՈՒՄՄԱՆ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾԱԽՍԵՐ» ԾՐԱԳՐԻ
ԳԾՈՎ ԱՐՏԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՇՎԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԾԱԽՍՄԱՆ
2019 ԹՎԱԿԱՆԻ ՆԱԽԱՀԱՇՎԸ**

(հազար ՀՀ դրամ)

	Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	6 029,3	10 329,3	11 029,3	13 829,3
այդ թվում՝				
ԸՆԹԱՑԻՎ ԾԱԽՍԵՐ	4 229,3	8 529,3	9 229,3	12 029,3
այդ թվում՝				
Աշխատանքի վարձատրություն	1 600,0	3 750,0	4 100,0	5 500,0
այդ թվում՝				
Դրամով վճարվող աշխատավարձեր և հավելավճարներ	1 600,0	3 750,0	4 100,0	5 500,0
Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ	1 600,0	3 750,0	4 100,0	5 500,0
Ծառայությունների և ապրանքների ձեռք բերում	2 150,0	2 980,0	3 170,0	3 880,0
այդ թվում՝				
Պայմանագրային այլ ծառայությունների ձեռք բերում	1 700,0	2 100,0	2 140,0	2 700,0
Համակարգչային ծառայություններ	1 500,0	1 500,0	1 500,0	1 500,0
Տեղեկատվական ծառայություններ	100,0	400,0	440,0	800,0
Ներկայացուցչական ծախսեր	100,0	200,0	200,0	400,0
Ընթացիկ նորոգում և պահպանում (ծառայություններ և նյութեր)	150,0	350,0	350,0	500,0
Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	150,0	350,0	350,0	500,0
Նյութեր (ապրանքներ)	300,0	530,0	680,0	680,0
Գրասենյակային նյութեր և հագուստ	100,0	200,0	300,0	300,0
Կենցաղային և հանրային սննդի նյութեր		50,0	100,0	100,0
Հատուկ նպատակային այլ նյութեր	200,0	280,0	280,0	280,0
Այլ ծախսեր	479,3	1 799,3	1 959,3	2 649,3
այդ թվում՝				
Այլ ծախսեր	479,3	1 799,3	1 959,3	2 649,3
Այլ ծախսեր	479,3	1 799,3	1 959,3	2 649,3
ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՀԵՏ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ	1 800,0	1 800,0	1 800,0	1 800,0
այդ թվում՝				
ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ	1 800,0	1 800,0	1 800,0	1 800,0
այդ թվում՝				
ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ	1 800,0	1 800,0	1 800,0	1 800,0
այդ թվում՝				
ՄԵՔԵՆԱՆԵՐ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ	1 800,0	1 800,0	1 800,0	1 800,0
այդ թվում՝				
Վարչական սարքավորումներ	1 800,0	1 800,0	1 800,0	1 800,0

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԼՅՈՒԹԱԿԱՆ
ԽՐԱԽՈՒՄՄԱՆ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՖՈՆԴ» ԾՐԱԳՐԻ ԳԾՈՎ
ԱՐՏԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՇՎԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԾԱԽՄՄԱՆ
2019 ԹՎԱԿԱՆԻ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԸ**

Կոդը	Անվանումը	Գնման ձևը	Չափման միավորը	Քա- նակը	Գումարը (հազար ՀՀ դրամով)
	Ընդամենը				26 850,0
4213	Կոմունալ ծառայություններ				100,0
65111100-1	խմելու ջրի բաշխում	ԲԸԱՀ	դրամ	1	74,8
90511100-1	աղբի հավաքման ծառայություններ	ԲԸԱՀ	դրամ	1	25,2
4214	Կապի ծառայություններ				4 500,0
64211100-1	հանրային հեռախոսային ծառայություններ	ԲԸԱՀ	դրամ	1	1 779,6
64211120-1	միջքաղաքային հեռախոսային ծառայություններ	ԲԸԱՀ	դրամ	1	100,0
32411130-1	համացանց	ԲԸԱՀ	դրամ	1	620,4
64111200-1	փոստային ծառայություններ՝ կապված նամակների հետ	ԲԸԱՀ	դրամ	1	2 000,0
4215	Ապահովագրական ծախսեր				140,0
66511170-1	փոխադրամիջոցների հետ կապված ապահովագրական ծառայություններ	ԲԸԱՀ	դրամ	1	140,0
4216	Վարչական ծառայություններ				200,0
79971100-1	գրքի կազմման և վերջնամշակման ծառայություններ	ԲԸԱՀ	դրամ	1	200,0
4232	Համակարգչային ծառայություններ				900,0
48441300-1	հաշվապահական համակարգչային ծրագրային փաթեթներ	ԲԸԱՀ	դրամ	1	900,0
4236	Կենցաղային և հանրային սննդի ծառայություններ				800,0
55520000-1	հանրային սննդի կազմակերպման ծառայություններ	ԲԸԱՀ	դրամ	1	800,0
4237	Ներկայացուցչական ծախսեր				500,0
15000000-1	սննդամթերք, ըմպելիք, ծխախոտ և հարակից արտադրանք	ԲԸԱՀ	դրամ	1	300,0
39280000-1	հուշանվերներ, խորհրդանշական նվերներ	ԲԸԱՀ	դրամ	1	200,0
4241	Մասնագիտական ծառայություններ				4 000,0
79411220-1	գնահատման հետ կապված խորհր- դատվական ծառայություններ	ԲԸԱՀ	դրամ	1	400,0
70000001-1	անշարժ գույքի հետ կապված ծառայություններ	ԲԸԱՀ	դրամ	1	900,0
70000002-1	շարժական գույքի հետ կապված ծառայություններ	ԲԸԱՀ	դրամ	1	900,0
50100000-1	փոխադրամիջոցների և հարակից սարքերի վերանորոգման, պահպան- ման և դրանց հետ կապված ծառայություններ	ԲԸԱՀ	դրամ	1	900,0
70100000-1	անձնական անշարժ գույքի հետ կապված ծառայություններ	ԲԸԱՀ	դրամ	1	900,0
4251	Շենքերի և կառույցների նորոգում և պահպանում				900,0
45400000-1	շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքներ	ԲԸԱՀ	դրամ	1	900,0
4252	Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում				2 610,0
50111130-1	ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ	ԲԸԱՀ	դրամ	1	775,0
34911230-1	վերանորոգման ծախսային նյութեր և պահեստամասեր	ԲԸԱՀ	դրամ	1	955,0
50111180-1	ավտոմեքենաների լվացման և	ԲԸԱՀ	դրամ	1	180,0

	նմանատիպ ծառայություններ				
50310000-1	գրասենյակային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ	ԲԸԱՀ	դրամ	1	600,0
50800000-1	վերանորոգման և պահպանման գանազան ծառայություններ	ԲԸԱՀ	դրամ	1	100,0
4261	Գրասենյակային նյութեր և հագուստ				4 800,0
24911400-1	ստիճ	ԲԸԱՀ	հատ	150	48,0
39263100-1	գրասենյակային լրակազմ	ԲԸԱՀ	հատ	1	4,5
30197230-1	թղթապանակ	ԲԸԱՀ	հատ	100	10,0
30197234-1	թղթապանակ, կոշտ կազմով	ԲԸԱՀ	հատ	10	10,0
39263410-1	ամրակ	ԲԸԱՀ	տուփ	150	30,0
30197231-1	թղթապանակ, պոլիմերային թաղանթ, ֆայլ	ԲԸԱՀ	հատ	24	48,0
30197631-1	թուղթ, A4 ֆորմատի1 /21x29.7/	ՇՀ	կգ	2800	2 400,0
30199420-1	թուղթ նշումների համար, սոսնձվածքով	ԲԸԱՀ	հատ	61	15,2
30199281-1	ծրար	ԲԸԱՀ	տուփ	8000	800,0
22311600-1	շնորհավորական բացիկներ	ԲԸԱՀ	հատ	25	30,0
39263310-1	օրացույց, սեղանի	ԲԸԱՀ	հատ	40	34,0
39241210-1	մկրատ, գրասենյակային	ԲԸԱՀ	հատ	5	3,7
30197110-1	կարիչի մետաղալարե կապեր	ԲԸԱՀ	տուփ	10	7,0
30197112-1	կարիչի մետաղալարե կապեր, միջին	ԲԸԱՀ	տուփ	165	29,7
22811150-1	նոթատետրեր	ԲԸԱՀ	հատ	8	18,4
30121460-1	տոներային քարտիջներ	ԲԸԱՀ	հատ	10	250,0
48761100-1	հակավիրուսային համակարգչային ծրագրային փաթեթներ	ԲԸԱՀ	դրամ	1	15,0
30192125-1	մարկերներ	ԲԸԱՀ	հատ	25	11,2
30192137-1	մատիտ, գրաֆիտե միջուկով, հասարակ	ԲԸԱՀ	հատ	225	38,3
30192121-1	գրիչ գնդիկավոր	ԲԸԱՀ	հատ	640	96,0
30192128-1	գրիչ գելային	ԲԸԱՀ	հատ	30	36,0
30141210-1	հաշվիչ մեքենաներ	ԲԸԱՀ	հատ	3	18,6
30197331-1	դակիչ, քանոնով	ԲԸԱՀ	հատ	3	14,4
30192100-1	ռետին հասարակ	ԲԸԱՀ	հատ	75	13,5
39292500-1	քանոն	ԲԸԱՀ	հատ	10	4,0
39263200-1	գրասենյակային գիրք, մատյան, 70-200էջ, տողանի, սպիտակ էջերով	ԲԸԱՀ	հատ	10	6,5
30234600-1	ֆլեշ հիշողություններ	ԲԸԱՀ	հատ	2	10,0
30192152-1	կնիք, ավտոմատ, կլոր	ԲԸԱՀ	դրամ	1	6,0
30192111-1	թանաքի բարձիկներ	ԲԸԱՀ	հատ	20	17,0
30192114-1	թանաք, կնիքի բարձիկի համար	ԲԸԱՀ	հատ	11	17,0
39263500-1	սեղմակ	ԲԸԱՀ	հատ	100	8,0
30121470-1	տոներ լազերային տպիչների /հեռապատճենահանող մեքենաների համար	ԲԸԱՀ	հատ	200	750,0
4264	Տրանսպորտային նյութեր				4 100,0
09132100-1	բենզին, պրեմիում	ԲԸԱՀ	դրամ	1	1 000,0
09132200-1	բենզին, ռեզուլյար	ՇՀ	դրամ	1	1 870,0
09410000-1	գազային վառելիք	ԲԸԱՀ	դրամ	1	1 000,0
09211100-1	շարժիչի յուղեր	ԲԸԱՀ	դրամ	1	230,0
4267	Կենցաղային և հանրային սննդի նյութեր				200,0
39522250-1	փոշու հավաքման կտորներ	ԲԸԱՀ	դրամ	1	15,0
39831240-1	մաքրող նյութեր	ԲԸԱՀ	դրամ	1	50,0
39831241-1	օճառ, ձեռքի	ԲԸԱՀ	հատ	15	10,0
39711230-1	թելի պատրաստման էլեկտրական սարքեր	ԲԸԱՀ	հատ	2	10,0
44521120-1	դրան փականներ	ԲԸԱՀ	հատ	5	10,0
31685000-1	էլեկտրական երկարացման լար	ԲԸԱՀ	հատ	5	17,5
39221130-1	բաժակներ	ԲԸԱՀ	դրամ	1	8,0
31531100-1	էլեկտրական լամպեր	ԲԸԱՀ	հատ	65	65,0
19641000-1	պոլիէթիլենային պարկ, աղբի համար	ԲԸԱՀ	հատ	10	4,4
31683300-1	եռաբաշխիչ, վարդակին միացվող, առանց լարի	ԲԸԱՀ	հատ	10	7,5
39836000-1	ավել, սովորական	ԲԸԱՀ	հատ	3	2,6
4269	Հատուկ նպատակային այլ նյութեր				100,0
35111130-1	կրակմարիչներ	ԲԸԱՀ	դրամ	1	88,0

30192157-1	դրոշմակնիքներ	ԲԸԱՀ	հատ	2	12,0
5122	Վարչական սարքավորումներ				3 000,0
39138300-1	բազկաթոռ	ԲԸԱՀ	հատ	3	150,0
39138130-1	աթոռ, աշխատանքային	ԲԸԱՀ	հատ	10	100,0
32550000-1	հեռախոսային սարքեր	ԲԸԱՀ	հատ	8	150,0
38431570-1	ջեռուցիչ սալիկներ	ԲԸԱՀ	հատ	5	100,0
30211220-1	սեղանի համակարգիչներ	ԲԸԱՀ	հատ	3	500,0
39121420-1	կցասեղան՝ պահարանիկով (ղարակով)	ԲԸԱՀ	հատ	4	250,0
31151120-1	անխափան սնուցման աղբյուրներ	ԲԸԱՀ	հատ	4	100,0
39714100-1	օդափոխիչներ	ԲԸԱՀ	հատ	10	200,0
30239110-1	տալիչ սարք, բազմաֆունկցիոնալ, A4, 18 էջ/րոպե արագության	ԲԸԱՀ	հատ	3	373,0
39132110-1	չիրկիզվող պահարան, փաստաթղթերի և այլ արժեքների պահպանման համար	ԲԸԱՀ	հատ	1	90,0
39711230-2	թեյի պատրաստման էլեկտրական սարքեր	ԲԸԱՀ	հատ	1	25,0
32324900-1	հեռուստացույցներ	ԲԸԱՀ	հատ	1	130,0
30237490-1	համակարգչային մոնիտոր	ԲԸԱՀ	հատ	2	130,0
30211230-1	անձնական համակարգիչների կենտրոնական պրոցեսորներ	ԲԸԱՀ	հատ	2	330,0
35121320-1	անվտանգության տեսախցիկներ	ԲԸԱՀ	հատ	2	72,0
30216110-1	սկաներներ համակարգիչների համար	ԲԸԱՀ	հատ	1	50,0
39121520-1	գրապահարաններ	ԲԸԱՀ	հատ	2	200,0
31440000-1	մարտկոցներ	ԲԸԱՀ	դրամ	1	50,0

Աղյուսակ N 2

**ԱՐՑԱՄԻ ԶՆԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՎՃԱՐՈՎԻ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԱՐՏԱԲՑՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՇՎՈՒՄ ԳՈՑԱՑԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ
ՀԱՇՎԻՆ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԽՐԱՄՈՒՍՄԱՆ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾԱԽՄԵՐ»
ԾՐԱԳՐԻ ԳԾՈՎ ԱՐՏԱԲՑՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՇՎԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ
ԾԱԽՄՄԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԸ**

Կոդը	Անվանումը	Գնման ձևը	Չափման միավորը	Քա- նակը	Գումարը (հազար ՀՀ դրամով)
	Ընդամենը				1 326,3
4232	Համակարգչային ծառայություններ				500,0
48331100-1	ծրագրերի կառավարման համակարգչային ծրագրային փաթեթներ	ԲԸԱՀ	դրամ	1	500,0
4261	Գրասենյակային նյութեր և հագուստ				62,3
30197231-1	թղթապանակ, պոլիմերային թաղանթ, ֆայլ	ԲԸԱՀ	տուփ	5	10,0
30197230-1	թղթապանակ	ԲԸԱՀ	հատ	20	2,0
39263410-1	ամրակ	ԲԸԱՀ	տուփ	15	3,0
30197631-1	թուղթ, A4 ֆորմատի1 /21x29.7/	ԲԸԱՀ	տուփ	15	35,1
30199420-1	թուղթ նշումների համար, սոսնձվածքով	ԲԸԱՀ	հատ	20	5,0
30192121-1	գրիչ գնդիկավոր	ԲԸԱՀ	հատ	50	7,2
4267	Կենցաղային և հանրային սենյի նյութեր				30,0
39522250-1	փոշու հավաքման կտորներ	ԲԸԱՀ	դրամ	1	8,0
34921440-1	աղբամաններ	ԲԸԱՀ	հատ	10	22,0
4269	Հատուկ նպատակային այլ նյութեր				54,0
33691176 -1	այլ դեղորայք	ԲԸԱՀ	դրամ	1	54,0
5122	Վարչական սարքավորումներ				680,0
39111230-1	բազմոցներ	ԲԸԱՀ	դրամ	1	350,0
39121400-1	լրագրատեղան	ԲԸԱՀ	հատ	1	40,0
39138130-1	աթոռ, աշխատանքային	ԲԸԱՀ	հատ	4	72,0
32324900-1	հեռուստացույցներ	ԲԸԱՀ	հատ	1	150,0
39121200-1	սեղաններ	ԲԸԱՀ	հատ	1	50,0

39714100-1	օդափոխիչներ	ԲԸԱՀ	հատ	1	18,0
------------	-------------	------	-----	---	------

Աղյուսակ N 3

**ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՆՈՏԱՐԻ ԿՈՂՄԻՑ
ՄԱՏՈՒՑՎՈՂ ՎՃԱՐՈՎԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԱՐՏԱԲՑՈՒՋԵՏԱՑԻՆ ՀԱՇՎՈՒՄ
ԳՈՑԱՑԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԽՐԱՆՈՒՄՄԱՆ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՋԱՐԳԱՑՄԱՆ ԾԱԽՄԵՆ» ԾՐԱԳՐԻ ԳԾՈՎ ԱՐՏԱԲՑՈՒՋԵՏԱՑԻՆ ՀԱՇՎԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ
ԾԱԽՄՄԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԸ**

Կոդը	Անվանումը	Գնման ձևը	Չափման միավորը	Քա- նակը	Գումարը (հազար ՀՀ դրամով)
	Ընդամենը				5 680,0
4232	Համակարգչային ծառայություններ				1 500,0
48331100-1	ծրագրերի կառավարման համակարգչային ծրագրային փաթեթներ	ԲԸԱՀ	դրամ	1	950,0
48200000-1	ցանցային, համացանցային և ներքին ծառայողական կայքի (ինտրանետի) համակարգչային ծրագրային փաթեթներ	ԲԸԱՀ	դրամ	1	550,0
4234	Տեղեկատվական ծառայություններ				800,0
79810000-1	տպագրական ծառայություններ	ԲԸԱՀ	դրամ	1	800,0
4237	Նեկյառցուցական ծախսեր				400,0
98391190-1	ներկայացուցչական ծառայությունների հետ կապված ծախսեր	ԲԸԱՀ	դրամ	1	400,0
4252	Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում				500,0
50310000-1	գրասենյակային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ	ԲԸԱՀ	դրամ	1	500,0
4261	Գրասենյակային նյութեր և հագուստ				300,0
24911400-1	ստիճ	ԲԸԱՀ	հատ	150	4,8
30197230-1	թղթապանակ	ԲԸԱՀ	հատ	100	10,0
30197234-1	թղթապանակ, կոշտ կազմով	ԲԸԱՀ	հատ	27	27,0
39263200-1	գրասենյակային գիրք, մատյան, 70-200էջ, տողանի, սպիտակ էջերով	ԲԸԱՀ	հատ	5	3,3
39263410-1	ամրակ	ԲԸԱՀ	տուփ	20	4,0
30197631-1	թուղթ, A4 Ֆորմատի1 /21x29.7/	ԲԸԱՀ	տուփ	40	93,6
30121500-1	քարտրիջներ	ԲԸԱՀ	հատ	6	120,0
30197112-1	կարիչի մետաղալարե կապեր, միջին	ԲԸԱՀ	տուփ	40	8,8
30192125-1	մարկերներ	ԲԸԱՀ	հատ	15	6,7
30192137-1	մատիտ, գրաֆիտե միջուկով, հասարակ	ԲԸԱՀ	հատ	40	6,8
30192121-1	գրիչ գնդիկավոր	ԲԸԱՀ	հատ	100	15,0
4267	Կենցաղային և հանրային սննդի նյութեր				100,0
39831240-1	մաքրող նյութեր	ԲԸԱՀ	դրամ	1	15,0
39831241-1	օճառ, ձեռքի	ԲԸԱՀ	դրամ	1	10,0
31685000-1	էլեկտրական երկարացման լար	ԲԸԱՀ	հատ	8	28,0
31531100-1	էլեկտրական լամպեր	ԲԸԱՀ	հատ	35	38,5
31683300-1	եռաբաշխիչ, վարդակին միացվող, առանց լարի	ԲԸԱՀ	հատ	10	8,5
4269	Հատուկ նպատակային այլ նյութեր				280,0
30192150-1	կնիք	ԲԸԱՀ	հատ	20	200,0
35111130-1	կրակմարիչներ	ԲԸԱՀ	հատ	10	80,0
5122	Վարչական սարքավորումներ				1 800,0
30211220-1	սեղանի համակարգիչներ	ԲԸԱՀ	հատ	3	555,0
39141100-1	դարակներ	ԲԸԱՀ	դրամ	1	370,0
39138130-1	աթոռ, աշխատանքային	ԲԸԱՀ	հատ	18	432,0
39121300-1	գրասեղան, գրասենյակային /կոմբինացված/	ԲԸԱՀ	հատ	2	320,0
39121410-1	սեղան՝ համակարգչի	ԲԸԱՀ	հատ	2	100,0
39714100-1	օդափոխիչներ	ԲԸԱՀ	հատ	2	23,0

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՎՃԱՐՈՎԻ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԱՐՏԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՇՎՈՒՄ ԳՈՑԱՑԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ
ՀԱՇՎԻՆ ԼՅՈՒԹԱԿԱՆ ԽՐԱՆՈՒՍՄԱՆ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾԱԽՄԵՐ»
ԾՐԱԳՐԻ ԳԾՈՎ ԱՐՏԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՇՎԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ
ԾԱԽՍՄԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԸ**

Կոդը	Անվանումը	Գնման ձևը	Չափման միավորը	Քա- նակը	Գումարը (հազար ՀՀ դրամով)
	Ընդամենը				2 364,0
4232	Համակարգչային ծառայություններ				1 300,0
48331100-1	ծրագրերի կառավարման համակարգչային ծրագրային փաթեթներ	ԲԸԱՀ	դրամ	1	950,0
48200000-1	ցանցային, համացանցային և ներքին ծառայողական կայքի (ինտրանետի) համակարգչային ծրագրային փաթեթներ	ԲԸԱՀ	դրամ	1	350,0
4234	Տեղեկատվական ծառայություններ				100,0
79810000-1	տպագրական ծառայություններ	ԲԸԱՀ	դրամ	1	100,0
4261	Գրասենյակային նյութեր և հագուստ				300,0
24911400-1	սույինձ	ԲԸԱՀ	հատ	150	4,8
30197230-1	թղթապանակ	ԲԸԱՀ	հատ	103	10,3
30197234-1	թղթապանակ՝ կոշտ կազմով	ԲԸԱՀ	հատ	10	10,0
39263410-1	ամրակ	ԲԸԱՀ	տուփ	10	2,0
30197631-1	թուղթ՝ A4 ֆորմատի1 /21x29.7/	ԲԸԱՀ	տուփ	35	81,9
30199420-1	թուղթ նշումների համար ստանձվածքով	ԲԸԱՀ	տուփ	15	12,0
30199281-1	ծրար	ԲԸԱՀ	հատ	140	7,0
30197110-1	կարիչի մետաղալարե կապեր	ԲԸԱՀ	տուփ	4	2,8
30197112-1	կարիչի մետաղալարե կապեր՝ միջին	ԲԸԱՀ	տուփ	20	4,0
30192137-1	մատիտ (գրաֆիտե միջուկով, հասարակ)	ԲԸԱՀ	հատ	20	3,4
30192121-1	գրիչ գնդիկավոր	ԲԸԱՀ	հատ	100	15,0
30192111-1	թանաքի բարձիկներ	ԲԸԱՀ	հատ	8	6,8
30121500-1	քարտրիջներ	ԲԸԱՀ	հատ	7	140,0
4267	Կենցաղային և հանրային սննդի նյութեր				100,0
39831240-1	մաքրող նյութեր	ԲԸԱՀ	դրամ	1	18,5
34921440-1	աղբամաններ	ԲԸԱՀ	հատ	10	22,0
31685000-1	էլեկտրական երկարացման լար	ԲԸԱՀ	հատ	7	24,0
31531100-1	էլեկտրական լամպեր	ԲԸԱՀ	հատ	30	27,0
31683300-1	եռաբաշխիչ, վարդակին միացվող, առանց լարի	ԲԸԱՀ	հատ	10	8,5
5122	Վարչական սարքավորումներ				564,0
30232110-1	լազերային տպիչներ	ԲԸԱՀ	դրամ	1	564,0

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱՎԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱՎԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

14 մարտի 2019թ.

N 158-Ն

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ «ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԽՐԱԽՈՒՄՄԱՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՖՈՆԴ» ԾՐԱԳՐԻ ԳԾՈՎ ԱՐՏԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՇՎԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԾԱԽՍՄԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՆԱԽԱՀԱՇԻՎԸ ԵՎ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արցախի Հանրապետության կառավարության 2019 թվականի մարտի 11-ի N 131-Ն որոշումը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Հաստատել Արցախի Հանրապետության ոստիկանության «Ճանապարհային ոստիկանության նյութական խրախուսման և տեխնիկական զարգացման ֆոնդ» ծրագրի գծով արտաբյուջետային հաշվի միջոցների ծախսման 2019 թվականի նախահաշիվը և գնումների պլանը՝ համաձայն NN 1 և 2 հավելվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2019 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՆԱԽԱՀԱՇԻՎ
2019 ԹՎԱԿԱՆԻ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ
«ՀԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԼՅՈՒԹԱԿԱՆ ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ԵՎ
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՖՈՆԴ» ԾՐԱԳՐԻ ԳԾՈՎ ԱՐՏԱԲՅՈՒՋԵՏԱՑԻՆ ՀԱՇՎԻ
ՄԻՋՈՑՆԵՐԻ ԾԱԽՍՄԱՆ

(հազար դրամ)

	Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	75,000.0	173,244.0	236,365.0	298,000.0
այդ թվում՝				
ԸՆԹԱՑԻՎ ԾԱԽՍԵՐ	66,161.0	143,566.0	197,849.0	250,645.0
այդ թվում՝				
Աշխատանքի վարձատրություն	22,750.0	45,500.0	68,250.0	91,000.0
այդ թվում՝				
Դրամով վճարվող աշխատավարձեր և հավելավճարներ	22,750.0	45,500.0	68,250.0	91,000.0
- Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ	22,750.0	45,500.0	68,250.0	91,000.0
Ծառայությունների և ապրանքների ձեռքբերում	40,411.0	92,066.0	120,599.0	147,940.0
այդ թվում՝				
Շարունակական ծախսեր	1,485.0	2,970.0	4,455.0	5,940.0
- Կապի ծառայություններ	1,485.0	2,970.0	4,455.0	5,940.0
Պայմանագրային այլ ծառայությունների ձեռքբերում	1,075.0	2,150.0	3,225.0	4,300.0
- Տեղեկատվական ծառայություններ	1,050.0	2,100.0	3,150.0	4,200.0
- Կառավարչական ծառայություններ	25.0	50.0	75.0	100.0
Ընթացիկ նորոգում և պահպանում (ծառայություններ և նյութեր)	12,627.9	36,500.0	37,250.0	38,000.0
- Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	11,877.9	35,000.0	35,000.0	35,000.0
- Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	750.0	1,500.0	2,250.0	3,000.0
Նյութեր (ապրանքներ)	25,223.1	50,446.0	75,669.0	99,700.0
- Տրանսպորտային նյութեր	25,223.1	50,446.0	75,669.0	99,700.0
ԱՅԼ ԾԱԽՍԵՐ	3,000.0	6,000.0	9,000.0	11,705.0
Այլ ծախսեր	3,000.0	6,000.0	9,000.0	11,705.0
այդ թվում՝				
Այլ ծախսեր	3,000.0	6,000.0	9,000.0	11,705.0
ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՀԵՏ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ	8,839.0	29,678.0	38,516.0	47,355.0
այդ թվում՝				
ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ	8,839.0	29,678.0	38,516.0	47,355.0
այդ թվում՝				
ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ	8,839.0	29,678.0	38,516.0	47,355.0
այդ թվում՝				
ՄԵՔԵՆԱՆԵՐ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ	8,839.0	29,678.0	38,516.0	47,355.0
այդ թվում՝				
- Տրանսպորտային սարքավորումներ		12,000.0	12,000.0	12,000.0
- Վարչական սարքավորումներ	8,839.0	17,678.0	26,516.0	35,355.0

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ «ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԽՐԱԽՈՒՄՄԱՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՖՈՆԴ» ԾՐԱԳՐԻ ՀԱՇՎԻՆ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ
ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ 2019 ԹՎԱԿԱՆԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆ

Կոդը	Անվանումը	Գուման ձևը	Չափման միավորը	Քա- նակը	Գումարը (հազար դրամով)
	Ընդամենը				195,295.0
4214	Կապի ծառայություններ				5,940.0
64211120-1	միջքաղաքային հեռախոսային ծառայություններ	ԲԸԱՀ	դրամ	1	4,800.0
32411130-1	համացանց	ԲԸԱՀ	դրամ	1	1,140.0
4234	Տեղեկատվական ծառայություններ				4,200.0
22451240-1	բլանկներ	ՇՀ	դրամ	1	1,200.0
22110000-1	տպագրված գրքեր	ԲԸԱՀ	դրամ	1	1,000.0
22451200-1	վկայականներ	ԲԸԱՀ	դրամ	1	1,000.0
22100000-1	տպագրված գրքեր, բրոշյուրներ և թռուցիկներ	ԲԸԱՀ	դրամ	1	1,000.0
4235	Կառավարչական ծառայություններ				100.0
75231200-1	դատական մարմինների հետ կապ- ված վարչական ծառայություններ	ԲԸԱՀ	դրամ	1	100.0
4251	Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում				35,000.0
45000000-1	շինարարական աշխատանքներ	ԲԸԱՀ	դրամ	1	1,000.0
44110000-1	շինարարական նյութեր	ՇՀ	դրամ	1	14,000.0
45331100-1	կենտրոնական ջեռուցման համա- կարգի տեղադրման աշխատանքներ	ԲԸ	դրամ	1	20,000.0
4252	Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում				3,000.0
50311100-1	գրասենյակային հաշվողական սար- քերի պահպանման և վերանորոգման ծառայություններ	ԲԸԱՀ	դրամ	1	1,000.0
50111170-1	ավտոմեքենաների պահպանման ծառայություններ	ԲԸԱՀ	դրամ	1	1,000.0
50111130-1	ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ	ԲԸԱՀ	դրամ	1	1,000.0
4264	Տրանսպորտային նյութեր				99,700.0
09132200-1	բենզին, ռեզուլյար	ՇՀ	դրամ	1	43,700.0
09132100-1	բենզին, պրեմիում	ՇՀ	դրամ	1	20,000.0
09410000-1	գազային վառելիք	ՇՀ	դրամ	1	36,000.0
5121	Տրանսպորտային սարքավորումներ				12,000.0
34100000-1	ավտոմեքենաներ	ԲԸԱՀ	դրամ	1	12,000.0
5122	Վարչական սարքավորումներ				35,355.0
30232110-1	լազերային տպիչներ	ԲԸԱՀ	հատ	7	980.0
30211160-1	կենտրոնական պրոցեսորներ (cpu) կամ պրոցեսորներ	ԲԸԱՀ	հատ	8	960.0
30237490-1	համակարգչային մոնիտոր	ԲԸԱՀ	հատ	7	455.0
31440000-1	մարտկոցներ	ԲԸԱՀ	հատ	290	485.0
39100000-1	կահույք	ՇՀ	դրամ	1	3,000.0
32550000-1	հեռախոսային սարքեր	ԲԸԱՀ	հատ	30	240.0
34971100-1	արագաչափ տեսախցիկներ	ՊԸ	հատ	2	4,200.0
30232231-1	համակարգչի կոշտ սկավառակ	ԲԸԱՀ	հատ	12	349.0
30237460-1	համակարգչային ստեղնաշարեր	ԲԸԱՀ	հատ	10	85.0
30237410-1	համակարգչային մկնիկներ	ԲԸԱՀ	հատ	10	65.0
30236170-1	օպերատիվ հիշողության սարք (oru)	ԲԸԱՀ	հատ	10	200.0
30234630-1	ֆլեշ հիշողություն, 8GB	ԲԸԱՀ	հատ	20	200.0
31521570-1	լապտերներ	ԲԸԱՀ	հատ	30	210.0
30237112-1	սնուցման բլոկ	ԲԸԱՀ	հատ	40	320.0
31100000-1	Էլեկտրական շարժիչներ, գեներա- տորներ և փոխակերպիչներ	ԲԸ	դրամ	1	10,800.0
30237100-1	համակարգիչների մասեր	ԲԸԱՀ	դրամ	1	1,000.0
38651180-1	ֆոտոնկարահանման խցիկ	ԲԸԱՀ	հատ	25	180.0

32341330-1	ռադիոկայաններ	ՊԸ	հատ	30	4,500.0
32351150-1	այեհավաքներ և արտացոլիչներ	ՊԸ	հատ	30	1,200.0
32341130-1	ականջներին դրվող ականջակալներ	ԲԸԱՀ	հատ	15	600.0
42121190-1	ջրի պոմպեր	ԲԸԱՀ	դրամ	1	600.0
31441000-1	մարտկոց, AAA տեսակի	ՊԸ	հատ	50	1,450.0
38431410-1	խմածությունը չափող սարք (ալկոտեստեր)	ՊԸ	հատ	3	2,681.5
32333200-1	տեսագրող սարքեր	ԲԸԱՀ	հատ	20	520.0
30237200-1	համակարգիչների պարագաներ	ԲԸԱՀ	դրամ	1	74.5

**ԱՐՑԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

14 մարտի 2019թ.

N 159-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ «ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿՐՏՄԵՐ
ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՎԱՍՏԱԳԻՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ
ԱՆՑԿԱՑՈՒՄ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ԳԾՈՎ
ԱՐՏԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՇՎԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԾԱԽՄՄԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ
ՆԱԽԱՀԱՇՎԻ ԵՎ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արցախի Հանրապետության կառավարության 2019 թվականի մարտի 11-ի N 131-Ն որոշումը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Հաստատել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի «Քաղաքացիական ծառայության կրտսեր պաշտոն զբաղեցնելու հավաստագիր ստանալու համար թեստավորման անցկացում և համակարգի զարգացում» ծրագրի գծով արտաբյուջետային հաշվի միջոցների ծախսման 2019 թվականի նախահաշիվը և գնումների պլանը՝ համաձայն NN 1 և 2 հավելվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2019 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՆԱԽԱՀԱՇԻՎ

2019 ԹՎԱԿԱՆԻ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ «ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿՐՏՍԵՐ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՎԱՍՏԱԳԻՐ ՄՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԱՆՑԿԱՑՈՒՄ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ԳԾՈՎ ԱՐՏԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՇՎԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԾԱԽՍՄԱՆ

(հազար դրամ)

	Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ		508.4	608.4	708.4
այդ թվում՝				
ԸՆԹԱՑԻՎ ԾԱԽՍԵՐ		508.4	608.4	708.4
այդ թվում՝				
Ծառայությունների և ապրանքների ձեռքբերում		508.4	608.4	708.4
այդ թվում՝				
Շարունակական ծախսեր		20.0	30.0	40.0
- Գույքի և սարքավորումների վարձակալություն		20.0	30.0	40.0
Նյութեր (ապրանքներ)		488.4	578.4	668.4
- Գրասենյակային նյութեր և հագուստ		488.4	578.4	668.4

ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
 ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
 ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

**ԼԵՈՒԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ԽՈՐՀՐԴԻ «ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿՐՏՄԵՐ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ
ՀԱՎԱՍՏԱԳԻՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԱՆՑԿԱՑՈՒՄ ԵՎ
ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՀԱՇՎԻՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ 2019 ԹՎԱԿԱՆԻՆ
ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆ**

Կոդը	Անվանումը	Գնման ձևը	Չափման միավորը	Քա- նակը	Գումարը (հազար դրամով)
	Ընդամենը				708.4
4216	Գույքի և սարքավորումների վարձակալություն				40.0
70221100-1	ոչ բնակելի անշարժ գույքի վարձակալության կամ լիզինգի ծառայություններ	ԲԸԱՀ	դրամ	1	40.0
4261	Գրասենյակային նյութեր և հագուստ				668.4
30197631-1	թուղթ, A4 ֆորմատի1 /21x29.7/	ԲԸԱՀ	տուփ	60	143.4
22821500-1	ամփոփաթեթ	ԲԸԱՀ	հատ	500	100.0
22451200-1	վկայականներ	ԲԸԱՀ	հատ	500	225.0
30121500-1	քարթրիջներ	ԲԸԱՀ	հատ	8	200.0

ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

14 մարտի 2019թ.

N 160-Ն

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ՆՅՈՒԹԱԿԱՆ ԽՐԱԽՈՒՄՄԱՆ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՖՈՆԴ» ԾՐԱԳՐԻ ԳԾՈՎ ԱՐՏԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՇՎԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ
ԾԱԽՍՄԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՆԱԽԱՀԱՇԻՎԸ ԵՎ ԳՆՈՒՄՆԵՐԻ
ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արցախի Հանրապետության կառավարության 2019 թվականի մարտի 11-ի N 131-Ն որոշումը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Հաստատել Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարության «Նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդ» ծրագրի գծով արտաբյուջետային հաշվի միջոցների ծախսման 2019 թվականի նախահաշիվը և գնումների պլանը՝ համաձայն NN 1 և 2 հավելվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2019 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՆԱԽԱՀԱՇԻՎ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՆՅՈՒԹԱԿԱՆ
ԽՐԱՆՈՒՄՄԱՆ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՖՈՆԴ» ԾՐԱԳՐԻ ԳԾՈՎ 2019
ԹՎԱԿԱՆԻ ԱՐՏԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՇՎԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԾԱԽՍՄԱՆ**

(հազար դրամ)

	Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի
ԸՆԴԱՍԵՆԸ ԾԱԽՍԵՐ	50,038.96	66,038.96	86,038.96	107,038.96
այդ թվում՝				
ԸՆԹԱՑԻՎ ԾԱԽՍԵՐ	38,367.5	50,287.5	65,412.2	78,907.5
այդ թվում՝				
Աշխատանքի վարձատրություն	29,667.5	34,787.5	41,187.5	47,907.5
այդ թվում՝				
Դրամով վճարվող աշխատավարձեր և հավելավճարներ	29,667.5	34,787.5	41,187.5	47,907.5
- Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ	29,667.5	34,787.5	41,187.5	47,907.5
Ծառայությունների և ապրանքների ձեռքբերում	8,700.0	15,500.0	24,224.6	31,000.0
Գործուղումների և շրջագայությունների ծախսեր	1,000.0	2,500.0	3,500.0	4,000.0
- Արտասահմանյան գործուղումներ	1,000.0	2,500.0	3,500.0	4,000.0
Պայմանագրային այլ ծառայությունների ձեռք բերում	1,200.0	3,500.0	6,712.0	9,000.0
- Տեղեկատվական ծառայություններ		1,200.0	2,212.0	3,000.0
- Ներկայացուցչական ծախսեր	500.0	1,000.0	1,500.0	2,000.0
- Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	700.0	1,300.0	3,000.0	4,000.0
Ընթացիկ նորոգում և պահպանում (ծառայություններ և նյութեր)	3,000.0	5,000.0	7,612.6	10,000.0
- Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	3,000.0	5,000.0	7,612.6	10,000.0
Նյութեր (ապրանքներ)	3,500.0	4,500.0	6,400.0	8,000.0
- Տրանսպորտային նյութեր		300.0	500.0	500.0
- Կենցաղային և հանրային սննդի նյութեր		200.0	500.0	500.0
- Հատուկ նպատակային այլ նյութեր	3,500.0	4,000.0	5,400.0	7,000.0
ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՀԵՏ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ	11,671.4	15,751.4	20,626.8	28,131.4
այդ թվում՝				
ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ	11,671.4	15,751.4	20,626.8	28,131.4
այդ թվում՝				
ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ	11,671.4	15,751.4	20,626.8	28,131.4
այդ թվում՝				
- Շենքերի և շինությունների ձեռքբերում		2,059.0	3,500.0	5,000.0
- Վարչական սարքավորումներ	11,671.4	13,692.4	17,126.8	23,131.4

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

Հավելված N 2
Արցախի Հանրապետության կառավարության
2019 թվականի մարտի 14-ի N 160-Ն որոշման

Կոդը	Անվանումը	Գնման ձևը	Չափման միավորը	Քա- նակը	Գումարը (հազար դրամով)
Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարության նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդ					55,131.4
4234	Տեղեկատվական ծառայություններ				3,000.0
39294200-1	Տեղեկատվական և գովազդային արտադրանք	ԲԸԱՀ	դրամ		1,000.0
79800000-1	Տպագրական և դրան առնչվող ծառայություններ	ԲԸԱՀ	դրամ		1,000.0
22451240-1	Բյանկներ	ԲԸԱՀ	դրամ		1,000.0
4237	Ներկայացուցչական ծախսեր				2,000.0
98391190-1	Ներկայացուցչական ծառայությունների հետ կապված ծախսեր	ԲԸԱՀ	դրամ		1,000.0
39281100-1	Հուշանվերներ	ԲԸԱՀ	դրամ		1,000.0
4239	Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ				4,000.0
79631300-1	Աշխատակազմի զարգացման ծառայություններ	ԲԸԱՀ	դրամ		1,000.0
98390000-1	Այլ ծառայություններ	ԲԸԱՀ	դրամ		1,000.0
98391210-1	Հատուկ նշանակության այլ ծառայություններ	ԲԸԱՀ	դրամ		1,000.0
48331100-1	Ծրագրերի կառավարման համակարգչային ծրագրային փաթեթներ	ԲԸԱՀ	դրամ		1,000.0
4251	Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում				10,000.0
45461100-1	Շենքերի և շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքներ	ՊԸ	դրամ		9,000.0
44140000-1	Շինարարական նյութերին առնչվող ապրանքներ	ԲԸԱՀ	դրամ		1,000.0
4264	Տրանսպորտային նյութեր				500.0
09132100-1	Բենզին պրեմիում	ԲԸԱՀ	դրամ		500.0
4267	Կենցաղային և հանրային սննդի նյութեր				500.0
39220000-1	Խոհանոցային սարքեր, տնային և կենցաղային իրեր և հանրային սննդի կազմակերպման նյութեր	ԲԸԱՀ	դրամ		500.0
4269	Հատուկ նպատակային այլ նյութեր				7,000.0
44423400-1	Ցուցանակ և հարակից առարկաներ	ԲԸԱՀ	դրամ		1,000.0
35121150-1	Կապարակնիքներ	ՊԸ	դրամ		6,000.0
5111	Շենքերի և շինությունների ձեռք բերում				5,000.0
70121200-1	Ոչ բնակելի անշարժ գույքի գնման ծառայություններ	ԲԸԱՀ	դրամ		5,000.0
5122	Վարչական սարքավորումներ				23,131.4
30239110-1	Տպիչ սարք բազմաֆունկցիոնալ A4, 18 էջ/րոպե արագություն	ԲԸԱՀ	դրամ		1,000.0
30211110-1	Ունիվերսալ (մեյնֆրեյմ) համակարգիչ	ՇՀ	դրամ		4,511.4
48820000-1	Սերվերներ	ՇՀ	դրամ		8,000.0
31151120-1	Անխափան սնուցման աղբյուրներ	ՇՀ	դրամ		7,000.0
39141120-1	Դարակներով պահարաններ	ՇՀ	դրամ		620.0
39120000-1	Սեղաններ, խոհանոցային պահարաններ, գրասեղաններ և գրապահարաններ	ԲԸԱՀ	դրամ		1,000.0
39111190-1	Բազկաթոռներ	ԲԸԱՀ	դրամ		500.0
32321180-1	Տեսասարքեր	ԲԸԱՀ	դրամ		500.0

ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

20 մարտի 2019թ.

N 177-Ն

ք. Ստեփանակերտ

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՑԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Արցախի Հանրապետության Շահումյանի շրջանի Ծարի գյուղական համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության 7,4088 հեկտար արոտավայրը՝ համաձայն հավելվածի, փոխադրել էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների նպատակային նշանակության՝ էներգետիկայի օբյեկտների հողերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

20 մարտի 2019թ.

N 179-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2003 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 26-Ի N 248 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեոնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **նր նշում է.**

1. Լեոնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2003 թվականի օգոստոսի 26-ի «Ստեփանակերտի տուն-ինտերնատ» պետական ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու մասին» N 248 որոշմամբ հաստատված հավելվածում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունը.

1) 3.4-րդ կետում լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություն. «Տնօրենն ունի տեղակալ, որին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է լիազորված պետական մարմնի ղեկավարը:».

2) 3.6-րդ կետում «գործառույթներ իրականացնող անձի» բառերը փոխարինել «և տնօրենի տեղակալի» բառերով.

3) 3.11-րդ կետում «իրականացնում է» բառերից հետո լրացնել «տնօրենի տեղակալը, իսկ նրա բացակայության դեպքում՝» բառերը.

4) 3.12-րդ կետի «ե» ենթակետում «աշխատողներին» բառից հետո լրացնել « բացառությամբ տնօրենի տեղակալի» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

20 մարտի 2019թ.

N 180-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 19-Ի N 9-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ռ ր ռ շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունվարի 19-ի «Պետական կենսաթոշակների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին» N 9-Ն որոշմամբ հաստատված N 2 հավելվածի 15-րդ կետում «մինչև» բառից առաջ լրացնել «հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի որոշման ընդունման օրվանից» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՍԱՀԱԿՅԱՆ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆ**

ԱՀ վերաքննիչ դատարանի որոշում Քաղաքացիական գործ ԸԻԴ/2638/02/17
Քաղաքացիական գործ ԸԻԴ/2638/02/17
Նախագահող դատավոր՝ Մ.Ավանեսյան
Դատավորներ՝ Ն. Գրիգորյան
Ռ. Ջհանգիրյան

**ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ք.Ստեփանակերտ

12 մարտի 2019թ.

Արցախի Հանրապետության Գերագույն դատարանը (այսուհետ՝ Գերագույն դատարան)՝ վճռաբեկության կարգով.

նախագահությամբ՝	Ն.Նարիմանյանի
մասնակցությամբ՝ դատավորներ	Հ.Խաչատրյանի Ա.Աբրահամյանի Ի.Կարապետյանի Կ. Ղարայանի

գրավոր ընթացակարգով քննարկելով ըստ հայցի Ֆլորա Սարգսյանի ընդդեմ Ռաֆիկ Թովմասյանի ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու պահանջի վերաբերյալ և ըստ հակընդդեմ հայցի Ռաֆիկ Թովմասյանի ընդդեմ Ֆլորա Սարգսյանի՝ ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու պահանջի վերաբերյալ քաղաքացիական գործով ԱՀ վերաքննիչ դատարանի 2019 թվականի փետրվարի 13-ի «Վճռում առկա գրասխալներն ուղղելու վերաբերյալ» որոշման դեմ պատասխանող /հակընդդեմ հայցվոր/ Ռ. Թովմասյանի ներկայացուցիչ Ա. Մաղաթյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1.Գործի դատավարական նախապատմությունը.

Ֆլորա Սարգսյանը 2017թ. օգոստոսի 28-ին հայց է ներկայացրել ԱՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան /այսուհետ՝ նաև Դատարան/ ընդդեմ Ռաֆիկ Թովմասյանի, ԱՀ կառավարության աշխատակազմի անշարժ գույքի կադաստրի վարչության՝ ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու և վարչական ակտն անվավեր ճանաչելու մասին պահանջներով:

Դատարանի /դատավոր Կ.Մելքունյան/ 2017թ. օգոստոսի 31-ի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է:

Ֆլորա Սարգսյանը /այսուհետ, նաև՝ Հայցվոր/ 2017թ. սեպտեմբերի 13-ին հայցադիմում է ներկայացրել Դատարան ընդդեմ Ռաֆիկ Թովմասյանի /այսուհետ, նաև՝ Պատասխանող/՝ ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու մասին պահանջով:

Դատարանի /դատավոր Կ.Մելքունյան/ 2017թ. սեպտեմբերի 15-ի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ և հարուցվել քաղաքացիական գործ:

Դատարանի 2017թ. սեպտեմբերի 15-ի որոշմամբ Հայցվորի միջնորդությունը՝ հայցի ապահովման միջոց կիրառելու մասին, մերժվել է:

Դատարանի 2017թ. հոկտեմբերի 31-ի որոշմամբ գործով հրավիրվել է նախնական դատական նիստ:

Դատարանի /դատավոր Կ.Մելքումյան/ 2018թ. փետրվարի 22-ի որոշմամբ Հայցվորի ներկայացուցչի միջնորդությունը՝ ինքնաբացարկ հայտնելու մասին, բավարարվել է և գործով դատավորը հայտնել է ինքնաբացարկ:

Ինքնաբացարկ հայտնելու հիմքով, ԸԻԴ/2638/02/17 քաղաքացիական գործը փոխանցվել է դատավոր Լ.Աղաբեկյանին:

Դատարանի 2018թ. փետրվարի 26-ի որոշմամբ քաղաքացիական գործն ընդունվել է վարույթ և գործով հրավիրվել նախնական դատական նիստ:

Պատասխանող Ռաֆիկ Թովմասյանը 2018թ. մարտի 12-ին հակընդդեմ հայց է ներկայացրել Դատարան ընդդեմ Ֆլորա Սարգսյանի՝ ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու մասին պահանջով:

Դատարանի 2018թ. մարտի 14-ի որոշմամբ հակընդդեմ հայցն ընդունվել է վարույթ և գործով հրավիրվել նախնական դատական նիստ:

Դատարանի 2018թ. մայիսի 7-ի որոշմամբ Հայցվորի միջնորդությունը՝ հայցի ապահովման միջոց կիրառելու մասին, բավարարվել է և արգելվել Պատասխանողին ԱՀ Մարտունու շրջանի Ճարտար համայնքում գտնվող 0,0591 հա մակերեսով հողամասի և 50,95 քառ. մետր մակերեսով բնակելի տան նկատմամբ որոշակի գործողություններ կատարել, այդ թվում՝ քանդման և շինարարական գործողություններ, մինչև գործով ըստ էության դատական ակտ կայացնելը:

Դատարանի 2018թ. մայիսի 16-ի որոշմամբ Հայցվորի ներկայացուցչի միջնորդությունը բավարարվել է և Արգո Սարգսյանը, Սվետլանա Թովմասյանը, Կամո և Վազիֆ Թովմասյանները, Էրիկ, Կարինե, Գարիկ Սարգսյանները ներգրավվել են գործով որպես ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձինք:

Դատարանի 2018թ. օգոստոսի 31-ի որոշմամբ գործը նշանակվել է դատաքննության:

Դատարանի 2018թ. նոյեմբերի 21-ի վճռով սկզբնական հայցը բավարարվել է, հակընդդեմ հայցը՝ մերժվել:

Դատարանը 2019թ. հունվարի 18-ին որոշում է կայացրել 2018թ. նոյեմբերի 21-ի վճռում առկա գրասխալներն ուղղելու վերաբերյալ:

Նշված որոշման դեմ Պատասխանողի ներկայացուցիչ Արտյուշա Մաղաթյանը 2019թ. փետրվարի 05-ին ներկայացրել է վերաքննիչ բողոք՝ միաժամանակ միջնորդելով հարգելի համարել վերաքննիչ բողոք բերելու համար օրենքով սահմանված ժամկետը բաց թողնելը:

Վերաքննիչ բողոքը Վերաքննիչ դատարանի դատական կազմին է հանձնվել 2019թ. փետրվարի 6-ին:

Վերաքննիչ դատարանը 2019թ. փետրվարի 13-ի որոշմամբ Ռաֆիկ Թովմասյանի ներկայացուցիչ Ա.Մաղաթյանի վերաքննիչ բողոքը մերժել է՝ ԱՀ ընդհանուր իրավասության առաջին ստյանի դատարանի 2019թ. հունվարի 18-ի՝ «Վճռում առկա գրասխալներն ուղղելու մասին» որոշումը թողնելով օրինական ուժի մեջ:

Վերաքննիչ դատարանի նշված որոշման դեմ 2019թ. փետրվարի 20-ին վճռաբեկ բողոք է բերել պատասխանող /հակընդդեմ հայցվոր/ Ռ.Թովմասյանի ներկայացուցիչ Ա.Մաղաթյանը՝ խնդրելով բեկանել ԱՀ վերաքննիչ դատարանի 13.02.2019թ. ԸԻԴ 2638/02/17թ. քաղաքացիական գործով կայացված որոշումը և կայացնել նոր դատական ակտ՝ Դատարանի 18.01.2019թ. որոշումը վերացնելու մասին:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2.Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով:

Բողոքաբերը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը խախտել և սխալ է մեկնաբանել ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 133-րդ

հողվածը, որի արդյունքում կայացրել է չհիմնավորված և չպատճառաբանված դատական ակտ, որն էլ ենթակա է վերացման:

Բողոք բերած անձը նշված պատճառաբանությունը հիմնավորում է հետևյալ փաստարկներով.

Կայացված որոշումը հակասում է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 133-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին, քանի որ դատարանը, նպատակ հետապնդելով վճիռը համապատասխանեցնել սկզբնական հայցադիմումի պահանջներին, նշված որոշմամբ միանշանակ փոխել է նախկինում կայացված վճռի բովանդակությունն ու էությունը՝ դրանով իսկ վճռից հանելով իր կողմից թույլ տրված դատավարական նորմի խախտմամբ իրականացված քննության արդյունքում կայացրած վճռահատությունը, փաստորեն կատարել է ոչ թե սխալի ուղղում, այլ դատավարական նորմի խախտման վերացում:

Վերաքննիչ դատարանը, մեկնաբանելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 133-րդ հոդվածը, նշել է, որ այդ նորմի վերլուծությունից հետևում է. «Այն դեպքում, երբ դատարանը վճռում թույլ է տվել որոշակի վրիպակ, գրասխալ կամ թվաբանական սխալ, ապա մինչև վճռի կատարումն իրավասու է իր նախաձեռնությամբ կամ գործին մասնակցող անձանց դիմումով ուղղել դրանք:

Վրիպակները, գրասխալները՝ վճիռը շարադրելիս դատարանի կողմից թույլ տրված բառերի, անունների, ամսաթվերի, վճռի գործողության և կատարման համար նշանակություն ունեցող այլ տեղեկությունների վերաբերյալ տեղ գտած սխալագրություններն են»:

Վերաքննիչ դատարանը միաժամանակ նշել է, որ վրիպակի, գրասխալի ուղղումը թույլատրելի է, եթե գործում առկա նյութերը ստուգելիս ակնհայտ է դառնում, որ տվյալ անճշտությունը պատահական սխալի, անուշադրության հետևանք է: Դատարանը չի հիմնավորել, թե ինչու մն է կայանում պատահականությունը:

Եթե իրավունքի գրանցումն անվավեր ճանաչելու մասին պահանջ չի եղել, բայց դատարանն այդ մասին կայացրել է վճիռ, ապա դա նշանակում է, որ դատարանը դուրս է եկել իր լիազորությունների ու հայցի առարկայի շրջանակներից, որի մասին, որպես վճիռը բեկանելու հիմք, մի շարք հիմքերի հետ միասին նշվել է նաև այդ հիմքը: Բողոքարկվող որոշմամբ դատարանը, փաստորեն, հայցի ծավալից դուրս կայացրած վճիռը, փորձել է համապատասխանեցնել հայցի առարկային:

Վերաքննիչ դատարանն առանց հիմնավորելու թույլատրելի է համարել փոփոխել այնպիսի վրիպակներ, գրասխալներ, որոնք չեն համապատասխանում կայացրած վճռի բովանդակությանը, իմաստին ու դատարանի արտահայտած կամքին:

Նշված պատճառաբանությամբ բողոքաբերը պահանջել է բեկանել և փոփոխել Վերաքննիչ դատարանի 2019 թվականի փետրվարի 13-ի որոշումը՝ վերացնելով Առաջին աստիճանի դատարանի «Վճռում թույլ տրված գրասխալներն ուղղելու մասին» որոշումը:

3.Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Սույն վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1/ Գործի նյութերի և գործով 21.11.2018թ. կայացված վճռի համաձայն՝ Հայցվորը, դիմելով Դատարան ընդդեմ Պատասխանողի, խնդրել է իրեն ճանաչել ժառանգությունն ընդունած ժառանգ, իսկ Պատասխանողն էլ իր հերթին ընդդեմ Հայցվորի ներկայացրել է հակընդդեմ հայց՝ խնդրելով նույն ժառանգական գույքի նկատմամբ իրեն ճանաչել ժառանգությունն ընդունած ժառանգ: Դատարանը, քննելով հարուցված քաղաքացիական գործը և հետազոտելով դրան կից ապացույցները, արձանագրել է, որ փաստացի տիրապետման եղանակով ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու

վերաբերյալ կողմերի միջև ծագած իրավահարաբերության նկատմամբ կիրառելի են վճռում շարադրված իրավական նորմերն ու բավարարման ենթակա է սկզբնական հայցը:

2/ ԱՀ կառավարության աշխատակազմի անշարժ գույքի կադաստրի վարչությունը որպես դատավարության մասնակից չի ներգրավվել, նրա ներկայացուցիչը դատական նիստերի տեղի և ժամանակի մասին չի ծանուցվել, դատաքննության ընթացքում իրավունքի պետական գրացման մասին պահանջը քննության առարկա չի եղել ու դրա վերաբերյալ որևէ հանգամանք չի պարզվել:

3/ Կայացրած վճռի ներածական, նկարագրական, պատճառաբանական և եզրափակիչ մասերում Դատարանը նշել է նաև ԱՀ կառավարության աշխատակազմի անշարժ գույքի կադաստրի վարչության դեմ ներկայացված պահանջը իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու մասին:

4/ Վերաքննիչ դատարանը Առաջին ատյանի դատարանի 2019 թվականի փետրվարի 13-ի «Վճռում առկա գրասխալներն ուղղելու մասին» որոշումը թողել է օրինական ուժի մեջ հետևյալ պատճառաբանությամբ. «Դատարանի բողոքարկվող որոշմամբ գրասխալն ուղղելու եղանակով Դատարանի վճռից հանվել են այնպիսի նախադասություններ ու բառակապակցություններ, որոնք չեն կարող փոփոխել վճռի էությունն ու բովանդակությունը, քանի որ դրանք հանելու մասին որոշում կայացնելու արդյունքում չեն փոփոխվել գործում առկա ապացույցների հետազոտման, փաստերի հաստատման, իրավական ակտերի նորմերի կիրառման, մեկնաբանման ճանապարհով արված եզրահանգումները»:

4. Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Գերագույն դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելը բխում է օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառնությունից և գտնում, որ սույն գործով արտահայտված իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն ունեն նմանատիպ գործերով միասնական դատական պրակտիկա ձևավորելու, ինչպես նաև իրավունքի զարգացմանը նպաստելու գործում:

Սույն վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում Գերագույն դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ վճռում թույլ տրված գրասխալն ուղղելու առանձնահատկություններին:

Ըստ այդմ Գերագույն դատարանի խնդիրն է պատասխանել հետևյալ իրավական հարցադրմանը. արդյո՞ք վիճարկվող որոշմամբ վճռում կատարված ուղղումը գրասխալ է, թե՞ դատական սխալ:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ԼՂՀ դատարաններում քաղաքացիական գործերով դատավարության կարգը սահմանվում է ԼՂՀ Սահմանադրությամբ, քաղաքացիական դատավարության օրենսգրքով, դատական օրենսգրքով և դրանց համապատասխան ընդունված այլ օրենքներով:

Նույն օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը վեճերը և այլ գործերը լուծում է ԼՂՀ Սահմանադրության, օրենքների և դրանց համապատասխան ընդունված այլ իրավական ակտերի հիման վրա:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 133-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ վճիռ կայացրած դատարանն իրավունք ունի գործին մասնակցող անձանց դիմումով կամ իր նախաձեռնությամբ պարզաբանել վճիռը, ուղղել թույլ տրված վրիպակները, գրասխալները և թվաբանական սխալները՝ չփոփոխելով վճռի բովանդակությունը և էությունը: Վճիռը պարզաբանելու կամ վրիպակները, գրասխալները և թվաբանական սխալներն ուղղելու մասին պահանջը կարող է ներկայացվել մինչև վճռի կատարումը:

Վկայակոչված իրավադրույթների վերլուծությունից հետևում է, որ այն դեպքում, երբ դատարանը վճռում թույլ է տվել որոշակի գրասխալ, վրիպակ, ապա մինչև վճռի կատարումն իրավասու է իր նախաձեռնությամբ կամ գործին մասնակցող անձանց դիմումով ուղղել այն: Գրասխալները վճիռը շարադրելիս դատարանի կողմից թույլ տրված բառերի, անունների, անվանումների, ամսաթվերի, վճռի գործողության և կատարման համար նշանակություն ունեցող այլ տեղեկությունների վերաբերյալ տեղ գտած սխալագրություններն են: Ընդ որում, գրասխալի ուղղումը թույլատրելի է, եթե գործում առկա նյութերը ստուգելիս ակնհայտ է դառնում, որ տվյալ անճշտությունը պատահական սխալի, անուշադրության հետևանք է: Անկախ նրանից, թե վճռի որ մասում է հայտնաբերվել նման թերությունը, այն ենթակա է վերացման՝ պայմանով, որ դրա արդյունքում վճռի էությունը և բովանդակությունը չի փոխվում: Հետևաբար, դատարանի կողմից վճռի վրիպակն ուղղելու մասին որոշում կայացնելու արդյունքում չպետք է փոփոխություն կամ լրացում կատարվի դատարանի կողմից հաստատված փաստական հանգամանքներում, գնահատված ապացույցներում, օրենքների կամ այլ նորմատիվ իրավական ակտերի կիրառման կամ չկիրառման վերաբերյալ դատարանի եզրահանգումներում, գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիմնավորվածության վերաբերյալ կատարված եզրահանգումներում:

Սույն գործով Դատարանը «Վճռում առկա գրասխալներն ուղղելու մասին» որոշմամբ արձանագրել է, որ ԱՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2018 թվականի նոյեմբերի 21-ի վճռի ներածական, նկարագրական, պատճառաբանական և եզրափակիչ մասերում սխալմամբ գրառվել է «ԱՀ կառավարության աշխատակազմի անշարժ գույքի կադաստրի վարչությունը» և վճռում նշվել է. «և որպես հետևանք՝ անվավեր ճանաչել ԱՀ Մարտունու շրջանի Ճարտար համայնքում գտնվող բնակելի տան և տամերձ հողամասի նկատմամբ Զիլի Թովմայանի անվամբ 17.08.2007 թվականին կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումը», սակայն գործում առկա փաստաթղթերից բխում է, որ այդ մարմինը դատավարության կողմ չի հանդիսանում և բացակայում է գույքի նկատմամբ պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջը, ինչպես նաև պատճառաբանական մասի 6-րդ կետը սխալմամբ գրառվել է «5-րդ», որով խախտվել է վճռի համարակալման հերթականությունը: Քանի որ գրասխալների ուղղումով վճռի բովանդակությունը և էությունը չեն փոփոխվում, Դատարանը գտնում է, որ վերոնշված գրասխալներն անհրաժեշտ է ուղղել»:

Վերաքննիչ դատարանը արձանագրելով, որ «... Դատարանի բողոքարկվող որոշմամբ գրասխալն ուղղելու եղանակով Դատարանի վճռից հանվել են այնպիսի նախադասություններ ու բառակապակցություններ, որոնք չեն կարող փոփոխել վճռի էությունն ու բովանդակությունը, քանի որ դրանք հանելու մասին որոշում կայացնելու արդյունքում չեն փոփոխվել գործում առկա ապացույցների հետազոտման, փաստերի հաստատման, իրավական ակտերի նորմերի կիրառման, մեկնաբանման ճանապարհով արված եզրահանգումները», գտել է, որ Դատարանի նախաձեռնությամբ կայացված որոշումն օրինական և հիմնավորված է:

Մինչդեռ հիմք ընդունելով վերոնշյալը և դրանք համադրելով սույն գործի փաստերի հետ՝ Գերագույն դատարանը հարկ է համարում արձանագրել հետևյալը.

Սույն գործի փաստերի համաձայն՝ Հայցվորը դիմել է Դատարան՝ ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու պահանջով, իսկ հակընդդեմ հայցով Պատասխանողը պահանջել է իրեն ճանաչել նույն գույքի նկատմամբ ժառանգությունն ընդունած ժառանգ: Այսինքն, Դատարանը և՛ սկզբնական, և՛ հակընդդեմ հայցերով ունեցել է մեկական պահանջ՝ ժառանգության ընդունման պահանջ, իսկ Դատարանն իր վճռի նկարագրական մասում

արձանագրելով. «Պատասխանող ԱՀ կառավարության աշխատակազմի անշարժ գույքի կադաստրի վարչությունը /ներկայումս՝ ԱՀ էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարության աշխատակազմի անշարժ գույքի կադաստրի վարչություն/, պատշաճ ծանուցված լինելով դատական նիստի ժամանակի և վայրի մասին, դատական նիստին չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը» /գ.թ161/, իսկ պատճառաբանական մասում նշելով. «Ինչ վերաբերում է Հայցվորի՝ որպես հետևանք ԱՀ կառավարության աշխատակազմի անշարժ գույքի կադաստրի կողմից 17.08.2007 թվականին Ջիլի Թովմասյանի անվամբ կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջին, ապա՝ նկատի ունենալով, որ Դատարանը հաստատված է համարել Ջիլի Թովմասյանի մահից հետո Արգո Սարգսյանի կողմից վերջինիս ժառանգության ընդունման փաստը, իսկ Արգո Թարխանի Սարգսյանի մահից հետո Արգո Սարգսյանի մոր՝ Ջիլի Գրիգորի Թովմասյանի մահից հետո ժառանգություն անցած ժառանգական գույքի ժառանգությունն ընդունած ժառանգ է ճանաչվել Ֆլորա Շահենի Սարգսյանը, Դատարանը գտնում է, որ որպես հետևանք՝ ԱՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից 2007 թվականի օգոստոսի 17-ին Ջիլի Թովմասյանի անվամբ կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումը ենթակա է անվավեր ճանաչման», փաստորեն դուրս է եկել հայցապահանջի շրջանակներից և ըստ էության քննել մի պահանջ, որը չի ունեցել:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը քաղաքացիական գործը հարուցում է միայն հայցի կամ դիմումի հիման վրա:

Վերաքննիչ դատարանը, հաստատված համարելով այն փաստը, որ ԱՀ կառավարության աշխատակազմի անշարժ գույքի կադաստրի վարչությունը որպես դատավարության մասնակից չի ներգրավվել գործի քննությանը, գտել է, որ Դատարանի կողմից վիճարկվող որոշումը կայացվել է առանց նյութական և դատավարական նորմերի խախտման, այնինչ վերը նշվածները հաստատում են, որ Դատարանն իր վճռում քննության առարկա է դարձրել հայցի առարկայից դուրս պահանջ՝ սեփականության իրավունքի անվավեր ճանաչման պահանջ, որով թույլ է տվել դատական սխալ: Ավելին, Դատարանն իր վճռի եզրափակիչ՝ «Վճռեց» մասի 1.2. կետով վճռել է՝ «Ֆլորա Շահենի Սարգսյանին Արգո Թարխանի Սարգսյանի մահից հետո վերջինիս որպես մոր՝ Ջիլի Գրիգորի Թովմասյանի մահից հետո ժառանգություն անցած ժառանգական գույքի՝ ԱՀ Մարտունու շրջանի Ճարտար համայնքում գտնվող 0.0591 հա մակերեսով հողամասի և 50.95 քառ. մետր մակերեսով բնակելի տան նկատմամբ փաստացի տիրապետման հիմքով ժառանգությունն ընդունած ժառանգ և որպես հետևանք՝ անվավեր ճանաչել ԱՀ Մարտունու շրջանի Ճարտար համայնքում գտնվող բնակելի տան և տնամերձ հողամասի նկատմամբ Ջիլի Թովմասյանի անվամբ 17.08.2007 թվականին կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումը»:

Մա նշանակում է, որ Դատարանը լուծում է տվել մի պահանջի, որը գործով առկա չի եղել, և այդ սխալի ուղղումը բերել է վճռի բովանդակային փոփոխության: Այնինչ, վրիպակի, գրասխալի ուղղումն պետք է լինի այնպիսին, որ վճռի որոշակիությունը և կայունությունը կասկածի տակ չդրվի: Դատարանն իրավունք չունի ուղղումներ կատարելու քողի տակ փոխել գործով արված իր սկզբնական եզրակացությունները, քանի որ դատական սխալը կարող է ուղղվել միայն դատավարական օրենքով սահմանված՝ դատական ակտի բողոքարկման եղանակով և ոչ թե ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 133-րդ հոդվածով նախատեսված կարգով:

Ելնելով վերոգրյալից՝ Գերագույն դատարանը գտնում է, որ Դատարանը վիճարկվող որոշումը կայացրել է դատավարական նորմի խախտմամբ՝ կիրառել է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 133-րդ

հողվածը, որը կիրառման ենթակա չէ սույն գործով, ինչն էլ անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Աման պայմաններում Գերագույն դատարանը գտնում է, որ սույն գործով Դատարանի 18.01.2019 թվականի «Վճռում առկա գրասխալներն ուղղելու մասին» որոշումը չի բխում գործում առկա ապացույցներից, դրանով փոփոխվել է վճռի էությունը և բովանդակությունը, իսկ այդ կապակցությամբ Վերաքննիչ դատարանի պատճառաբանություններն անհիմն են:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Գերագույն դատարանը դիտում է բավարար՝ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 241-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Անդրադառնալով դատական ծախսերի բաշխման հարցին, Գերագույն դատարանը գտնում է, որ այն պետք է համարել լուծված, քանի որ «Պետական տուրքի մասին» ԼՂՀ օրենքով միջանկյալ դատական ակտերի բողոքարկման համար պետական տուրքի վճարում նախատեսված չէ:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ միջանկյալ դատական ակտերի վերանայումից հետո Գերագույն դատարանը մերժում է վճռաբեկ բողոքը՝ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ, կամ կայացնում է նոր դատական ակտ, որն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-256-րդ հոդվածներով՝ Գերագույն դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ԱՀ վերաքննիչ դատարանի 2019 թվականի փետրվարի 13-ի որոշումը և վերացնել ԱՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2019 թվականի հունվարի 18-ի «Վճռում թույլ տրված գրասխալներն ուղղելու մասին» որոշումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝	<u>ստորագրություն</u>	Ն.ՆԱՐԻՄԱՆՅԱՆ
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝	<u>ստորագրություն</u>	Հ.ԽԱՉԱՏԻՅԱՆ
	<u>ստորագրություն</u>	Ա.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
	<u>ստորագրություն</u>	Ի.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
	<u>ստորագրություն</u>	Կ. ՂԱՐԱՅԱՆ